2. Պահեցողութիւն, ժուժկալութիւն և մաքրութիւն երեք քոյր առաքինութիւններ են, որոնցմէ կախեալ է մեր կեանց վիճակը. մանաւանդ համաճարակի առեն. կեանքը կամ մահը այս երեք քոյրերուն մեր մէջ բնակելէն կամ չբնակելէն կախեալ է։

3. Խիստ փոխանցիկ է հնտախտը. վարակումը սովորաբար ջուրի միջոցով տեղի կ'ունենայ. ուստի համաճարակի առեն եռացած և յետոյ պաղեցուցած ջուր պէտք է խմել։

4. Ախտը կ'ակսի ապէս. — Ախորժակը կը դադրի, ստամոքսը կը խանգարի, սիրտը կը խառնուի, գլուխը կը դառնայ և կը ցաւի, մտահոգութիւն կը պատէ, լուծում և փսխել կ'ակսի, որ երբեմն ջուրի երեւոյթ ունի. անյագելի ծարաւ մը կ'ակսի, ուժասպառութիւնը կը նեղէ հիւանդը, թեւերը, սրունքները, ստամոքսը, լեզուն պաղիլ կ'ակսին, բազկերակը գրեթէ դադրած է, ձայնը սուր կ'ըլլայ, մորթը թանձր, պաղ, կպչուն քրտինքով կը ծածկուի, կը դադրի մէկի սրտադրութիւնը, արիւնը կը թանձրանայ։

5. Եթէ 1—2 ժամուան միջոցին վարակեալը չհանգչի յոյս կայ որ աղէկնայ. պէտք է վերոյիշեալ նշանները ակնարկուն ճարտար բժշկի մը յանձնուիլ։ Ո՛չ ոք սակայն չկայ բժիշկ, սա՛ միջոցները պէտք է իւրաքանչիւր մարդ գործադնել։

6. Վարակեալին ուտելիքը պէտք է բաղկանայ առանց իւղի լաւ եփուած բրինձէ, խորոված հացէ ու թէյէ։ Ապաքինելէ ետեւ իսկ երկու օր միայն այս ուտելիքը տալու է։

7. Վարակեալը անյագ ծարաւ կը զգայ. մի տար ջուր, բնաւ մի տար. մէկ գաւաթ պաղ ջուր լուծման շարունակելուն պատճառ կ'ըլլայ, Թող երբեմն առնէ ջուրը, կոկորդը ցողուէ և դուրս հանէ երբեմն։ Ձորս տրամ

արտրական խէժը 100 տրամ ջուրի մէջ լուծէ և դգալ դգալ տուր հիւանդին. 24 ժամէն ծարաւը կ'անցնի։

8. Ուժասպառութիւնը վտանգաւոր է. երբ անդամները, քիթը, ականջները կը սկսին պաղիլ, անզգայ կ'ըլլան և ձգտումը (սրտզմո) կը սկսի, պէտք չէ շտապել, այլ քաջ և անվեհեր կերպով փրկարար մէջոցները յառաջ վարել. սրունքներուն, բազուկներուն քով տաք ջրով լի շիշեր և հարտալէ լափա դնելու է. երկու հոգի ալ վարակեալին բազուկները և սրունքները վերէն վար, ծայրէ ի ծայր շփելու են բրդէ, ճանէլայէ նիւթերով. 15 րոպէն անգամ մ'ալ դգալմը ռօմկամ լաւ օղի լեցնելու է հիւանդին բերանը, օգնելով որ կուլ տայ. եթէ տաքութիւնը, բնական ջերմութիւնը չվերադառնայ, հիւանդը կը մեռնի։

9. Լուծումը դադրեցնելու համար, ուր բժիշկ չկայ, սա պարզ դեղը օգտակար կըլլայ ըլլալ։ Հաւասար չափով ու քանակութեամբ սէֆխանի ոգի (րուհ), քեաֆխրի ոգի և ռալէնտի ոգի լեցնել տուր դեղագործին շիշի մը մէջ և տուր 20—30 կաթիլ դիր դգալ մը գինիի մէջ և տուր հիւանդին մինչեւ դադրի լուծումը։

10. Վանայ Ամերիկեան հիւանդանոցին բժշկապետը «հնտաֆտի դէմ սպառազինելու» համար կը յանձնարարէ օրը 4 անգամ սոլֆաթօ առնել, փոքրաքանակ իւրաքանչիւր անգամ. սկզբնակ ժամ մինչեւ տալով պէտք է առնել այս դեղը օրը չորս անգամ։

—

ՀՆՏԱՒՏԻ ԴԷՄ ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Նախ և առաջ մօրթ-ին. յաճախ լուալ ձեռքերը օճառով, քացախով, լիմոնով, ալքոլով կամ հականեխական ջրով։

2. Մսեղը լերնին չդպցնել. չուտել ձեռքերը չլուացած։

3. Եռացած ջուր խմել, ջուրը եռացնել գոցուած կաթսայի մը մէջ, որպէսզի մէջ ապա պաղեցնելու է։

4. Չեփած, հում կանաչեղէն չուտել, ոչ ալ պտուղ խակ կամ չեփած։

5. Կերակուրի անօթները եռացած ջուրով մաքրել։

6. Զափազանց չուտել և չխմել. կանոնաւոր ժամերով քնանալ։

7. Ձանձերը ջնջել և չթողուլ որ կերակուրներուն վրայ թռչտին։

8. Տուն մուտք առեն կօշիկները դրան քով հանել և մուճակ հագնիլ։

9. Հնար եղածին չափ հեռու կենալ բազմութենէ, արճառաններէ, շոգենաւէն մէջ խառնուած մարդոցմէ։

10. Արտաքնոցներու մաքրութիւն. արջասպի լուծոյթով, կիրով կամ գաթրանով հականեխել։ Ձեռքերը լուալ ըստ լժիւ 1 ի արտաքնոց երթալէ ետև։ Հիւանդին գործածած առարկան ալ հականեխական այս լուծոյթով պէտք է լուալ, հիւանդապահներն ալ իրենց ձեռքերը պէտք է միշտ լուան այս լուծոյթով։

Ջուսկ բաճ. — Համաճարակի ատեն լուծումէ սկսելուն անմիջապէս դեղ առնել և դադրեցնել։ Ասիա լաքթիք միշտ պատրաստ պահէ և 10 20 կաթիլ լից ջուրի մէջ և խմէ, մինչև դադրի լուծումէ։

—

ԲԻՒՋԱՆԴԻՈՆ (ԲԻՒՋԱՆԴ ՓԷՋԵԱՆ)

Մաքրութեան կանոնները վերլուծելով, կը տեսնենք որ, վերջ ի վերջոյ կը բաւէ ձեռքերուն ու բերնին մաքրութեան փոյթ տանիլ խստիւ։ Փօլէրայի սերմը բերնէն վար եր-

թալով է որ կը թուննաւորէ մարմինը, եւ բերնին բան մը տանելու միջոցը ձեռքն է, երբ ձեռքերը մաքուր են եւ երբ բերանը դերուած բանն ինքնին մաքուր է, 99 առ 100 ապահովութիւն կայ փոլէրայի դէմ։

Ամենէն տարրական պզտուշութիւնն է տունէն դուրս բան չուտել։ Պոլսեցի սյրերուն սովորոյթն է շատ աւելի տունէն դուրս բան ուտել քան թէ տան մէջ։ Շատ Պոլսեցիներ նախաճաշն անգամ տունէն դուրս կ'ընեն։ Յերեկի ճաշն ամէն Պոլսեցի սյրեր տունէն դուրս կ'առնեն, իսկ նախընթրիքը, կամ ֆուրէն, ֆայվ օ քլօքը Պոլսեցի սյրերուս համար, արճարանին, դարեջրատան, կամ գլօսարանին մէջ ճղելէնճէ ըլլալն է, օղիի կամ դարեջուրի շիշերուն շուրջ։ Մեսյն դիշերուան կերակուրն է որ Պոլսեցիք իրենց ընտանիքին հետ կը ճաշակեն, այն ալ գիներմոլներու համար լոկ ձեւ բանի է. դուրսն այնքան ճղճ կուլ տուած կ'ըլլան որ ախորժակով սեղան չեն կրնար նստիլ իրենց կնոջ և զաւակներուն հետ։ Պոլսական այս ունակութիւնք մեծ դիւրութիւն կ'ընծայեն համաճարակի ծաւալման, որովհետեւ տունէն դուրս բան ուտողը չգիտեր թէ ի՛նչ է, ինչ

տեսակ բան է իր կերածը կամ խմածը։

Այս մասին բարերաստիկ են Իզմիրցիք, Սելանիկցիք, ՊերուԹցիք, ու հասարակ դաւառացիք, ուր այրեր ցերեկի ճաշին համար կրնան տուն դառնալ, քանի որ գործատեղիները այնքան մօտ են տուներուն. մինչ Կ. Պոլսոյ մէջ գործի տեղւանքը կէս ժամին մինչև մէկ կամ մէկ ու կէս ժամ տեղ հեռի են բնակուած Թաղերէն, արուարձաններէն և գիւղերէն։ Հետեւաբար, համաճարակի ատեն, քանի Պոլսեցին հոդ պիտի տանի տունէն դուրս բան մը չուտելու և չխմելու որչափ կարելի է. և մանաւանդ բազմամբոխ վայրերէ զգուշանալու, առտուն և իրիկուն իր ընտանիքին հետ ճաշելով, ցերեկի ուտելիքն ալ տունէն բերել տալով, կամ կրակէ անցած մէկ-երկու շերտ հացի հետ լիմոնի օշարակով կամ Թարմ մածունով զոհանալով։ Որովհետև մեծագոյն վտանգը ջուրն է, պէտք է վարժուիլ ցորեկը Թէյ միայն խմելու, պաղեցնելէ ետքը, կամ եռացած ջուրը պաղեցնելէ ետքը խմել, և կամ հանքային ջրով շատանալ ժամանակ մը։ Այս զգուշութիւնք բազմածախս բաներ չեն բնաւ ընդհակառակն, խնայողական իսկ են. քանի

որ Պալատեցի այրերու շռայլութեան կարեւոր մէկ մասը կը կազմեն տուներն դուրս նրանց կերածն ու խմածը։

Ջգուշութիւնն առելի դիւրին է տան մէջ եթէ տան տիրուհին մօտէն հսկէ խոհանոցին, և առ հասարակ տան վարի յարկերուն։ Բոլերան առելի շուտ կը մտնէ այն տուներն որ պատաւորներ ու պատուհիներ կը պահեն, քան այն համեստ տնակներն ուր տէրն աշխատութիւն տան տիկնոջ վրայ ծանրացած է. որովհետև պատաւորներուն ու պատուհիններուն մէջ կան տգէտներ որոնց գլխուն մէջ դժուար է առողջապահիկ կանոններ տեղաւորել պէտք եղածին պէս։ Որովհետև քաղաքին աղտոտութիւնները դէպի ծով կը հոսին, ժամանակ մը պէտք է հրաժարիլ միտեպէ, ասոնէ և ծովափունքի մօտ բռնուող ուրիշ տանէն կակղամորթներէ, և լաւ խաշելէ կամ տապկելէ վերջ միայն ճաշակել այն ձուկերն որոնց թարմութիւնը տանտէրը կամ տան տիրուհին անձամբ կրնայ վկայել։ Սղէկ եփած մսեղէնները, ալիւրեղէնները, ընդեղէնները յարմարագոյն ուտելիք են։ Միրգերը կարելի է եփած ուտել, հաւմ կանաչ պէտք չէ ընտաւ սեզանի վրայ դնել. խակ աղցանը (սա-

լաթ ան) եռացած ջուրէ անցած կանաչեղէն-
ներով կարելի է պատրաստել, Հետեւաբար,
Փօլէբան իրական զրկանք մը չպատճառեր
անոնց որ իրենց տան մէջ քիչ շատ կարգ
կանոն դնելու չափ խելք եւ հեղինակութիւն
ունին։

—

ՓՕԼԷՐԱՅԻ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Բաղաքապետութիւնը հետեւեալ նախ-
նական միջոցները կ'առաջարկէ. «Փօլէբան
յաճախ մէկ կամ երկու օր թեթեւ փորհա-
րութեամբ մը կը սկսի. հետեւաբար այս
տեսակ վիճակի մը ենթարկուողները պէտք է
իսկոյն խիստ պահեցողութիւն ընեն, եւ խա-
շած բրինձ ու մածուն միայն ուտեն, եւ թէյ
կամ լէմոնատա միայն խմեն։ Մինչդոյն ատեն
պէտք է իմաց տալ թաղապետական բժշկին,
երբ փորհարութիւնն սաստկանայ եւ քօլէրայի
միւս ախտանիշերն երեւան գան, պէտք է հի-
ւանդը կարասի չունեցող սենեակ մը տանիլ
եւ մինչեւ քսան կաթիլ Ախտ լաքթիք լեց-
նելով գաւաթ մը ջուրի մէջ, քիչ քիչ խըմ-
ցնել հիւանդին։ Ախտ լաքթիքը պէտք է
գտնուի ամէն տան մէջ. նաեւ թէյ խմցնելու

է և թեւերուն ու ոտքերուն տակ տաք ջուրով լեցուն շիշեր դնելու է։ Միանգամայն ֆանէլային կտոր մը ալքոլի կամ քացախի մէջ թաթխելով թեւերն ու ոտքերը պէտք է շփել։ Հիւանդին դպչելէ պէտք է զգուշանալ. երկու հոգի բաւական են հիւանդին մօտ։ Այս վերջիններէն պէտք չէ ձեռքերնին իրենց բերանը տանին։ Ամենէն մօտ գտնուած բժիշկը պէտք է բերել։ Հանրութիւնը պէտք է գիտնայ որ երբ ժամանակին պէտք եղած դարմաններն ըլլան, հիւանդը գրեթէ միշտ կ'առողջանայ. նաև եթէ զգուշական ամէն միջոց երբ ձեռք առնուի, հիւանդութիւնը չկրնար տարածուիլ։»

—

ՁԳՈՒՇՈՒԹԻՒՆ ՓՕԼԻՐԱՑԻ ԴԷՄ

Պօլսոյ Ազգ. Առողջապահական Խորհուրդը հետեւեալ պատուէրները կ'ուղղէ Բժիշկներուն, Քաղաքային և Հանրային Առողջապահական Խորհուրդը։

Մանրութիւնն էական միջոցներէն մէկն է փօլերայի դէմ։

Ձեռքերը խնամ յատնախ լուալ օճառով, ու եթէ կարելի է՝ քացախով, կիտրոնով,

դինիի ոգիով կամ հականերեակական ո՛և է լուծաջրով։

Մատները բերան դնելու չէ, ո՛չ ալ կերակուր ուտելու է՝ առանց լուացուելու։ Պէտք է խմելիք ջուրն եռացնել գոց ամանի մէջ, յետոյ զայն պաղեցնելու է նոյն ամանին մէջ։ Նոյն ամանէն երբ ջուր առնուի, պէտք է որ թիթեղէ կամ պղնձէ ամանը մաքուր ըլլայ և նախապէս լուացուած՝ եռացած ջրով։

Պէտք չէ ուտել հում բանջարեղէն։

Պէտք է կերակուրի ամաններըը լուալ եռացած ջրով։

Ոգելից ըմպելի պէտք չէ գործածել, պէտք է ուտելիքի մէջ ժուժկալ ըլլալ և ժամանակին քնանալու է։

Ուշադրութիւն ընելու է ճանճերուն, և թոյլ տալու չէ որ ուտելիքներուն վրայ նստին։ ՏԵՍԱԾ ՁԱՆՁԴ ՍԱՏԿԵՑՈՒՐ։

Տուն մտած ժամանակ պէտք է փողոցի դրան մօտ ձգել կօշիկները։

Ըստ կարելւոյն պզուշանալու է բազմամբոխ տեղեր երթալէ և բազմութեան հետ շփում՝ ունենալէ։ (Ինչպէս թիւնէլին և շոգենաւերուն մէջ։)

Մեշտ մաքուր պէտք պահել ձէմիշները և

զանոնք լուալու է կրաջուրով, պղինձի «ի-ը-ֆ»-ի լուծաջրով կամ խայծղանով։ Ճէմիշէ եղելէ ետքն ալ լուացուելու է։

Փախուստի կամ լուծողութեան պարագային միշտ բժշկի դիմելու է։

Մարդասիրական և հայրենասիրական տեսակէտով ամէնուն պարտքն է քօլէրային դէպքերն իմաց տալ կառավարութեան։ Այս կերպով անհուն ծառայութիւն մատուցուած կ'ըլլայ նախ հիւանդին, ապա ընտանիքին։

Երբ այս առողջապահական միջոցները ձեռք առնուին, ա՛լ քօլէրայէ վախնալու չէ։

1892 ին Համպուրկի մէջ քօլէրա ծագեցաւ և 3 ամսուան մէջ 17,600 մարդ մեռաւ. Ալթօնայի մէջ միայն 516 հոգի մեռան մինչ նոյն ժամանակ։ — Այս սհաթին տարբերութեան պատճառ էր ջուրի որակութիւնը. Համպուրկ Էլպա գետին ջուրը կը գործածէր. իսկ Ալթօնա, թէև նոյն գետին ջուրն կը գործածէր, սակայն կը զտէին, զտիչէ կ'անցնէին թէ խմելու թէ կերակուրի և թէ լուացքի համար։ — Քօլէրան արդէն չփոխանցուիր մարդոց, այլ միմիայն բերնէն և մանաւանդ ջուրին միջոցով։

ՓՕԼԵՐԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Փոլերայի ժամանակ կարեւոր է ԱՆՄԻՋԱՊԷՍ, առանց վ.ԱՅՐԿԵԱՆ անցքնելու ո՛և է փորհարութիւն ԼՈՒԻՉ նկատողութեան առնուլ. քանզի, փորհարութիւնը, մի քանի օր յետոյ մուտ, գոնող, քօլերային առաջնորդն, ուղեցոյցն, կարապետան ու խլովոնն է։ Ասիա լաքթիք 10—30 կաթիլ գաւաթի մը ջուրի մէջ դնելով խմել, մինչև լուծողութեան դադարումը կրկնելով։ Միևնոյն առեն խիստ հսկողութեան տակ առնել կեր ու խում. միայն թէյ, լէմոնատ, խաշած բրինձ, կամ լաւ, անարատ մածուն։ Հիւանդը եթէ զօրութիւնը կորնցնէ, պէտք է անմիջապէս էն մօտի բժիշկը կանչել ու հիւանդը առ այժմ առանձնացնել սենեկի մը մէջ ուր անկողինէ զատ ուրիշ բան պէտք չէ գտնուի։ Հոն պառկեցնելու և թէյ տալու է. ոտքերուն մօտ տաք ջուրի շիշեր դնելու և թեւերն ու սրունքները ալքոլով, բօմով, օղիով լաւ ու ուժով շփելու է. երկու հոգի կը լաւէ հիւանդին վրայ հսկելու համար։ Առանք սակայն պէտք է ԽԻՍՏ, ԽԻՍՏ ՉԳՈՅՇ ըլլան որ ձեռքերնին, մատերնին իրենց շրթունքին, բերան-

նին չդպցնեն։ Միշտ յիշել պէտք է որ քօլէ-
բան ԲԵՐՆԷՆ ու ժիմիայն ԲԵՐՆԷՆ մեռա կը
գտնէ մարմնոյ մէջ, և ոչ ուրիշ կերպով։
Պէտք է ձեռքերն յաճախ լուան բարակ քա-
ցախով կամ քօլօնեայի ջրով։ Բժիշկին հրա-
հանգներն կէտ առ կէտ ի գործ դնելու է.
վատահ ըլլանք որ հիւանդներուն հարիւրին
85ը կ'ապաքինին, եթէ վերոյիշեալ հրա-
հանգներն ճշդիւ գործադրուին։ Աւելի վտան-
գաւոր թշնամի մ'է հիւծախտը քան հըլն-
տախտը, ուստի աներկիւղ մտքաւելու ենք
հնտախտին դէմ ու պիտի յաղթենք անոր։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴԸ

Սակաւաթիւ չեն անոնք որ կը հաւատան
թէ երազներ ապառնի դէպքերն կանխաւ կը
ծանուցանեն մարդուս։ Իրաւ բլլայ այս թէ
ոչ, հետեւեալ պատմութիւնը կարծես թէ
կը հաստատէ բազմաց սոյն համոզումը։

Գահիրէի մէջ ապրող վաճառական մը

ժանտախտի ժամանակ երազեց թէ իր տանը դռնէն 11 մեռեալ դուրս պիտի հանուին, Ահով և սարսափով քունէն արթնցաւ, քանզի ճիշդ 11 հոգի էին իր տան բնակիչք, ինքն ալ մէկտեղ ըլլալով։

Յաջորդ առաւօտ վաճառականը կանչեց իր ազգականները, դրացիները, և պատմեց անոնց իր երազը. ասոնք ալ խրատեցին զինքը առանց տրտունջի Բարձրելոյն կամաց հպատակիլ։ Նոյն օրը իսկ մեռաւ իր օգնականը մին, քանի մը օր յետոյ իր կինը, ապա իր ծառաներէն մին. այսպէս մահուան հրեշտակը մի առ մի տարաւ իր տան բնակիչներն. միայնակ և առանձին մնաց թշուառ վաճառականը. քանի որ երազին մէկ մասը ճշդիւ կատարուած էր, տարակոյս չկար որ վերջինն ալ պիտի կատարուէր։ Ուստի մօտակայ դրացիի մը գնաց և հոն հաւաքեց իր վաճառականի բարեկամները. «Գուցէ,» ըսաւ նա, «այս գիշեր ես ալ մեռնիմ, ուստի կը խնդրեմ առտուն կանուխ տուն գաք, և եթէ մեռած եմ, ինձ պատշաճ թաղում մը ընորհէք, քանզի տանս մէջ ինձմէ զատ ապրող հոգի չմնաց. այս սիրոյ վերջին ծառայութիւնը մատուցէք ինձ, և վատահ եղէք երկնից վարձատրութեան։ Ա-

դէն թէ դադաղս և թէ պատանքս պատրաստած եմ, երբ դուռը դռնուած գտնէք և ես ձայն չ'հանեմ, երբ կը բաղխէք, կոտրեցէք դուռը և ներս մտէք։»

Արեգակը մարը մտնելուն պէս մարդը անկողին մտաւ, սակայն անհնար էր քնանալ. այս աշխարհէս յաւիտենականութեան փոխադրուելուն ծանրակշիռ իրողութեան վրայ կը խորհէր, և բոլոր իր կեանքը լուրջ քննութեան կ'ենթարկէր։

Երբ գիշերուան խաւարը հետզհետէ թանձրացաւ, մութ սենեակին մէջ ամէն առարկայ մնհուան հրեշտակն կը կարծէր, և կը սարսռար ու կը դողար։ Ի վերջոյ յիրաւի անձ մը տեսաւ որ սողոսկելով իր անկողինին կը մօտենար։ «Ո՛վ ես դուռ.» գոչեց մարդուկը դողդոջուն ձայնով։ «Լռէ՛,» պատասխանեց ձայն մը բառնն և աղեցիկ շեշտով. «ես եմ մահուան հրեշտակը։» «Ո՛հ,» գոչեց վաճառականը, և սկսաւ աղօթք մը ըսել. և վերմակին մէջ ծածկեց գլուխը ու ապասեց սրտի տրոփիւնով, որ մնհուան հրեշտակը, ամէն մէկ վայրկեան, իր հոգին մարմինէն քաշէ, հանէ պիտի։ Սակայն անցան վայրկեաններ և ժամեր առանց ո՛և է պատահմունքի, այսու-

հանդերձ չէր հաւատար որ աղատուած էր. այլ կը խորհէր թէ մահուան հեշտակը իրեն ժամանակ կուտար մահուան պատրաստուելու համար։

Արշալոյսը ծագել սկսաւ, բայց իր տանջանքը դեռ չէր վերջացած։ Դրացիներն ըստ իրենց խոստման եկան ու սենեակը մտնելով դինքը իր անկողինին մէջ գտան. երբ սակայն տեսան որ վերմակին տակ ծածկուած էր անշարժ, և չէին գիտեր թէ ողջ է թէ մեռեալ, սկսան ձայն տալ անոր։ Խեղդուկ ձայնով մը պատասխանեց խեղճ մարդը. «Դեռ չեմ մեռած. սակայն մահուան հրեշտակը արդէն հոս էր, կէս դիշերին շատ առաջ նա քովս էր, և ամէն վայրկեան կ'սպասեմ որ գայ և հոգիս առնէ, ուստի դիս մի՛ նեղէք, մինչև տեսէք որ թաղումն կանոնաւոր կերպով կատարէք։»

«Բայց դուռը ինչո՞ւ բաց էր.» հարցուցին բարեկամները։

«Ես ձեռքով գոցեցի դուռը,» ըսաւ մարդուկը. «նիգն ալ դրի. անշուշտ մահուան հրեշտակը բացած ըլլալու է զայն։» «Բայց բակին մէջ տեսած մարդերնիս ով է.» դարձեցին բարեկամները ի միասին։

«Ո՛վ, ինչ. ես բակին մէջ մարդ ըլլալէն լաւը չունիմ, գուցէ մահուան հրեշտակն է որ հոգիս կ'ապահէ, դուք գայն մարդ էք կարծեր մուխին մէջ,» կակազեց մարդը վերմակին տակէն։

«Էօ՛ ապո՛ւշ, գող է ան գո՛ղ.» գոչեցին բոլորն իմիասին, «տունդ գտնուած ամէն բան հաւաքեր է, ու փախած առեն ժանտախտէն բռնուելով ինկեր մեռեր էր առնդուխին ուքին տակ, ձեռքը արծաթէ աշտանակ մը բռնած։»

Վաճառականը գայն լսելով ապուշ դարձաւ. յանկարծ նետեց վերմակը և բարձրաձայն գոչեց. «Օրհնեալ ըլլայ Տէրն, Աբրահիմ ամենայնի. այս է Մեսսիասն որդորդը և ես ազատուեցայ. անշուշտ այս այն աստիճանն է որ քովս գալով ըսաւ թէ ինձ մահուան հրեշտակն է. անուն Տեառն օրհնեալ եղիցի։»

Այս մարդը ժանտախտէն ազատելով միշտ կը պատմէր իր այս երազը։ Գողը ասկայն մարդ մ'էր, որ, երբ վաճառականը իր դրացիներուն կը պատմէր երազը և կը խնդրէր իրեն մարմինը թաղել, ականջ դնելով ուղեց առնիթէն օգտուիլ, և իր մահը գտաւ վարակեալ տան մէջ։

—

ԲԺԻՇԿԻՆ ԺԱՄԱՑՈՑԸ

Նոյեմբերի ցուրտ և փոթորկալից գիշեր մը մեր բժիշկին ընտանիքը վառարանին քով հաւաքուած էր, երբ նա հիւանդի մը քովէն տուն վերադառնալով իր սեփական աթոռը գրաւեց։ Տղայք դիմադրութիւն կ'ընէին, բժիշկը կրակարանը խառնեց, մեծ մայրն ալ գուլպա կը հիւսէր աշխոյժով։

«Տիգրան,» ըսաւ Տոքթօրը. «դնա՛ ժամացոյցս բեր, սեղանին վրայ է. անկողին չմտած հիւանդի մ'ալ պէտք է այցելեմ։»

«Դեռ կանուխ է հայրիկ, շատ կանուխ, և այնքան կանուխ որ դուն կրնաս մեղմ պատմութիւն մ'ընել.» ըսաւ Տիգրան, և շարունակեց նոյն ատեն. «Ես ալ այն քու անխոժամացոյցիդ պատկերը կը դնեմ։»

«Այդ ժամացոյցին մեծութեանը ու թանձրութեանը վրայ կրնաս զարմանալ և խնդալ,» ըսաւ Տօքթօրը, «նա, սակայն, իր տիրոջ հաւատարիմ ծառայութիւնն ըրած է, և եթէ նա կարող ըլլար խօսիլ, դեղեցիկ պատմութիւններ պիտի ընէր ձեզի. անանկ որ մեծ ակնածանօք անոր վրայ պիտի նայէիք։»

«Պատմէ՛, պատմէ՛,» գոչեցին բոլոր տըղայք, և մեծ մայրն ի միասին։

Պահ մը խորհելէ ետև այսպէս սկսաւ բժիշկը։

«Երկու տարիէ ի վեր բժշկութիւն կ՚ընէի և վեց ամիսէ ի վեր այս ժամացոյցը կը կրէի որ 10 ռակիի գնած էի։

Այս գիշերուան պէս փոթորկալից գիշեր մը տուն կը վերադառնայի, մշուշ մը այնքան թանձր պատած էր շուրջս, որ հազիւ երկու քայլ առջևս կը տեսնէի. երբ անմարդ փողոց մը մտայ, յանկարծ մարդ մը դիմացս ելաւ ու ղիս կեցուց. դրամդ կամ կեանքդ, ըսաւ մարդը։ ժամացոյցէն զատ բան չկար քովս, յանձնեցի զանիկա մարդուն ու արտորնօք տուն հասայ։

Տուն հասնելուս սկսայ խորհիլ և պատրաստել յաջորդ առաւօտ ոստիկանութեան ըսելիքս։ Դուռը զարնուեցաւ, և ծառայ մը դիս իր երիտասարդ տիրոջ տանիլ եկաւ, որ վիրաւորեալ էր և անզգայ։

Ձամբան ծառան պատմեց ինձ թէ վիրաւորը երեւելի փաստաբանն մը միակ որդին է, զոր ինք շատ կը սիրէ և միակ յոյսն է իրեն։

«Ինչ պատահեցաւ երիտասարդին,» հար-

ցուցի . « Ձեմ գիտեր , շատ անհանգիստ կ'ղգայի, » պատասխանեց ծառան, « երբ երիտասարդը շատ ուշացաւ . յանկարծ բառնն հարուածներ լսեցի դրան. վեր վազեցի և լսեցի որ դռնապանը օգնութիւն կ'աղաղակէ. իմ երիտասարդ տէրս անդգայ և վիրաւորեալ հոն ինկած տեսայ. սենեակը բերինք, և երբ Թէբէզա հանուեցուց և անկողին դրաւ զնա, ես հօրը գացի որ պատահած աղէտը կերպով մը լսացնեմ անոր. ան ալ դիս անմիջապէս ձեզի խրկեց, և բաղդաւոր ենք որ տունն էիք։ »

« Փաստաբանին տունը հասանք, « Որդիս ազատեցէք. » գոչեց փաստաբանը անձկանօք դիս դիմաւորելով ։

« Կրնա՞ք պատմել Թէ ինչպէս պատահած է այդ դէպքը. » հարցուցի ես. « մենամա՞րտ է, վրէ՞ժ է։ »

« Ո՛չ, տէր իմ, կարծես Թէ պարզ և պայծառ երկինքէն յանկարծ կայծակ մ'է ղոր դիս կը զարնէ, բան մ'ալ չենք գիտեր։ »

« Գուցէ ես կրնամ օգնել որ եղելութիւնը պարզուի, » ըսի փաստաբանին, և դլուխս եկածը համառօտաբար պատմեցի և ըսի. « գուցէ ձեր որդին ալ յարձակումի է կրած և անձը պաշտպանած առեն վիրաւորուած։ »

Այսպէս խօսակցելով վիրաւորեալին անեծակը գացինք. ներս մտած ատեննիս Թէրէզա արիւնը կը սրբէր և զգայազրկին քթին հոտուէտ շիշ մ'էր բռնած։

Ի'նչպէս պատմեմ ձեղի զգացած ապրատափս, երբ վիրաբուժական գործիքներս սեղանին վրայ տարածած ատենս, հոն իմ ժամացոյցս տեսայ սեղանին վրայ։

Աչացս չէի հաւատար, բայց իմ շղթաս և ծայրի մեռալեռնը տարակոյս չէին ձգեր ժամացոյցին իմն ըլլալուն։ Խեղճ հօր վրայ շատ մեծ ցաւ զգացի. Աստուծմէ խնդրեցի որ ինձ օգնէ հայր ու որդի խնայել յետին ապտիճան ամօթահարութենէ։

Հայրը իմ վարմունքս տեսնելով և կարծելով որ շուարումս չարագուշակ նշան մ'է, ըսաւ. «Ա'ուղէ՞ք որ ուրիշ Տոքթօր մ'ալ կանչենք։»

«Ո՛չ,» ըսի, «վստահեցէ՛ք ինձ որ ան բանը որ չեմ յուսար գլուխ հանել, նաև չեմ ստանձներ։»

Հիւանդը ահռելի կերպով կը տառապէր. վէրքը քննեցի, պէտք եղած միջոցներն խորհեցայ և վէրքը կապած ատենս ըսի հօրը. «Յուսամ որդիդ ազատել. ջերմը պիտի ստու-

դէ վէրքին վտանգաւոր ըլլալը. Թոյլ տուէք որ Հիւանդին քով ես ձեռամ և ամենայնիւ ինձ վստահ եղէք։»

«Որդիս այս վիճակի վերածողներն ծանր պիտի տուժեն.» ըսաւ փաստաբանը. «վաղ առաւօտ կանուխ ատիկանութեան պիտի դիմեմ։»

«Նախ Հիւանդին բերնէն պէտք է լմնանալ եղելութիւնը,» ըսի ես. «առաւօտուն նա կարող պիտի ըլլայ պատմելու։»

«Այս ժամացոյցը որմէն է,» ըսաւ փաստաբանը, դուրս ելած ատեն սեղանին վրայ ակնարկ մը նետելով. «Այս իմ որդիինս չէ։» «Իմս է.» ըսի աշխոյժիւ և առի գրպանս դրի։ Բարեբաղդաբար մի քանի վայրկեան առաջ Թէրէզան խրկած էի որ կտաւ բերէ. եթէ ներկայ ըլլար Հարկաւ պիտի ըսէր թէ ժամացոյցը վերաւորին գրպանէն ինքը ձեռքով Հանեց։

Հիւանդին հետ մինակ էի. նա սկսաւ տակաւին կերպով զառանցել. երբ նորէն սթափեցաւ սկսաւ պօռալ և գոչել։

«Թշուառական» կը գոչէր. «բիւրապատիկ թշուառ.» Նորէն գոցեց աչքերը, երբ եղելութիւնը չուզէր տեսնել. երբ հասկցաւ

որ իր սենեակին մէջ է, բոլոր զօրութիւնը հաւաքեց և ուզեց ցատկել որ փախչի. «չեմ արժանի հօրս տունը բնակիլ» կը պօռար։

Ես զինքը ամուր մը բռնեցի։

«Ո՛վ էք դուք,» ըսաւ։

«Մարդ մը որ ձեզ ազատել կ'ուզէ։»

«Ուրեմն դուք իմ թշնամիս էք. քանդի մեռնիլ կ'ուզեմ, մեռնի՛լ. կը հասկնա՞ք։»

«Մեռնի՛լ, 20 տարեկան հասակի մէջ.» ըսի կարեկցաբար։

«Անպատիւ եմ։»

«Ձեր հասակին մէջ հնար է մեղքի թո-թափել ամէն անպատուութիւն։»

«Յանցանքներ կան որոնց համար մարդիկ ապաշխարութիւն չեն ճանչնար. մեռայն Աստուած պիտի զթա իմ վրաս։»

«Աստուած և ես. ամէն բանի տեղեակ եմ և կը խոստանամ կատարեալ լռութիւն պահել և ձեզի կ'երկնցնեմ ազատարար ձեռքս։»

«Ո՛վ էք դուք։»

«Ես ան մարդն եմ, որոյ վրայ դուք յարձակեցաք։»

«Աստուած իմ,» գոչեց երիտասարդը, և երկու թաթերով ծածկեց երեսը. «Ուրեմն ամօթը զիս կը հալածէ, ամէն բան յայտնի է, խայտառակութիւնը մեծ է։»

«Ձեզ չի պիտի հետապնդեն. կառավարութիւնը ձեզ զոհն պիտի համարի անոր, զոր հիմա կը փնտռեն։»

«Բայց այս առաւօտ 25 ռակի վոխ առած եմ. ո՛վ պիտի տայ ինձ այդ դրամը։

«Ժամացոյցս գրաւի կը դնեմ, որպէս զի ընտանեաց մը պատիւը փրկուի։»

«Ախպերի բարիքի անարժան եմ. շնորհակալութիւն, տէր իմ, ձեր ձեռքը սեղմել չեմ համարձակիր. յետոյ պիտի ընեմ այս. մի՛ վատնիք այս բարիքն ընելու. կերդնում որ չի պիտի դղջաք երբեք, սակայն անշուշտ պէտք է բոլոր ճշմարտութիւնը գիտնաք, այնպէս չէ՞։»

«Ո՛չ, ամենեւին, ինձ հարկ չէ գիտնալ. բժիշկի մը համար կը բաւէ գիտնալ թէ ջերմը զառանցել կուտայ։»

«Ո՛չ, պէտք է գիտնաք ամբողջ եղելութիւնը իր պարագաներով։»

Երիտասարդը պատմեց թէ, իր ընկերները գինքը դէպի հանելով, պարտքի տակ մնացեր ուզեր որ հայրը խմանայ, ուստի վաշխառուներու ձեռք ինկաւ։ Մարդ մը կը ճանչնար որ իր հօրը պարտական էր. անկէց խընդրեց 25 ռակի, երդում ընելով որ յաջորդ ա-

առաւօտ պիտի վճարէր. այդ դրամով խորհեցաւ խաղատան մը մէջ իր բախտը փորձել։ 25 ոսկին ընդունեց. բաղդախաղը մի քանի վայրկեանի մէջ կուլ տուաւ այս դրամը. հէք երիտասարդը անել վիճակի մատնուեցաւ. ալ վաշխառուն չէր խորհեր, այլ իրեն 25 ոսկի տուողը անձը, որ վաճառատան մը արկղակալն ըլլալով, դառն կացութեան պիտի մատնուեր եթէ յաջորդ առաւօտ 25 ոսկին չընդունէր։

« Կանաչ սեղանին եռին կանգնած » — շարունակեց երիտասարդը պատմել — « դիտեցի որ մի խաղամոլ դրամատէրի մը քսակը կը պարպէր և ոսկի ոսկիի վրայ կը շահէր։ Փիպուածը առոր դրպանը կը լեցուներ, ըսի, ես ալ դիպուածի թող ըլլամ և անոր դրպանը պարպեմ և իմս լեցնեմ։

Սպասեցի որ այս մարդը դուրս ելլէ, որ ետեւէն իյնամ ու կողոպտեմ. անծանօթը դուրս ելաւ, ես ալ ետեւէն. կառք մը փընտռեց, չգտաւ։ Բաղդը ինձ կը ժպտի, ըսի, և սկսայ հետապնդել։ Մշուշը պահ մը կորընցընել տուաւ ինձ մարդուն հետքը, միայն ոտից ձայներուն հետեւելով կը հետապնդէի։ Փողոցին անկիւնը հասնելուս դուք առջեւս

եւ ըսաւ. «Ուստի ձեզ զանիկա կարծելով ժամացոյցնիդ առի. յետոյ սխալս տեսնելով ուզեցի ետ տալ ձեր ժամացոյցը, բայց դուք աներեւոյթ էիք եղեր, խաղացողին ետեւէն իննկայ, և հօրս տունէն մինչեւ երկու քայլ հեռու կռիւն սկսանք. նա գիներալ էր և պահպանեց իր դրամը դաշոյնի հարուածի մը տալով ինձ, որ դժբաղդաբար մահացու չեղաւ։ Ահա ամէն բան դիտէք։»

Վստահեցուցի զինքը որ ամէն բան խոր մոռացութեան քօղով ծածկուած պիտի մնայ. հարցուցի սակայն թէ կրնա՞յ ապահով համարել ինքզինքը հոն։

Պահ մը լռեց, և վերջը վճռական ձայնով ըսաւ. «Պէտք է Բարիզէն հեռանամ։»

Ձեռքս իրեն երկնցուցի և ըսի. «Ա՛յս վայրկեանէն ձեր բարեկամն եմ։»

Սկսաւ լալ. բայց այս անգամ՝ ուրախութեան արցունքներ էին։

Վերաւորեալը թողուցի ու ժամացոյցս դրաւի դնելով դրամը արկղակալին տուի։

Ապաքինելէն ետեւ Ամերիկա գնաց և իբր կամաւոր բանակին մէջ ծառայեց և մեծ քաջագործութիւններ ըրաւ. յետոյ Գաղղիա վերադարձաւ, և հոն եւս մեծ քաջութիւն-

ներ քրտւ պատերազմներու մէջ։ Փոխ տուած դրամս մնաս առ մնաս վճարեց։

Ի վերջոյ պատերազմին մէջ իբր զօրապետ գնատակնահար ըլլալով մեռաւ։»

«Ա՛յս է պատմութիւնը,» ըսաւ Տոքթօրը, «և դուք այս ժամացոյցը անարգանօք կը նկատէք, այնպէս չէ՞։»

«Ո՛չ, ո՛չ,» ըսին երկու տղայք, և համրուրեցին իրենց հօրը աւանդական ժամացոյցը։

—

ՈԳԻՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԸՍՏ ՌՈՒՍԱՑ

Գիւղի մը մէջ աղջիկ մը կար որ կ'ատէր ամէն աշխատութիւն և կը սիրէր ղուարճութիւն։ Իր կարերը գիւղին աղջկանց կարել կուտար. տուն կը հրաւիրէր ընթրիք, լաւ ճաշ կուտար. յետոյ կը նստէին և մեր ծոյլ օրիորդին լաթերը կը կարէին։

Կարի այսպիսի ժողովի մը մէջ իրենց մէջ խնդիր ծագեցաւ թէ ո՞վ է ամենէն աւելի անվախն իրենցմէ։

Բանէ մ'ալ չեմ վախնար, գոչեց մեր գործէ փախչող օրիորդը պարծենալով։ — Լաւ, ըսին միւս աղջիկները, եթէ չես վախնար գերեզմանատունէն անցնելով եկեղեցի գնա, սուրբ պատկերը առ և հոս բեր։

Շատ բարի, գոչեց անվախ բույց ծոյլ օրիորդը. պիտի կատարեմ խնդիրքնիդ պայմանաւ որ կրկին ջանքով աշխատիք։

Լաւ. օրիորդը ժամ գնաց և բերաւ պատկերը, սակայն պատկերը ետ տանիլ պէտք էր. կէս գիշերուան ժամն հասած էր արդէն, ո՛վ պիտի տաներ զայն։

Դուք ձեր գործը նայեցէք, ըսաւ օրիորդ ծոյլը. ես կը տանիմ՝, և բանէ մը չեմ վախնար։

Ելաւ եկեղեցի գնաց և պատկերը իր տեղը դրաւ. վերադարձին գերեզմանատունէն անցած ատեն մարդ մը տեսաւ որ ճերմակ պատանքով գերեզմանին վրայ նստած էր։ Լուսինը ծագած էր և ամէն ինչ լոյս ու պայծառ էր։ Օրիորդը մարգուն մօտեցաւ և պատանքը վրայէն քաշեց և տուն գալով պատանքը ցոյց տուաւ։

Ճաշելէ ետև, երբ բոլորն ալ անկողին էին գացած, մարդը պատուհանին ապակիին զարկաւ և ըսաւ. «Տուր պատանքս, տուր պատանքս։» Միւս աղջիկները խելքերնին կորսընցընելու աստիճան զարհուրեցան. բույց ծոյլ օրիորդը բացաւ պատուհանը և պատանքը տալով ըսաւ. առ և կորսուէ։

Ո՛չ, գոչեց մեռեալը, ուսկից որ առիր հոն տար։

Նոյն պահուն աքաղաղ մը խօսեցաւ, մեռեալն ալ աներեւութացաւ։

Յաջորդ գիշեր նոյն պահուն, բոլոր աղջիկները տուն երթալէ ետև, մեռեալը նորէն երեւցաւ. պատուհանին զարկաւ և գոչեց. «տուր պատանքս»

Աղջկան հայրն ու մայրը բացին պատուհանը և մեռեալին տուին պատանքը։

Բայց նա գոչեց. «Ո՛չ. լաղ նա տանի զայն և իր տեղը դնէ։»

Դարձեալ աքաղաղներն սկսան խօսիլ և մեռեալն աներեւութացաւ։ Յաջորդ օր քահանան կանչեցին և ամէն բան անոր պատմեցին, և խնդրեցին որ օգնէ իրենց։ Քահանան պահ մը խորհեցաւ յետոյ ըսաւ աղջկան, մինչև օր պատարագի գալ։ Առտուն աղջիկը ժամ գնաց. պաշտամունք սկսեց, շատ ժողովուրդ եկած էր. բայց ճիշդ երբ «քերովբէից» շարականը երգել սկսան, սարսափելի հով մը եկաւ, որ աղջիկը վեր վերցնելով գետինը զարկաւ, աղջիկը իսկոյն անյայտ եղաւ. և բացի իր գլխուն եռեւի մազերէն ոչինչ գըտնուեցաւ։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՑԱՍՆԱԲԱՆԵԱՅ

(Կաroյ-Փօրի)

1. Լաւ ապրէ — երկար ապրէ։

2. Վիշտը հառաչանքով դեռ ոչ ոք բուժած է։

3 Սակաւակերութիւնը հիւանդութեանց արգելիչն է։

4. Համեստ նախաճաշը երեկոյեան ճաշի ախորժակ կուտայ։

5. Մաքրութիւնը աղբիւր և պահպանիչ է առողջութեան։

6. Ոչ միայն մարմինդ, այլ նաև բնակարանդ մաքուր պահէ։

7. Լաւագոյն է խնամել առողջութիւնը քան դարմանել հիւանդութիւնը։

8. Մածուն կեր և երկար կ'ապրիս։

9. Երեք բանէ զգոյշ եղիր — հում բան ճաշակելէ, բռպիկ շրջելէ և կայուն ջուր խմելէ։

10. Երիտասարդութեան ծաղիկը մեղքի

խորշակէն պահէ մեծ խնամով, որ երբ ծեղրաթեան աշխատանքը հասնի քաղցր պտուղի փոխուի այդ ծաղիկ։

—

ՀԻՒԱՆԴԱՊԱՏՀՆԵՐՈՒՆ ՏԱՍՆԱՐԱՆՆԱՆ

(Տոգ. Թէրզեան — Պէպէի)

1. Հիւանդները առանց հոգատար ձեռքերու չեն կրնար բժշկուիլ։

2. Այս խնամատարները են հիւանդապահները, որք ամէն վայրկեան հիւանդին անարին քով հակելով բժիշկին հրահանգները անթերի ի գործ կը դնեն։

3. Բժիշկին ճարտարութիւնը միայն բաւական չէ. հիւանդապահները մեծ դեր ունին հիւանդին դարմանին մէջ.

4. Ձիշդ ժամանակին դեղ և անուշդ տալով, մաքրութեան և այլ պիտոյից հակողութիւն ընելով է որ հիւանդը կ'ապաքինի։

5. Աչալուրջ հակողութիւն. դուրսէն գործածելի դեղը սխալմամբ ներսէն տրուելով գաւալի վիճակներու և մինչեւ իսկ տեղի տրուած է։

6. Տան մը մէջ ամենէն յարմարը որոշելու է հիւանդապահ ըլլալու երբ հիւանդ պա.

տահի։ Սա պէտք է դրի առնէ բժիշկին հրահանգներն և կէտատեսիկ ի գործ դնէ զանոնք։

7. Հիւանդին ձեռքին, բերնին, ճերմակեղէններուն, անկողնին, սենեակին և օդին մաքրութեան խիստ ուշադիր ըլլալու է։

8. Հիւանդին քով հիւր ընդունելու չէ. շատ խօսեցնելէ, ցրտաքաշութենէ, գարշահոտութենէ, աղմուկէ, ծուխէ, մուխէ հեռու պահելու է։ Նաև բժիշկին պատուիրած սընունդէն զատ ուրիշ և ոչ մէկ բան տալու է։

9. Բժիշկին մէկնումէն ետև բոլոր պատահածներն, առած անուններին, տաքութեան, քունին, բնական պէտքերու մասին տեղեկութիւնները գրի առնելով բժիշկին հաղորդելու է երբ նորէն գայ։

10. Հիւանդին սենեակը պէտք է գոնուի ժամացոյց, ջերմաչափ և ուրիշ կարեւոր գործիքներ ըստ յանձնարարութեան բժիշկին։ Դեղ և արուած անուններ չառնող հիւանդը այլ և այլ կերպով համոզելու է. փոքրերուն մինչև իսկ բռնի տալու է։

—

ՎԱՂԱՀԱՍ ՄԱՀ ԱՐԴԻԼՍԻ

Մարդս բնական մահով կը մեռնի 80—90 — 100 — 120 մինչև իսկ 150 — 180 տարի

ապրելով, իր կենսական ոյժերն կը սպառին և մահը կը յաջորդէ, ճիշդ ինչպէս ճրագը կը մարի մխիթային իր իւղն վերջին կաթիլն սպառելու առեն։ Վաղահաս ծերութիւնը հիւանդութեանց մէկ տեսակն է, և հնար է բուժել սովորական ուրիշ հիւանդութեանց նման ծագումին, տեսակին և պատճառին հետամուտ ըլլալով և զայն մէջտեղէն վերցընելով։ Տեսակ տեսակ մակաբոյծներ են որ անանելով մեր մարմինէն, կրծելով և մաշեցնելով զայն քայքայում յառաջ կը բերեն. ինչպէս փոքրիկ որդ մը հակոյ կաղինն յերկիր կը տապալէ, անոր կենաց հիւթն երկար առեն ծծելէ ետև։ Մէչնիքով կը խրատէ առաջ մածուն ուտել, որ ծերութիւն բերող միքրոպներուն դէմ հզօր կռիւ մը կը մղէ։ Ինք այդ փորձառութիւնը ըրած է, քանզի իր դերդաստանի մէջ խոր ծերութեան հասնող մէկ հոգի չըլլալով հանդերձ, ինք այժմ 70ը անցուցած է։ Ուսում ՄԱԾՈՒՆ ԿԵՐԻՔ։

—

ՍԸՐ ՀԻՄՄ ՍԻՊԸՐՒ
ԵՐԿԱՅՆԱԿԵՑՈՒԹԵԱՆ 17 ԿԱՆՈՆՆԵՐՆ

1. Ինացիր 8 ժամ։
2. Անկողինդ պատին պէտք չէ հպիս։

3. Անկողնատանիդ պատու հաններն լսլոր դիշերը բաց թող ըլլան։

4. Անկողնատանիդ դրան առջին ոտքի սրբիչ դիր (այսինքն ննջատանդ խիստ մաքուր ըլլայ)

5. Պաղ ջուրի լոգանք մի ըներ. ջուրը մնրմինիդ ջերմութիւնը ունենալու է։

6. Նախաճաշէ առաջ շարժուամ ըրէ։

7. Ինչ միս կեր, ան ալ խիստ լաւ եփած։

8. Կաթ մի խմեր։

9. Շատ նուղ — կարագ — կեր։

10. Արբեցուցիչ ըմպելիներէ հեռու կեցիր։

11. Ամէն օր բացօթեայ տեղեր շարժուամ ըրէ։

12. Բնակարանիդ մէջ անասուն մի ունենար, ասոնք հիւանդութեան սերմեր կը բերեն։

13. Եթէ հնար է դիւղը բնակէ։

14. Աշխատանքիդ մէջ փոփոխութիւն ըրէ։

15. Յաճախ կարճ արձակուրդներ ըրէ։

16. Սանձէ փառասիրութիւնդ։

17. Զապէ կիրքերդ։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Մարմարիոնից վրայէն խաղի բիծը դիւրաւ կ'անհետանայ մակնէզիայէ ու պէնղինէ խիւս մը դնելով բիծին վրայ. բայց այս՝ եթէ բիծը նոր ըլլայ. եթէ բիծը հինցած է, մանաւանդ ապիտակ մարմարներու վրայ, այն ատեն տաշելով ու շփելով կ'ելլէ։

—

Ծուրց եղանակին մէջ տաք ջրով լոգանքը կամ բաղնիքը պէտք է տաք սենեկի մէջ տեղի ունենայ։ Լոգանքէն ետքը, հանգչելու և հագուելու սենեակն ալ առնուազն 18 աստիճան տաք ըլլալու է, իսկ պաղ ջրով լոգանքի ատեն շատ մկոտ անձերու համար պէտք է որ տաքցուած ըլլայ սենեակը, մանաւանդ ուշնան և ձմեռնամուտ մէջ։ Լաւագոյն է մարմինը տաքցնելու համար լոգանքէ առաջ շարժումներ ընել։

—

Նարի մեքենան չտաքցուած սենեակի մէջ թողելու չէ, վասն զի խոնաւութիւնը կը ձգա-

ակ անոր մեռտաղէ մասերուն, և պատճառ կ'ըլլայ անոր ժանգոտելուն։

—

Ճշմարիտ մարգարիտները մաքրելու համար պէտք է կտաւէ նուրբ լաթի մը մէջ դնել զանոնք և քիչ մ'ալ տաղ աւելցնելով կապել կաղամուած ծրարիկը ապա դաղջ ջուրի մէջ լուալ այնչափ որ աղը ամբողջ դուրս գլլէ, յետոյ մարգարիտները չորցնելու է օդի սովրական ջերմութեամբ։

—

Դանակի վրայէն պտուղի բիծերը հանելու լաւագոյն միջոցն է ածուխի բարակ մանրով և բրդե լաթի կտորով լաւ մը շփել դանակին շեղբը, թեթև մը լուալ զայն դաղջ ջրով, քիչ մը խուղ քսել վրան և ապա կակուղ լաթով մը չորցնել ու փայլեցնել շփելով։ Դանակներու վրայ գտնուած հին բիծերն ալ կ'անհետանան այսպէսով։

—

Ջուկը եփելէ առաջ վրան քիչ մը լիմոնի ջուր կամ քացախ սրսկելու է։ Այսպէս եփուած ձկան հոտն ու համը շատ ախորժելի կ'ըլլայ։

—

Աղտոտ սանտրերը մաքրելու լաւագոյն

միջոցն է ակռայի հինցած խոզանակ մը անուշադրի կամ շատակեկ սոտայով խառն ջրոյ մէջ թաթխել և անով մաքրել։

—

Ձեռքերը փափուկ և սպիտակ ըլլալու համար պէտք է արեւի և օդի ազդեցութենէն զերծ պահել զանոնք, ձեռնոց կրել և ամէն իրիկուն լուսալ ջրով, որուն մէջ քիչ մը կլիսէրին խառնելու է։ Կարծր մոլիկ ունեցող ձեռքերն ալ կը փափկանան, ամէն իրիկուն տաք ջրով լուսալով, միայն թէ այդ ջուրին մէջ շատ քիչ քանակութեամբ (մէկ քանի կրամ) +ըրէ— պը ը խառնելու է։ Դէմքի մոլիկին փափկացման համար ալ յանձնարարելի է այս միջոցը։

—

Աղտոտ սպիտակ ձեռնոցները, բուրդէ փողկապները, թէղանիքները, զգեստի մը վիզի համար բաղուկի բերանի մասերը կը մաքրուին, եթէ զանոնք հարի սեղանի մը վրայ փռելով բարակ ալիւրով շփելէ ետքը, ամուր խոզանակով մը խոզանակէք։

—

Ճախարը եթէ փոխանակ բանդակին (ըէչէլ) եփած առեն դնելու կրակէն վար առ-

նուելէն և պաղելէն ետքը դրուի, կէս առ կէս խնայողութիւն մը ձեռք կը բերուի։

—

Օգտակար է գիտնալ նաև թէ խաշած շոմինի ջրով շատ լաւ կը մաքրուի արծաթեղէն ո՛և է առարկայ, մանաւանդ սպիտակ սակառները, որոնք շոմեկի ջրով լաւ մը խոզանակելէ և մաքուր ջրով լուալէ ետքը, նորի պէս կ՚ելլան։

—

Մազէ աղտոտ խոզանակները լաւ կը մաքրուին, եթէ անոնք անուշադրի ոդիի մէջ քանիցս թաթխելէ ետքը, — երբ ամէն աղտերն ելլեն, — մաքուր ջրով լուացուին։ Ապա մաքուր լաթով մը չփելով արեւուն դէմ կամ վառարանին մօտ տաք տեղ մը, դէպի վար, դնելու է որ կատարեալապէս չորնան։ — Ասկղպիսի խոզանակները ատոյի լուծոյթով ալ կը մաքրուին, բայց ուշադրութիւն ընելու է որ լուծոյթը զօրաւոր չըլլայ, վասն զի թելերը կը կակուղնան։

—

Ասկոդին, զգեստ, ճերմակեղէն, փոխնոցդ, կահ կարասի և այլն հականեխելու լաւագոյն միջոցը զանոնք արեւուս ճառագայթ-

ներուն ենթարկելն է։ Փրոֆ. Էլմարխ այսպիսի առարկաները զանազան հիւանդութեանց մանրէներով նեխելէ ետքը, արեւու ճառագայթներու ենթարկած է զանոնք և մանրադիտքի քննութեամբ հաստատուած է որ մանրէները ջնջուած էին։ Ուստի կարեւոր է որ ննջասենեակը կարելի եղածին չափ շատ արեւ մտնէ։

—

Աեր կիները թողլ ուրախութեամբ կարդան զայս։ — Կին մը 4 հատ աղիւս առաւ և դրաւ դռլի մը մէջ, վրանին քարիւղէեցուց և թողուց որ լաւ մը ձ ծխեն։ Այս աղիւսներէն միայն երկուքը բաւական եղաւ, վառարանին մէջ վառելով, երկու ժամ եփելու, խորովելու և խոհանոցի գործեր կատարելու։

—

Լոգանքի տեւողութիւնը մարմնոյ կազմութենէն և ջուրին բարեխառնութենէն կախում ունի. սակայն միշտ լաւ է 12 վայրկեանէ տեւելի չմնալ ջուրին մէջ։ Էն քաջառողջն իսկ կէս ժամն անցնելու չէ։

—

Ետեւը տան լրեղէններն կամ հանդերձներն կը պահեն, թէև իրենց պէտք չեն

ասոնք. մինչ աղքատ ընտանիքներն անոնցմով երջանիկ կրնան ըլլալ։ Պէտք է առեն առեն մաքրել տունը հինելէն, մեղմ անպէտ եղածը կարօտեալին տալով։

—

Սաճարը գաղջ և ոչ թէ տաք ջրով լուալու է. պէտք է նաև շուտ լուալ. երկար առեն ջուրի մէջ չթողուլ որ չծռի. խակոյն չորցնելու է։

—

Առաւակասարի մէջ ամուրինելուն վրայ ծանր տուրք դրուած է. ասոնք ամուսնացեալներէն աւելի կը վճարեն։

—

Սալմիաճ 3—5 կրամ լուծէ ջրոյ մէջ. լեց ծաղկանօթին մէջ և հոն դրուած ծաղիկները 2—3 շաբաթ թարմ կը մնան։

—

Վայրի փափաթեան դիր մուկ գտնուած տեղը, կը հեռանան անկէ, ալ չեն ախորժիր հոտէն։

—

Քացախ շինելու համար առ մէկուկէս քաշ գինի, 100 տրամ ջուր, 50 տրամ թարմ սեւ հաց, փոքր մանրուած բոլորը տաք տեղ մը դիր. 8 օրէն կ'ունենաս լաւ քացախ։

ՋԵՌՔԵՐԸ ԽՆԱՄԵԼ

Սովորաբար այնպէս կը կարծուի թէ՝ ձեռքերու ճերմկութիւնը գաղտնիք մ՚է, մենք պիտի բացատրենք մէկ քանի միջոցներ որոցմէ կրնաք ընտրել ուզածնիդ։

Ինչ մը գաղջ ջուրի մէջ լեցուցէք տնուշատը (նիշատըը) կամ ոսկեւորակ (թէնեքեար) և լուացէք ձեռքերնիդ, թէ՛ կը մաքրէ և թէ՛ կը կակղցնէ։ Իսկ եթէ ճերմկցնել կ՚ուզէք, քիչ մը վարսակի ալիւր (եուլաֆ) ցանեցէք և լուացուեցէք։ Ջուրին տեսակն ալ մեծ դեր կը խաղայ. ամենէն աւելի կը յանձնարարուի անձրեւի ջուրը, ըսր օրինակ ջրամբարի (սառնըճ) ջուրը։

Շատերը պառկած տեղնին իւղաշինճով (կլիսէրին) ձեռքերնին կը մալակոնեն, ասիկայ փոխանակ մորթը կակղցնելու, աւելի կոշտութիւն և կարմրութիւն կուտայ. աւելի աղէկ է գործածել վարսակի ալիւր, կամ հաւկիթի ճերմկուցը քիչ մ՚ալ պաղեղ (շամպ) իրար խառնելով քսել, և այս դէղն է որ կարգ մը պառաստեօններ կը ծախեն բարձր գիներ պահանջելով։

Ամենէն կոշտ և բիրտ ձեռքերն անգամ

մէկ ամառան մէջ կարելի է կակղցնել և ճերմկցնել, եթէ շարունակ պատկելու տան խնամք տարուի։ Ամենէն անհրաժեշտ նիւթերը, որոնք մեծ բան մը չեն, տան տիկինն մը կրնայ իւր ննջարանի դարակին մէջ ունենալ։ Ահաւասիկ պահանջուածը. պղտիկ շիշ մը կալիի լուծմունք (փոթաս կամ սոտա), քիչ մը ոսկեծորակ, քիչ մը վարսակի ալիւր, և լիմոն մը. այս վերջինը խիստ լաւ կը մաքրէ մորթը։

Ուրիշ միջոց մ'ալ։ Առէք

Ճերմակ քացախ	10	տիրհէմ
Ալքօլ	5	»
Վարդեջուր	5	»
Լիմոնի հիւթ	3	»

իրար խառնեցէք, և թեթեւապէս քսեցէք ձեռքերնուդ։

Արամ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Վաճառականերու ծնունդէն մինչև վեց շաբաթուան տեւողութեան համար յատկաց-

ուելիք խմորին պատրաստութեան եղանակը հետեւեալն է. — Մէկ լիտր ջրով պէտք է շաղել մէկ քիլոկրամ դարիի ալիւրը, բադեղուն և սագերուն համար խմորի պատրաստութիւնը աստիճան մը կը տարբերի, անոնք հաւերուն չափ կարծր խմորէ չեն ախորժիր, ուստի ալիւրի քանակը պէտք է իջեցնել 800 կրամի։

Պարարտացումի համար յատկացուած վառեակներուն մարմինը միս պատրաստող մեքենայի մը նմանելուն, մեր վերը ըսած մէկ լիտր ջրով շաղուած մէկ քիլոկրամ ալիւրին վրայ պէտք է աւելցնել ղօրաւոր անուշդնեղուս բաղադրութիւն մը, որպէս զի մեքենան չդադրի միս պատրաստելու գործողութենէն. ալիւրը դեռ չշաղուած, պէտք է աւելցնել 100 կրամ բրինձի մանրուք, 50 կրամ կորեակ և 50 կրամ կարած կաթի ծեացորդը, (ջուրին և ալիւրին քանակը միշտ անփոփոխ պահելով) և այսպէս պատրաստել կարկանդակը կամ խմորը։ Մէկ լիտր ջուրի տեղ նոյնչափ կաթով խմոր շաղելը բնականաբար խմորին աւելի անդարար ըլլալուն կը նպաստէ։ Պատրաստուած խմորը կերամաններով պէտք է ներկայացնել վառեակ-

ներուն քիչ քանակութեամբ և սակայն ատէպ պէտք է տալ, որպէս զի խմորը օգին ազդեցութեան տակ չը չորնայ։ Ամիսփեննք խմորին պատրաստութեան եղանակը և ըսենք թէ մէկ լիտր ջուր, մէկ քիլոկրամ ալիւր, 100 կրամ բրինձ, 50 կրամ կորեակ և 50 կրամ կըտրած կաթ կոչուած մսատվ կը շինուի խմորը։ Վառեակներու յատկացուած բնակարանին մէջ դալարիք գտնուած ատեն խմորին մէջ կանանչեղէն սւելցնելը անհրաժեշտ չէ. հակառակ պարագային սոսկ կտորներ պէտք է սւելցնել խմորին վրայ, ուրկէ սւելի կ'ախորժին վառեակները։ Վառեակներուն համար այլ և այլ տեսակ ճաշիներ և որդեր տալը օգտակար է։ Վէց շաբաթէ վերջ կտրած կաթը և կորեակը խմորին պարունակութենէն վերցնելը կարելի է։ Այս կերպով երեք ամիս վառեակները կերակրելէ վերջ պարարտացնելու համար կը փոխադրուին զատ յարկաբաժին մը։

Մասնագէտ Երկրագործական
Գիտութեանց
Հրաչ Ս. Տաճիկեան

—

ԹԹՈՒ ԿԱՄ ԱՒՐՈՒԱԾ ԿԱԹ

Առանկ կաթ մը ազնուացնելու համար, եռացուցէք զայն քիչ մը փօթատով։

—

ԽՆՁՈՐՆԵՐԸ ՊԱՀԵՑ.

Հաստարակ անտուկ մը առնելով՝ չոր նկուղի մը մէջ երկու քարի վրայ դրէք զայն։ Ցետոյ այս անտուկին յատակը ծակծկեցէք, 2—3 սանթիմէթր աղբորակով (ալէզը) յարդարեցէք զայն և խնձորները, մաքուր լաթով մը սրբելէ ետքը. շարեցէք զանոնք իրարմէ հեռու և կոթերնին վեր։ Ցետոյ, ըոլոր միջանցքները աղբորակ լեցնելով, խնձորները ծածկեցէք։ Ցետոյ հետզհետէ այս կերպով շարք մը խնձոր, շարք մը աղբորակ դնելով լեցուցէք անտուկը։ Աղբորակի վերջին խաւին վրայ քիչ մ'ալ յարդ դնելով այսպէս գոցեցէք անտուկին խուփը։ Այս կերպով խնձորները անվնաս կը պահուին մինչև գարուն։

Սեմերեան Օտեփանեան

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԲԱԺԻՆ

ԱՆՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ

(Ծոգր. ՃօՇ Մօբ)

Երիտասարդներուն մէջ շատ ընդհանուր գարցած են անպարկեշտութիւն բառը։ Ցուցո՛ւր ինձի երիտասարդ մը ոակորներուն վրայ միս, երակներուն մէջ արիւն, ու ջղային գրութիւն մ՚ունեցող, և ես պիտի ցուցնեմ թէ եթէ երբեք անպարկեշտութեան տեղի տուած չէ, գէթ փորձուած է։ Տարաբաւելի բան է որ սատանան ամէն բանի մէջ փորձեր մեղ և չփորձէը միայն մեր ունեցած ամենազօրաւոր կիրքին՝ ու պէտք է աւելցնեմ նաև ամենանուիրական կիրքին մէջ։

Ի՞նչ ըսել կ՚ուզենք անպարկեշտութիւն ըսելով։ Ոչ միայն դէշ կիներու յաճախելը, այլ Սոդոմականութեան և անձն աղարտելու բոլոր գաղտնի սեռականները։ Անպարկեշտ միտքերն ու երեւակայութիւններն ամէնէն ծանր ու վտանգաւոր փորձութիւններն են, որովհետև մարմնին յաղթել դիւրին է, երբ միտ-

քին սիրապետուած է։ Ինչո՞ւ պատերազմ պէտք է հաչակենք անպարկեշտութեան դէմ։ Շատ մը երկիրներու մէջ յայտնի բժիշկներու հետ տեսնուած եմ, որոնց բոլորն ալ միաձաղնի յայտարարած են թէ անպարկեշտ արարքները բացարձակապէս սխալ են։ Այս կէտին մէջ անհամաձայնութիւն չկայ։ Ընկերութեան թշնամիներ և վատերը են այն բժիշկները որ կը յորդորեն երիտասարդները անպարկեշտ գործեր կատարելու, օրինակի համար անպատիւ կիներու յաճախելու։ Շատ մը բժիշկներու հետ խօսակցած եմ, որք ըսած են թէ իրենց դիմող երիտասարդներուն մեծագոյն մասն ուղղակի կամ անուղղակի կերպով մարմնական մոլութիւններու ղոհերն են։ Այս սխտերը կը փոխանցուին մինչև երրորդ կամ չորրորդ սերունդը, ու խղճալի բան է տեսնել իրենց նախահայրերուն մեղքերն անմեղանչակ զաւակներուն վրայ փոխանցուիլը։ Այս սխտերն ահռելի են։

Անմաքրութիւնը կ'ապականէ միտքը։ Բարեկամներէս մին իր դպրոցը այցելութիւն տալ գնաց, և հոն հանդիպեցաւ մինչդպրոցէն յիսուն տարի առաջ ընթացասարտեղած ծեր մարդու մը։ Պարտէզին մէջ միա-

ալին պատուած տեղ մը ուր ծերը կանգ առաւ և ոտքով բաղխեց։ Բարեկամն հարցուց անոր կանգ առնելուն և այսպէս յուզուելով նայելուն պատճառը, որուն վրայ ծեր մարդը պատասխանեց. — «Յիսուն տարի առաջ, երբ դեռ ուսանող էի, ճիշդ հոս՝ մեր կոյնաձ տեղը՝ լսեցի ամենասուրբին պատմութիւնները մին որ երբեք լսած ըլլամ, և նոյն իսկ այս ներշնչող շրջականերուն մէջ և նոյն իսկ Յիսուն տարի ետքը զուգադիպութեան օրէնքով միտքս կ'իյնան այդ մանկնոյն ահռելի խորհուրդները»

Սբ. Օգոստինոս փոքուքութեան ամբողջ պատմութիւնը չորս բառերով կը նկարագրէ. — «Նայա՜ած մը, պոռնկ մը, հրապոյր մը և անո՜մ մը»։ Երիտասարդ մը որ թոյլ կուտայ իրեն քաշ ինքնան սխալ եղող բանի մը վրայ նայելու, պատկեր մը կը դնէ իր միտքին մէջ և կը թոյլատրէ միտքը որոճալ անոր վրայ, անկէ կը հրապուրուի ու ապա կ'ինայ։ Առաջին և երկրորդ օղակին՝ այսինքն նայուածքին ու պատկերին միջև դիմադրութիւնը հնարաւոր է։ Հազուադէպ կերպով կարելի է դիմադրել երկրորդ և երրորդ օղակին միջև, բայց երբեք տեսնուած չէ մէկը որ կարենայ

դիմադրել երրորդ և չորրորդ օղակին միջև. հոն անկումը անխուսափելի կ'ըլլայ։

Կարդ մը ուսանողներ ալ ըսած են ինծի թե իրենք այնքան առաջ են որքան այն ուսանողները, որ կ'ըսեն թե այդ տեսակ բաներ չեն ըներ։ Սիրտս կը մեղքնայ ուսանողի մը վրայ, որ իր ըներնէն այս տեսակ խօսքեր կը հանէ։ Անոնք նախ և առաջ չեն գիտեր այս չար ունակութիւններուն ազդեցութիւնները, բայց անոնք իրենց մահաբեր գործը կը կատարեն իրենց բնութեան մէջ։ Հիմա միտքս կուգայ տեսակ մը միջատներու մասին լսածս երբ Հնդկաստան կը գտնուէի։ Այս միջատները փորելով կը սողսկին տունը կանգուն բռնող գերաններուն մէջ։ Զգուշանալու արժանի բան մը չի ուիր թերևս անոնց կատարած կործանարար գործը, մինչև որ չյուսացուած օր մը ամբողջ տանիքը կը փլչի յանկարծ ահեղ գղրդիւնով մը։ Այս բանը կը պատահի նաև այն երիտասարդներուն համար, որ չեն գիտեր չար ունակութիւններու ներքին ազդեցութիւնները, բայց ի վերջոյ անոնց հետեւանքը կը քաշեն։ «Իրենց սակրոներն իրենց երիտասարդութեան մեղքերով լեցուն են» ըսած է Յոբ։

Իմաստուն է այն երիտասարդը որ դաշնադրութիւն կը կնքէ իր աչքերուն ու ականջներուն հետ՝ իր ուղեղին վրայ տղդելիք կերպին մասին։ Կրնաս խորհուրդ մը ունենալ ըսր ուղեղին վրայ տպաւորութիւն չձգէ։ Սակայն և այնպէս երբեմն մարդ կը խորհի բանի մը վրայ որ կ'այրէ ու կը մրկէ իր ուղեղը։ Հարիւր անգամ մտածէ միևնոյն բանի վրայ, և ահա հեռք մը պիտի ձգես ուղեղիդ վրայ որ պիտի դիւրացնէ հարիւր մէկ անգամ մտածել։ Հազարաւոր անգամներ խորհէ այդ միևնոյն բանին վրայ, և ահա անիկա հաստատապաղ ճամբայ մը պիտի բանայ ուղեղին բջիջներուն մէջ։ Այն ատեն փորձութիւնդ եղ և առաջ պիտի տատանեցնէ քեզ և ո՛չ մէկ բան, այլ միայն ամենակարող Աստուածը կարող է եղ պահել քեզ անկէ։

Մենք պէտք է պայքարինք անմաքրութեան դէմ, ոնոր համար որ միտքը կը տկարացնէ և ոնոր արդիւնաւործութիւնն և զօրութիւնը կը փճացնէ։ Բան մը որ մարմինը կը տկարացնէ, կը տկարացնէ և միտքը։

Համալսարանի մէջ ուսանող եղած ատենս ընկերային դիտութիւններով շատ կը հետաքրքրուէի, և ամէն Շաբաթ օրեր և երբեմն

ալ Ուրբաթ օրեր հանրային նշանաւոր հաստատութիւններու, ինչպէս յիմարանոցներու, հիւանդանոցներու և բանտերու այցելութիւն տալով կ'անցնէին։ Երբեմն մնալ կ'ուզէին յիմարանոցներու մէջ տեսածներս, որովհետև կը սոսկայի տեսնելով քանի՛ քանի՛ մարդիկներ բերուած հոն՝ իրենց անմաքուր միտքին հետեւանքով։ Տխուր բան էր արդարև տեսնել իրենց միտքը իրենցմէ բաժնուած այս խեղճ խելագարները։ Անոնց ամէնն ալ մտաւորապէս մեռածներ էին։ Եթէ կը կարծէք թէ կը չափազանցեմ կոր ես, խնդիրը գիտականօրէն ուսումնասիրեցէք և պիտի համոզուիք։ Անմաքրութեան ահռելի հետեւանքներուն վրայ խօսօրէն խօսիլը դիւրին չէ։

Այն երիտասարդը որ կը թոյլատրէ իրեն անպարոյ վէպեր կարդալու, աղտոտ պատկերներու վրայ նայելու և կամ կնոջ մը կը նայի անոր ցանկալու համար, կամ անմաքուր պատմութիւններու կ'ունկնդրէ առանց ո և է բողոքի, և կամ իր սենեակը նաւած երեսակոյսութեանը լմնիշ պատկերներ գծել կուտայ, այսպիսի երիտասարդ մը իր կորուսը կը պատրաստէ։ Ի՞նչ է իր ըրածը։ Աղտոտ ուղեղ մը կը կազմէ որ իրեն հետ պիտի մնայ

և միշտ երեն հետ պիտի դեգերի, մինչև որ փճանայ յաւիտենապէս։ Ընդ հակառակ ես երիտասարդ մը որ մեծ ըղձալ ուղելով հանդերձ, այս տեսակ գործերը կատարելէետ չի կենար։ Ահա կերպով իր իսկ թշնամին կը պատրաստէ։

Ուսանողներու ակարութիւնն ի յայտ կուգայ երբ արտակարգ ուժի հը կարօտին քննութիւններու մեծ ճիգին դիմադրելու համար, և կամ երբ մարդ մը ներկայ առեւտրական, արհեստական և կամ քաղաքական կեանքի աստիճ մրցումի մը և կամ համաճարակներու դիմադրաւելու հարկին տակ կը գտնուի։ Նմանօրինակ պարագաներու մէջ երեսց մարմինը հաւկիթի մը կճեպին նման պիտի ընկճուի։ Ասոր համար է որ ջղային հիւանդութեանց մասնագէտ անուանի բժիշկ մը քանի մը տարի առաջ ըսած էր թէ ո՛չ միայն անբարոյ գործերը, այլ նաև տակ անբարոյ խորհուրդները մարդը ֆիզիքապէս կը ակարացնեն։ Ու յայտնի նաև թէ կեանքը հիւթին կորուստը չէ որ մարդուն կը վնասէ, այլ անոր վերարտադրութիւնը և ասիկա յառաջ կուգայ միտքի և երեւակայութեան անմաքուր գործածութենէն։ Ահա երիտասարդն որ իր միտքին մէջ ազատ

տեղ կուտայ անմաքուր խորհուրդներու, իր կենսական հիւթին վերարտադրման պատճառ կ'ըլլայ, կը փճացնէ իր ուղեղը, իր մտաններն և իր ջիղերը։ Ամսկիսի երիտասարդ մը իր ձեռքովն իսկ իր գերեզմանը կը փորէ։ Ինչպէս որ մարդու մը բերանն իր ախորժած մէկ բանին վրայ խորհած ատեն կը լորձնոտի, այսպէս ալ իր կենսական հիւթը կը վերարտադրուի իր մարմնին ուզած մէկ բանին վրայ խորհած ատեն, ու միտքին այս՝ կերպ գործածումէն մարմինը կը տկարանայ։

Պէտք է պայքարինք անմաքրութեան դէմ մինչև մեր կեանքին վախճանը, հետեւեալ պատճառներով. —

Ա. Որովհետև անմաքրութիւնը մարդու մը խելքները կ'ատորնացնէ։ Անմաքուր մարդու մը խելքները այնքան ցած են մաքուր մարդու մը խելքներէն որքան ծովեզերքի դաշտերը՝ լեռներէն։

Բ. Անմաքրութիւնը կը կործանէ մարդու մը ամենաթանկագին յաջողութեան հասնելու փառասիրութիւնը։ Կարգ մը մարդիկ, երբ կեանքի մէջ կան այնպիսի բարձր բաներ որոնց կարելի է հասնիլ, կը գոհանան փոքր բաներով։ Խորհե թէ ինչե՛ր կրնային կատարել

այս մարդիկը եթէ աւելի բարձր փառասիրութիւն մ՚ունենային։

Գ. Անմաքրութիւնը մարդուն իր այժը կեդրոնացնելու կարողութիւնը կը քայքայէ։ Ուրիշ բաներ հաւասար ըլլալով, ո՞վ է առաջնակարգ հանդիսացողը։ Չ՚ան որ սորված է տնտեսել ու խնայել իր մարմնոյն և մտքին բոլոր զօրութիւնը, ընկերային դիրքը, որ սորված է իր բոլոր կարողութիւնները քընտել և ջանք ձեռքը գտնուած մէկ մեծ գործին վրայ կեդրոնացնել։

Դ. Անմաքրութիւնը կը տկարացնէ մարդուն կամքի զօրութիւնը։ Սկովտիոյ մէջ աչքի հիւանդութիւն ունեցող բժշկական ուսանող մը բժիշկին դիմեց, որ անոր աչքերը քննելէ յետոյ, ըսաւ. — «Երիտասա՛րդ, աչքիդ լոյսը վերատոնել կ՚ուզե՞ս» — «Ա՛յո՛, Տոքթո՛ր, կ՚ուզեմ։» «Եթէ կ՚ուզես, յարեց Տոքթորը, պէտք է կամ անմաքուր սնունդներէդ և կամ աչքիդ լոյսէն հրաժարիս» Երիտասարդը սարսռաց, թիկնաթոռին վրայ ինկաւ, գլուխը կախեց, իր դէմքը գունատեցաւ ամօթի և յուսահատութեան զգացումէն, և ապա դառնալով ըսաւ. «Տոքթո՛ր, պէտք է աչքիս լոյսէն հրաժարիմ։» Խո՛ղճ

երիտասարդ, այնքան անգամներ տեղի տուած էր իր փորձութիւններուն որ դիմադրելու ոյժը կորուսած էր։ Անմեքքութեան ուսումնասիրութիւններուն այնքան անձնատուր եղած էր որ ստիպուած էր ըսելու թէ իր աչքի լոյսէն աւելի կը նախնտրէ անմեքքութիւնը։

Ե. Անմեքքութիւնը կը կործանէ մարդուն արժանապատուութիւնը։ Լաւ մնած է այս կէտին վրայ։ Անկարելի է որ երիտասարդ մը իր մարմինը ցոփ կիներու յանձնէ ու միևնոյն ատեն լաւ մնած է իր մտքին։ Անկարելի է որ երիտասարդ մը մտնակցութիւն ունենայ աղջիկ մոլորեցնելու գործին մէջ, և սակայն լաւ խորհի իր մտքին։ Ամբոխի մարդ մը դիտէ թէ ինքզինքը կ'անարգէ։ Մեծ զօրապետ մը ըսած է թէ անմեքքութիւնները ունեցող պինուարները պատերազմի դաշտին վրայ կը սարսռան առաջին անգամ արձակուած դնդակին և ռումբին առջև։ Ընդհակառակն մաքրութիւնը կը զարգացնէ բարոյական և ֆիզիքական քաջութիւնը։ Հին առեններ մարդիկ երեսնց կուրծքին վրայ սա բառերը կը գրէին. «Իմ զօրութիւնս տանի զօրութեան հաւասար է, որովհետև սիրտս մաքուր է։»

Զ. Պէտք է պայքարինք անմաքրութեան դէմ, որովհետեւ մարդու մը համբաւը կ'աղաւաղուի անիկա, Օր մը ամէնն ալ մաքրութեան եւ արդարութեան Աստուծոյ գահին առջեւ պիտի ելլեն՝ հաշիւ տալու համար ո՛չ միայն մարմնով այլ միտքով կատարուած գործերու համար։ Աստուած պիտի դատէ մեզ մեր խորհուրդներով, արտերով, մեր շարժառիթներով եւ երեւակայութեամբ։

Է. Պէտք է պայքարիլ անմաքրութեան դէմ, որովհետեւ մարդուն հոգեկան ըմբռնումը կը մոլորեցնէ՝ այսինքն հոգեկան բաները հասկնալու կարողութիւնը։ Երբ կը խորհիմ թէ ի՞նչ ըսել է պայքար մը, միտքս կ'ինայ Վիքթոր Հիւկոյի վէպերուն մէջէն տեսարան մը, ուր կը նկարագրուի Պրբթանիի ծովեզերքը պաշտպանելու գացող մարդ մը, որ յանկարծ վերահասու կ'ըլլայ թէ աւազուտի մը մէջ կը կայնի, ու կը հասկնայ իր վտանգաւոր դիրքը, ու կատաղօրէն կը խոյանայ մերթ այս ու մերթ այն ուղղութեամբ, բայց որքան կը պայքարի այնքան կը սուղի վա՛ր, դէպի վա՛ր, Իր աչքերուն մէջի տագնապներն եւ իր օգնութեան վերջին աղաղակները լսող աչ ոք կ'ըլլայ։ Ի վերջոյ ձեռքերը կ'անհետա-

նան աւազին մէջ և ամէն բան ըստ առաջնոյն կը տափարակնայ։ Ա.հռելի մահ մ'է աթիկա, սակայն երիտասարդները կը տեսնեմ որ այս տեսակ մահով կը մեռնին։ Այդ օրը վերյիշեալ մարդն ինչպէս կրնար ազատիլ. պիտի ազատուէր անիկա, եթէ գտնուէր յոյո մը որուն վրայ կարենար յենուլ իր պզտիկ մատը։ Այս կարեւոր կէտին մէջ իրարմէ կը տարբերինք։ Ծայր մը ունինք մենք, որուն վրայ կրնանք դնել հաւատքի պզտիկ մատը, և ընկղմելէ ազատիլ։ Ո՞րն է այդ ծայրը. կամ ո՞վ է այդ ծայրը. այդ ծայրը Յիսուս Քրիստոսն է։ Աթիկա կ'ըսեմ ես հազարաւոր ուսանողներու ընդարձակ փորձառութեան վրայ հիմնուելով։ Մեծ պատիւ կը համարիմ խօսիլ պատասխանատուութեան խորունկ զգացումով զօրութեան մը և անձնաւորութեան մը մասին որ հազարաւոր ուսանողներ ազատած է մեղքէ։

Տա՛յր Աստուած որ ևս առաւել ծանօթանայինք այս Անձնաւորութեան, այն է Յիսուսի Քրիստոսի հետ։

Թարգմ. Մ. Պ. Թ.

ՏՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

Քիթի խցուածի համար շագանակի ալիւրը օգտակար է, քթախոտի նման ամէն առտու գործածելու է։

—

Դէմսացաւի համար գաւաթ մը տուրճի մէջ թէյի դդալ մը լեմոնի հիւթ դնել և խմել։

—

Ռէվմասան (Reumasan) *ապեղանի մ'է որ յօդացաւ ունեցողներն օրը 2—3 անգամ ուժգին շփելու են ցաւած տեղերը այս դեղով։*

—

Անդրայի ցաւ. ծնօտը տաք պահել, ծակած ակռան աջին բուհի և դարանքիլ իւղի խառնուրդի մէջ բամպակ մը թրջել և խցել, գաղջ ջրով բերանը յաճախ լուալ։

—

Բժիշկ մը կ'ըսէ թէ, «Նա որ մինչև իր 30րդ. տարին ծանր հիւանդութիւն չէ ունեցած, կրնայ վստահ ըլլալ որ, եթէ պարագա-

ներն նպաստաւոր ըլլան, գոնէ 75 տարեկան կրնայ ապրիլ։»

—

Սոկորդը երբ տաք կերակուրով կամ ըմպելիքով այրելու ըլլայ, սերի կամ խմելու է ծանր ծանր մինչև որ անցնի։

—

Պաթուած. գլուխը բարձր դնելով պառկեցնել, հանդերձները թուլցնել, պաղ թաց լաթեր ճակտին վրայ դնել. սենեակին օդը զով ու թարմ ըլլայ. մանանեխի խիւս կամ թուղթ սրունքին եռեւի մնատ մնային և ծոծրակին վրայ։

—

Մանանեխ — խարտալ — պէտք է սկզբն տուն գոնուի ալիւրի վերածուած. հրաշալիք կը գործէ սա շատ անգամ. գլխու ցաւ և պտոյտ, ակռայի ցաւ, ականջի խօսիլ, անզգայութիւն, կուրծքի խեղդիլ, շնչարգելութիւն, կուրծքի տադնապ, կուշտի ցաւ, ևլն. ևլն ։ Մանանեխը անմիջական արդիւնք ցոյց կուտայ, կեանք իսկ կ'ապրուեցնէ, մանաւանդ կաթուածի առեն, դիր խիւս — լոպիա — կամ մանանեխի թուղթը ցաւած, անհան-

դառնութիւն զգացած տեղը, թող ինայ մինչև ալ չկարենաս դիմանալ տաքութեան։

—

Հազ եւ հարբուխ. Ատա չային եռացուր, մէջը մեղր դիր և 2 ժամը ապուրի դգալ մը խմէ, նաև կարկառէ ըրէ։

—

Բնացած առեն բերանը գոց պահելը առողջութեան համար կարեւոր է։

—

Փորի ցաւ. որովայնը տաք պահել. փափաթեայի գաղջ ջրով դրեխ. տաք նռնէի թէյ խմել, երբեմն ալ գօնեատ քիչ մը։

—

Ճարած ձեռաց և շրթունքներուն լաւ դեղ է սերկեւիլի կուտը. աշնան մէջ առ այդ կուտերէն դիր շիշի մը մէջ և լեց վրան լաւ օղի, թող երկար առեն ինայ մինչև որ ձէթի նմանի. ասկից քսէ ճաթած տեղերը։

—

Ցրեխ ճեղքրտած ձեռքերն կը բուժուին բարկ քացախի մէջ մուր խառնելով և ձեռքերն այս գեղով օծելով։

—

Ականջի ցաւը կը բուժուի երբ տաք ձէ-

թի մէջ մուր հալեցնելով մի քանի կաթիլ սկանջին մէջ կաթեցնէք։

—

Ականաւորց ձիւնի պէս ճերմակ կ'ըլլան եթէ քիչ մը մուր հալեցնելով ջրախառն սիրոյթի օի մէջ, ակռաները առաւս և երեկոյ սաով չիւէք։

—

Թոռերց զօրացնելու համար հարկ է օրը գոնէ մէկ ժամ բացօթեայ տեղ ժուռ գալ, և օրը մի քանի անգամ՝ ձեռքերն գլխոյն վրայ դնելով խորունկ շունչ առնել։

—

Սեամոհայի սկարութեան և կուրծքի հիւանդութեանց համար կաթը պանչելի անուշցնչ մ'է, սակայն շատերը չեն կրնար զայն վայելել։ Մածունը, սակայն, շատ դիւրաւ կ'առնուի։

—

Ընկոյզը և կաղինը շատ անդամալոյծ են. ճարպ կը պարունակեն 63 առ 100։ կ'ըսուի թէ 30 կաղին մէկ քիլօ եզան միսի զօրութիւնը կը պարունակէ։

—

Թուցաւորման պահուն, ըլլայ օձերէ,

կատղած շուներ ևլն., առաջին ընելիքդ է խայթուած կամ խածատուած մասին և արբունին մէջ խզել յարաբերութիւնը, պինդ մը կապելով վէրքէն վեր, որպէս զի թոյնը չտարածուի մարմնոյ մէջ. յետոյ պէտք է թոյնը ծծել, պայմանաւ որ շրթունքդ վիրաւորուած չէ ու ճեղք չունի. ապա խարել կարմրած երկաթով մը։ Բժիշկ կանչել։

—

Բռնկած հանդերձներն մարելու համար պէտք է կամ գետինը տապալիլ և կամ վրան կապերտ մը կամ քու կրած հանդերձդ նետել. յետոյ ջուր լեցուր մարդուն վրայ վերէն վար, քանզի բռնկած լաթերն, թէև դուրսէն մարին, ներսէն տակաւին կը վառին։ Հանդերձներն հանելու համար կտրէ մկրատով որ մարմինը չբացուի։ Լաւ օծանելիքն է ձէթ և հաւկիթի սպիտակ, մէկտեղ լաւ խառնուած։ Բժիշկ կանչէ։

—

Սրտի դիշերային բաբախումներու դէմ շատ օգտակար է լիմոնի հիւթը շաքար ջուրի մէջ քամել ու խմել։ Այս լիմոնատէն 1—2 դաւաթ խմելով, փոփոքուած սրտիւնքդ ձեռք կը բերուի։

Թարմ լեմոնի հիւթը լաւագոյն դեղն է հալբուխի, կոկորդի ու վրի բորբոքման դէմ։ Ափին մէջ քամելով լեմոնին հիւթը, քիթէն քաշելու է բերնին մէջ։ Այսպէս երեք անգամ բաւական է կատարելապէս բուժուելու համար։

—

Կաթով ու բոմով թէյը լաւ ըմպելի մ'է, մանաւանդ ձմրան մէջ, բայց պատրաստութեան ատեն զանոնք իրարու խառնելու կերպերը տարբեր արդիւնք կուտան։ Թէյին մէջ եթէ նախ կաթ և ապա բոմ դնենք, կաթը չպանրանայ։ Բայց եթէ նախ բոմ և ապա կաթ դրուի, կաթը կը պանրանայ։ Նոյն արդիւնքը յառաջ կուգայ նաև մեր ատամնաբոյնի մէջ։ Եթէ գինի կամ օղի խմելէ առք կաթ կաթնեղէն ուտուի։

—

Կազմով վատառողջ, ջիղերով տկար
Մեծ ու փոքրերուն յաւէտ օգտակար,
Բուժիչ կ'ապդուրիչ դեղ մ'անուանի
Եթէ կայ, ձկան ղուտ իւղն է անի.
Եւ հրաշագործ այդ ձուկն է Մօրէն,
Ուր իւղն ըմպողը կը դառնայ կորիւն։
Կուտայ ախորժակ, ոյժ, քուն, և խակոյն
Կարմրին այտերը ինձորի հանգոյն։

Հիւանդին սեռական մէջ լռութիւնն ու հանգարտութիւնը այն աստիճան հասցընելու չէ որ հիւանդը իր վիճակին ծանրութենէն կասկածի։ Հիւանդը յաճախ կը յուզուի եթէ իր մօտ դանուողներուն խօսածը չլսէ։ Երբ տեսնէ կամ զգայ որ շատ ցած ձայնով կը խօսին իր շուրջը, կը կասկածի թէ իր վիճակը ծանրացած ըլլալուն համար է որ այդպէս կը խօսին։ Բժիշկին դարմանն ու քանքերն արդիւնաւորող գլխաւոր ազդակը, հիւանդին՝ բժշկուելու համար ունեցած յուսալից խինդն ու կամքն է։ Ուստի երբ հիւանդին քունը կատարեալ լռութիւն պահանջելու հանգամանքը չունենայ, սեռական մէջ ցած ձայնով խօսելու չէ։ Բայց ուշադրութիւն ընելու է որ խօսակցութիւնը չդրգռէ հիւանդը։ Ուստի ո՛չ հիւանդութեանը վրայ խօսելու է և ոչ ալ հիւանդին չսիրած խնդիրներու վրայ։ Եւ այդ ալ՝ շատ կարճ։

ԿԱՆԱՆՑ ԲԱԺԻՆ

Թալէրան մեծ եւեկոյթ մը կատարէ իր պատիւ Պոնափարթի, որ փարիզ դարձած էր Եգիպտոսի պատերազմէն ետքը։ Նշանաւոր մատենագիր Տիկին տը Սթալ ինքզինքը ներկայացնել տուաւ հերոսին, որուն արամտութեամբ ջերմ մեծարանքներ ըրաւ. ապանց ղօրավարը պատասխանեց ցուրտ, բայց քաղաքավար խօսքերով, Տիկին տը Սթալ չարունակեց իր փայփայանքները, և լսելով որ մարդերու ամենէն առաջինը նկատէ զինքը հարցուց.

— Ձօրավա՛ր, ո՞րն է այն կինը, զոր ամենէն աւելի պիտի սիրէիք։

— Իմ, Տիկին։

— Շատ պարզ. բայց ո՞րն է զոր ամենէն աւելի պիտի յարգէիք։

— Իր տնական գործերուն ամենէն լաւ ղեկավարը։

— Կ'ընդունիմ. ասկից ձեզ համար ո՞վ պիտի ըլլայ առաջին կինը։

— Ամենէն շատ զաւակ ունեցողը, Տիկին Եւ Պոնափարթ քաշուեցաւ Թողլով տիկին Սթալը իր շուրջ գտնուողներուն հետ որ ամենէն աւելի կը խնդային։

—

Ընդհանուրապէս, կ'ըսէ Մ. տիւ Պլէսսիրերն երեք բան կը պահանջեն կիներէն. — Գեղեցիկ ըլլալ, իրենց տնական գործերը վարել կարող ըլլալ և իրենց անասլ, կամ այնպէս ցոյց տալ։ Նոյն իսկ կը կարծեմ թէ տարուան մը ամուսնութենէ եաքը, տիկնոջ սաքինութեանց աւելի կարեւորութիւն կուտան, քանթէ մուսներուն։ Այս է կարծիքը բարեկամներէս մէկուն։

—

Մեծ երկրամոլ մը, որուն օր մը, իր սրամտութեամբը ու հիւրասիրովը նշանաւոր, Տիկին Օպէրնոն տը Նովիլ, հարցուց թէ ո՛ր արուեստը նախամեծար կը համարի։ Բարեկամը պատասխանեց. — «Խոհարարութիւն Տիկին.» Կիները չախորժեցան այս նուաստացուցիչ պատասխանէն. այրերը գոչմունք հաւանեցան։

—

Այն երիտասարդուհիները որ անկեղծօրէն երջանկութեան ճամբան կը փընտռեն և ունայն նախապաշարումներու կաթեւորութիւն չեն տար, սա երեք առաքինները կը ձօնեմ որ խնդիրը կը պարզեն. — Կին մը ո՛րքան սիրէ իր ամուսինը այնքան պէտք է ջանայ անոր հաճելի ընծայել առաքինին կեանքը։ Աչքերէն շատեր իրենց կիները կը սիրեն միայն անոնց տնական առաքինութեանց համար։ Շատ կին սիրող այրերը միշտ ամենէն վերջն իրենց կիներուն կը դառնան, երբ անոնք ունենան տունը հանգստաւէտ ընծայելու գիտութիւնը։

—

Լաւ տան տիկին ըլլալու համար սոսկ են գլխաւոր դարմանները. — 1. Ժամանակը լաւ գործածել. 2. Ամէն բան բուն իր ժամանակին կատարել. 3. Ամէն բան բուն իր յատուկ տեղը դնել և 4. Ամէն տեղ միմիայն Մէկ բանի յատկացնել միշտ և անփոփոխ։

—

Սահմանց արժէքը շատ կը տարբերի. Ուկանատյի մէջ կին մը կը գնուի միայն 6 հատ ասեղ և տուփ մը ֆիշէնք տալով. Ֆաֆրատ

տանի մէջ 2—10 եզ տալով։ Թաթարները կնոջ ծանրութեամբ կարագ տալով. Քամչաթքայի մէջ 1—10 արջառ տալով. Մեքսիկոյի հեռաւոր անկիւններն 12 ձի տալով։ Այլոյ ազգերէն ոմանց քով սովորութիւն է որոշ ժամանակ մը ծառայել կինը առնալու համար։ Մինչ հիւսիսային Ամերիկայի հեռաւոր տեղերուն մէջ տուփ մը լուցկի է կնոջ արժէքը։

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ

ԵՐԲ ԱՄՈՒՍՆԱՑՆԵՆՔ ՄԵՐ ՏՂԱՆԵՐԸ

Բժիշկները կ'ըսեն թէ տաք կլիման սերունդը շուտ սրբունքի կը հասցնէ, իսկ ցուրտը՝ ուշ. առարկութիւն չունիմ ասոր հանդէպ այլ նբը իրականութիւն ընդունելով, ղայդ պիտի ընեմ ուղղեցոյց այս հարցին պատասխանելու։

Հայաստանը ոչ Սահրան է և ոչ Սիպե-

բիա, այդ տեղացիները թող իրենց պայմանները ուրիշ յարմար օրէնքներ գտնեն, մենք, պատկանելով բարեխառն կլիմայի, լաւագոյն կ'ըլլայ որ ամէն բանի մէջ բարեխառնը փնտռենք։

Սեռական — յարաբերական կեանքին մէջ հայը ոչ ժուժկալ է և ոչ տուփամոլ, այլ բարեխառն, բայց դժբախտաբար երեւոյթը ցոյց կուտայ որ տակաւ առ տակաւ կ'երթանք դէպի տաք կլիման. յարաբերութեան չափն ընդլայնումը, ինչ որ աշխարհի ներկայ կարգ ու սարքին համար բնական և անխուսափելի բան մըն է, բայց մենք հայերս աշխատինք խուսափիլ, երբ մանաւանդ մեր բարեխառն կլիման կրնայ զմեզ հեռու պահել չափազանցութենէ։

Բժիշկները պատուաստը իբր մեծ բարիք կը դաւանին, ես ալ կը կարծեմ որ այդպէս է. հիւանդութիւն մ'ինքնիրմով բժշկել, ծաղիկը՝ ծաղիկով. քիչ չէ որ թունաւորուածի մը իբր դեղ թոյն կը խմցնեն և կը յաղթին. ի՞նչ է որ կ'ընեն — դրական զօրութիւն մ'ուրիշ դրականով, կամ ժխտական մ'ուրիշ ժխտականով վանել. ես այդ խիստ նպատակայարմար կը գտնեմ։

Մինչեւ վիջոցը չե՞նք կրնար կիրարկել մեր սեռական — յարաբերական կեանքին մէջ արդեօք. պատասխանս դրական է, դէթ իմ համոզմունքս։

Մի փոքրիկ պատմութիւն։

Դպրոցը ինծ պատմութիւն դաս կ'տա-նեմ. գողի մը պէս Գերեզմանք Երիտասարդացը կը կարդամ. ու այդ առեններն իսկ մայրս, աչքերս ցաւցած ժամանակ, երբ ալ քոլ կը լեցներ աչքերս, ձայնս, պօռալ-կանչելս կտրելու համար երկու հատ խաղողի տերև կը դներ աչքերուս, դիս վատահեցնելով (կամ խաբելով) որ ա՛յն որթէն է կըտրեր, որմէ ես կախուած եմ եղեր երբ խաղողի ողկոյզ մը, ու երբ ինքը կուգայ այդ որթէն խաղող քաղելու, կը տեսնէ դիս, կը կտրէ ու կը տանի երեն տղայ կ'ընէ . . . Հրաշալի պատմութիւն, ես այսօր ալ միւս բոլոր որթերէն տեւելի կը սիրեմ այդ որթը՝ որ իմ մայրն (՞) է եղեր։

Բայց թէ մեր յաջորդները մեզնէն միամտութիւնն ունի՞ն — բացարձակապէս ոչ. անոնք մեր գաղտնի պահած բոլոր բաները գիտեն դեռ երեսնց 4—5 տարեկանէն։

Ահա երկաին տարբերութիւնը մեր ու մեր

յաջորդ սերունդին։ Ի՞նչպէս վարուիլ, ի՞նչ ընել որ մատղաշ և նորահաս կեանքերը, որոնք հրեշտակի կոչումն ունին, զայրոյթ ստղուններ չը դառնան։

Նկատելի է որ տղան իր 10—13 տարեկան հասակին արդէն գրաւչութեան շրջանին մէջ է, իսկ երբ կը թեւակոխէ 15ը, դէմքը կը սկսի առնականութիւն արտափայլել, ինչ որ կը ցուցնէ թէ տասը սերմնակներդանները կատարելագործուելու ճամբուն մէջ են։ Տղան կը սկսի դալ։

Եթէ տղատ է դիմացութենէ, կայտառ ու կարմիր է, և իր ֆիզիքականի զարգացումը խիստ յայտուն, իսկ եթէ ոչ, սերմնակներդանները ճնշուած և վաղահաս զարթնուսմի տակ արդէն հասունութիւն ցոյց կուտան, բայց այդ հասունութիւնը դժբախտութիւն մըն է տղուն, տալով յաղեցուցիչ հրավառ կիրքին։

Նկատելի է որ ամրոցը փոքրերու, երիտասարդներու մէջ աւելի մեծ տեղ ունի, քան հասակառուներուն, և հոգոց մէջ խիստ սակաւ են թիւերը 20 տարեկանէն վար երիտասարդներուն, որոնք հանրաստուններ կը յաճախեն։ Աւելիէն օգտուիլը կարելի է, բայց ոչ յայտնապէս. կ'ամչնան, որուն կը նպաստէ

տրխիւ տակաւին եւ չդալը. բայց քիչ չեն 17-20 տարեկան երիտասարդները, որոնք արդէն հայր են 1-2 զաւակներու, և իրենց թարմութեամբ ու կայտառութեամբ կը խոստանան երկար և պտղալից կեանք։

Չափազանցութեան առաջքը չափաւորութեամբ կ'առնուի (արմատախիլ բուժումը հաղուագիւտ է). արդ, ինչո՞ւ թողունք որ մեր տղաքները իրենց աչքերը բանան տարբեր ճամբաներու վրէ, հետապնդեն կիներուն ու աղջիկները, պոռնիկներու հետ ծանօթանան, պատուեն իրենց տօնը, երբ միջոցներ ունինք զանոնք օրինաւորապէս հետու պահելու սառնցմէ, որոնք միշտ վնասակար տպաւորութիւն կ'առաջնորդեն, և կը դարձնեն ենթական, շուտ կամ ուշ մեքրոպ, վարակիչ ախտ, որմէ առկան նոյն իսկ իրայիններըը։

Տաք տեղերու 8-10 իսկ ցուրտ տեղերու 14-16 տարեկաններու սրբութեան հասնիլը նկատի առնելով, մենք, իբր բարեխառն կլիմայի զաւակ, մէկդի ձգենք 10-12 և 23-25 տարիներու ամուսնութիւնները և վերցնենք տասնց միջինը, 18-20, որ տակն ալ ինչ նպաստաւոր է։

Տղան՝ ամօթով, անախտ, քաջակազմ և

ընդունակ աշխատութեան, թող իր աչքերը բանայ իր ընտանիքին ծոցը, թող օտար ձնայ տարբեր վայրերու հետ չփուէն, և թող իր սեփական այժը իրեն սեփականացածին վրայ գործածէ։

Մի տարբեր նկատուի՛ եւս, Հին մարդերը կ՚ապրէին երկա՛ր, խի՛տ երկար (կ՚ըսեն), աստուածոյ մը չափ. ասոնց երիտասարդական տարիքը 100էն կը սկսէր, այդ համեմատութեամբ անոնց արբունքի շրջանը պէտք էր 50-60 տարեկանին ըլլար (ենթադրական օրինակ) բայց այժմ, անոնց արբունքի տարիքին հասնող մեր մարդերը ծերացած, ապուշ, պոռլան (ըստ Մշեցոց) են դարձած։ Աչքի գիտութեան տեսակէտէն ալ երբ նայինք այդ հարցին, կը տեսնենք որ 18-20 տարեկաններու ամուսնութիւնը նախընտրելի է, երբ իրենք ապրելու կարճ շրջան մ՚ունին արդէն։

25-30 տարեկան մէկը եթէ-մէկ զաւակի տէր է, շուտ կարգուելովը քանի մը զաւակներ ունեցած կ՚ըլլար մինչև այդ։ Հայու սա առածը հայու համար խորունկ իրականութիւն կը պարունակէ. «Տուն շինողն և կարգուողն բանը Աստուած կը յաջողէ»։

Բնաւ թող չըսուի թէ Հայ երիտասարդը

18-20 տարեկան ամուսնանալովը կը տուժէ իր ֆիզիքականէն. տարբեր տեղեր տարբեր օրէնքներ թոզ սահմանեն, իսկ ինչ կը վերաբերի Հայոց, հայ հայրը. իր օճախը շէն պահելու, բազմացնելու, մանաւանդ վարակիչ ախտերէն հեռու պահելու համար, (որը դժբախտաբար սկսած է այս կողմերն ալ իր սարսափելի դոյութիւնը ցոյց տալ) թոզ իր տղան 18-20 տարեկանին ամուսնացնէ և երջանիկ պիտի ըլլայ ապահովաբար։

Ա՛հա մեր պատասխանը։

1912 Մարտ 6 — ՍԻՍԱԿ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Փղի — Մշեցի

ՄԵՐ ԽՈՀԱՆՈՑԸ

ԱՊՈՒՐՆԵՐ

1. Ջանգազան ցեսակ հայսի (շէհրիյէ) ապուր. — *100 տրէմ արփա շէհրիյէսին խաշելէ յետոյ պաղ ջուրէ անցուր, ջուրը քամէ։ Մէկ օխա մսի ջուր դիր. խառնէ և մէկ քառորդ ժամ եփէ և վերտին ջուրը քամէ։ Ամանին մէջ լեցուր և պէտք եղածին չափ նորէն տաք մսի ջուր լեցուր։*

2. Նահանգչեղէնի ապուր. — *60 տրէմ կարտոֆ, 125 տրմ. սոխպղին (հավուճ), 125 տրմ. չողգամ (շալկամ), 50 տրմ. պրաս (փրասա), 50 տրմ. չոր սոխ, 12 տրմ. կարոս (քէրէվիզ) 25 տրմ. կաղամբի (լահանա) մի-ջուկը, 1 հատ հազար (մառուլ), 10 տրմ. Թրթնջուկ (գուզու գուլպը)։ Առնցմէ պրաը, կարոսը, սոխը, շողգամը, սոխպղինը եւ կաղամբը մաքրէ, երկու մատի լայնք եւ չորս դանակի հաստութեամբ կտրտէ, ամէնքը մէկէն կարմրցուր, յետոյ մսի ջուր լեցուր, աղն*

ու պղպեղը դիր, միջակ կրակի վրայ երեք ժամու չափ կամաց կամաց եփէ, յետոյ թրթնջուկն ու հաղարը մէջը ձգէ։ Ոմանք իւղի մէջ կարմրած հացի կտորներ ալ կը ձգեն մէջը։ Մակ ջուրի տեղ չոր լուբիայի (ֆասուլիա) և սիսեռի (նօխուտ) եփած ջուրն ալ կը դրուի։

3. Թարխանայի ապուր ուտիլի. — Թարխանան առջի իրիկունէն պաղ ջուրով կամ կաթով թրջէ, հետեւեալ օրը մսի ջուրով կամ կաթով լաւ մը խառնելով եփէ։ Մանր քառակուսի ջարդուած հացը կարագ իւղի մէջ աղէկ մը կարմրցուր և ապուրին մէջ լեցուր։ Եթէ կաթով է եփած ապուրդ հացի կտորները պէտք չէ իւղով տապկել, այլ պարզապէս կարմրցնելու է։ Վրան քիչ մը նռնէ ցանելու չմոռնաք։

4. Թարխանայի ապուր պահի. — Վերը ըսուածին համեմատ՝ թարխանան թրջէ ջուրով, պէտք եղածին չափ սոխ ջարդէ ու ձէթի մէջ կարմրցուր. յետոյ թարխանան մէջը լեցուր և լաւ մը խառնելով եփէ։ Չմոռնաք կարմրած հացի կտորներն։

5. Հիւցիեարի ապուր. — 10 սոեպղինին մսային կարմիրները քերիչով (բէնահ)

մանրցուր, 3 գլուխ սոխ, քիչ մը կարոսի արմատ, եւ երկու պրաս ջարդէ, կտոր մը կարագով կէս մը կարմրցուր, մսի ջուր դիր, քիչ կրակի վրայ քաշէ, շերէփով (քէփչէ) լաւ մը խառնէ, փրփրցուր, եւ մանր ջարդուած ու իւղով տապկուած հացի կտորները դիր։ Ա՛յս ապուրը ձմեռուան համար է, ատեպղինին տեղը շողգամ, կամ թարմ ոլոռն (պէզելիա) եւ թարմ լուբիա կրնայ դրուիլ։

6. Դդմաճի ապուր. — Աղի եւ շատ ջուրի մէջ 80 տրմ. բարակ դդմաճ (մագարոնա) 10 վայրկեան խաշէ, պաղ ջուրէ անցուր, մէկ մատի երկայնութեամբ կտրէ, սանի մը մէջ դիր, 350 տրմ. մսի ջուր աւելցուր, մինչեւ որ եփի կամաց կրակի վրայ, ջուրը առ, ապուրի ամանը լեցուր։ Քիչ մը լաւ պանիր քերիչով մանրէ եւ միասին սեղան դիր։

7. Ալիւրի ապուր. — 20 տրմ. սպիտակ եւ լաւ ալիւրը 250 տրմ. կաթով խառնէ. քիչ մը աղ եւ 5 տրմ. շաքար դիր, 20 վայրկեան եփէ, եթէ թանձրանայ կրնաս կաթ աւելցնել վրան։

8. Պրասի ապուր. — 200 տրմ. պրասը 2 մատ երկայնութեամբ եւ 5 դանակի կտնակի լայնքով ջարդէ, 15 տրմ. կարագով քիչ մը

կարմրցուր, 500 տրմ. ջուր եւ աղ ու պղպեղ դիր. առաջին եփը ելած առենէն 20 վայրկեան ձգէ որ եփի. ամանի մը մէջ 40 տրմ. մանր ջարդուած հաց դիր, 3 հատ երեք հաւկիթ զարկ, 50 տրմ. պաղ կաթ և 30 տրմ. կարագ աւելցուր հաւկիթին վրայ, խառնէ և ապուրին մէկ մասին հետ աղէկ մը միացուր և ամբողջը մէկանց ամանի մը մէջ լեցընելով անմիջապէս սեղան դիր։

9. Փիւղացի աղջկան ապուր. — 4 առեպղինին կարմիրը 4 շողգամով մանր ջարդէ, նոյնպէս 150 տրմ. կաղամբը ջարդէ, 3 սոխ, 100 տրմ. կարագ և 3 տրմ. շաքարով լաւ մը խորովէ, 2 օխա մսի ջուր լեցուր, 2 ժամ կամաց կրակի վրայ եփէ, յետոյ 30 տրմ. ջարդուած հաղար և նոյնչափ ալ թթխմորուկ աւելցնելով մէկ ժամ եւս եփէ։ Ամանի մը մէջ բաւական հաց ջարդէ և վրան լեցուր։

ՈՍԿԵԴԷՆ ԲԱՆԱԼԻ
ԱՆԴԼ. ԼԵԶՈՒԻ
ԳԻՆ 12 ԴՀ.
Դիմել Մաթէոսեան Տպարան

ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՈՒ ԴԱՅԵԱԿ

Տօգր. Ց. Փափազեան, Բարիզ

(Շարունակութիւն 1912ի Օրացոյցէն)

1. Ծննդաբերութիւնը երբէք մահ կամ հիւանդութիւն չպատճառեր։ Սա ձեզի ընտանեկար լլլալէ առաջարար է. ասով է որ պիտի զօրանաք և հին ու նոր անբուժելի դարձած ցաւերնէդ իսպառ պիտի փրկուիք։

2 Ձեր յղութեան առեն, տգէտ ու անփորձ դայեակի խօսք մտիկ ընելէ ազէի, փորձ բժիշկի խրատ ու պատուէրներուն միտ դրէ՛ք. տալիք հրահանգները կէտ առ կէտ գործադրեցէք, ազէի վատահ լլլալու համար ծննդաբերութեան վայրկեանին զայն ձեր քովն ունեցէք։

3. Ցղութեան շրջանին մինչև վերջին ժամը առ նուազն ամիսը մէկ անգամ դէպը քննել տալ պէտք է տեղեկագիրը բժիշկին ղրկելով։

4. Յղութեան առաջին օրէն մինչև ծննդաբերութեան օրը բաց օդի մէջ 2—3 ժամ առանց յոգնելու պտըտելու է։ Երրորդ ամիսին մէջ տօքսէն նետել ու փորին վրայ առանց սխմելու գօտի մը կրել պէտք է. տաքէն պաղէն պաշտպանուելու լայն հագուստներ հագնելու է։

5. Ծննդաբերութենէն մէկ քանի օր առաջ մասնաւոր սենեակ մը պէտք է պատրաստել, լաւ մը մաքրել տալու է ու մէջի աւելորդ կարասիները հանել պէտք է. խնամքով մաքրելու է անկողինը, վերմակը, առանը, ծածկոցը, բարձի երեսը և այնպէս շտկելու է մահճակալը։ Մօրը և պղտիկին բոլոր պիտանի ճերմակեղէնները կրկին լուալ և արդուկել վերջ ծրար ընելով մահճակալին մէջ դնելու է։ Այս սենեակին մէջ պատրաստ ունենալու է նաև երկու շապիկ, երկու դոդնոց (բժիշկին և դայեակին) 2-3 անձեռոց. 2 քիլօնոց մէկ դրեխ 200 կրամ սէրբ պօրէ+, 200 կրամ տօրօն ֆէնէ+է, 100 կրամ կլիսէրին, 100 կրամ ալքօլ, մաքուր ամանների մէջ եռացած ջուր, չգործածուած օճառ ու մէկ քանի ուրիշ դեղեր զոր բժիշկը ի հարկին բերել պիտի տայ։ Երբ յղի կինը առաջին խիթը

դդայ, գաղջ ջուրով լոգանք մը առնելէ և օճառով լաւ մը մաքրուելէ յետոյ, մաքուր ճերմակեղէններըը հագնելով, պէտք է այս սենեակը երթայ, որուն տաքութիւնը նոյն առեն 18 աստիճկրատ ըլլալու է։

6. Մասնաւոր սենեակին մէջ, որ խիստ մաքուր պէտք է պահուի, 1—2 օգնական, դայեակ ու բժիշկէն զատ ոչ ոք մտնելու է ծննդաբերութենէն առաջ, հոն եղողները, գործողութիւնը լոլորովին չլմնցած, դուրս պէտք չէ ելլեն և կամ դուրսիններու հետ ոեւէ հաղորդակցութիւն պէտք չէ ունենան։

Ծննդաբերութեան հրաւիրուող դայեակ և բժիշկ հիւանդի քով գալէ առաջ, պէտք է, ուրիշ սենեակի մը մէջ իրենց սեղմրդ լոթերը հանեն և գիտական պայմանի համաձայն մաքրուելէ վերջ, սենեակին շեմին վրայ, օգնականներու կողմէ տրուած շապիկը հագնելով, գոգնոցին կապելով սենեակը մտնելու են։ Հոս կրկին մաքրուելէն վերջ, ծննդական գործարաններու նեղքին և արտաքին մասերը եռացած ջուր և օճառով լաւ մը մաքրելէ և 0/0 2 սուլիմէ պօրիքի բաղադրութեամբ պօլ գրեթէ մը ընելէ յետոյ՝ մահճա-

կալին վրայ պառկեցնելու է մայրը, և ձագուկին գալատեան սպառելու են համբերութեամբ։

8. Ծննդաբերութիւնը դիւրացնելու համար դայեակին կողմէ տրուած լաւ–ըն ըօվէ և կամ ուրիշ ոեւէ բան պէտք չէ որ բերան դրուի, այս պարագային մանանագէտ բժիշկը կանչելու է։

9. Ծննդաբերութենէն մէկ քանի օր յետոյ, երբ պզտիկ անհանգստութիւն մը դպայ յղի կինը, թող գիտնայ որ հիւանդ է։ Մաքուր ու օրինաւոր պայմանի մէջ եղած որդեծննդեան մէջ երբէք բնականէն աւելի տաքութիւն պէտք չէ ունենայ յղի կինը։ Ուստի երբ մէկ աստիճան բարձրացում (38) ունենայ, շուտով բժիշկ կանչելու ու դարմանին հոգ տանելու է. դայեակին «կաթի դողէ եւայլն խօսքերուն ականջ կախելու չէ. գիտութիւնը առանկ բան չընդունիր. երբ ծարաւ դպայ յղի կին մը, այն ատեն պէտք է առանց վախի ջուր խմէ։

10. Տգէտ, անուս, շատախօս և անմաքուր դայեակը տունին շեմէն ներս առնելու չէ. աւելի աղէկ է առանց դայեակի ծնիլ ու ապրիլ քան թէ դայեակով կեանք վրայ տալ ու մեռնիլ։

Ա.յս պատուէրներէս շատերը քաղաքներու մէջ միայն գործադրելի են։ Գալով գիւղերու, յղի կիներու և դայեակներու մաքրութիւնը բաւական է շատ մը չարեաց առաջքը առնելու, ինչ որ վերի առաջին օրինակս կ'ապացուցանէ։ (Օրց. 1912)։

Գաւառացի մայրե՛ր, վերջին ծայր հոգածու եղէք մաքրութեան, խիստ լաւ մաքրեցէք դայեակներու ձեռքերը ու գործի սկսելէն առաջ մէկ մէկ խոշոր ասւան կամ գոգնոց կախեցէք անոնց առջեւը, եթէ չէք ուզեր ձեր հոգեհատոր ու սիրեցեալ զաւակներուն մահը տեսնել ու աղեկոծ արցունք թափել անոնց վրայ։ Պէտք է գիտնալ նաև թէ ձեր միջավայրի ծննդաբերութեանց հարիւրին 99ը բնական կերպով առանց վտանգի և ուրիշի օգնութեան տեղի կ'ունենան։ Հազիւ հարիւրին մէկն է որ բժիշկի ճարտար ձեռնտուութեան կը կարօտի, այս ալ կրնամ ըսել թէ շատ հազուադէպ է։

Կրկին դառնալով ձեղի, սիրեցեալ քոյրեր, երբ վերի բաժիններս անթերի կատարէք, ծննդաբերական մահ և կամ երկար հիւանդութիւն և տառապանք քաշելու երկիւղէն ղերծ պիտի մնաք։ Ես ալ դայեակ տուտուներու ձեռքէն ձեր ողջ առողջ տղաները տեսնելով պիտի ուրախանամ։

ԳԻՏԱԿԱՆ

Փանամայի ջրանցքը. — Ատլանդեան ովկիանոսը խաղաղականի հետ միացնելու համար փորուած այս ահագին առուն թէև 50 մղոնէն քիչ աւելի երկայնութիւն ունի, իր դիրքին և բնական դժուարութիւններուն պատճառաւ՝ անոր բացումը մարդկային ճարտարապետական և մեքենագիտական ամենամեծ ձեռնարկներէն մէկը կը սեպուի։ Այս ձեռնարկը գլուխ հանելու համար ամենահմուտ ճարտարապետներու երկարամեայ համբերութեան աշխատութեան հետ միասին ամերիկեան կառավարութեան կողմէ աւելի քան 375,000,000 տալէրի ծախք մը հարկ եղաւ։

Փանամայի ջրանցքին բացումովը աշխարհի ամենէն կարեւոր առեւտրական կեդրոններուն միջև հեռաւորութիւնը մեծապէս կը նուազի, այնպէս որ կարծես թէ աշխարհ կէս մը կը պզտիկնայ և յարաբերութիւնները կը գիւրանան։ Նիւ Եորքէն Սան Ֆրանսիսքօ

այժմ նաւային ճամբով հեռաւորութիւնն է 13,107 մղոն, Ջրանցքին բացումովը այդ երկու քաղաքներուն մէջ նաւային հեռաւորութիւնը կ'ըլլայ 5,272 մղոն, Մարսիլիա այժմ Սան Ֆրանսիսքօէն նաւային ճամբով 14,352 մղոն է, Ջրանցքին բացումովը հեռաւորութիւնը պիտի իջնայ 9,432 մղոնի, այսինքն մօտաւորապէս 5,000 մղոնի շահ մը։ Փանամայի բացումովը Պոլսոյ և Սան Ֆրանսիսքօի միջև ուղղակի նաւային յարաբերութիւն հաստատել շատ դիւրին է և մեծապէս շահաւոր պիտի ըլլայ, և հաստարակ բան մը պիտի ըլլայ Պոլիս նաւ նստիլ և Սան Ֆրանսիսքօ դուրս ելլել, և հակադարձաբար։ Այսպէս այս Ջրանցքին բացումը, թէև մեծ ծախս պիտի ըլլայ մարդկութեան մեծագոյն օրհնութիւնը։

Սան Ֆրանսիսքօ բնական դիրքով, կլիմայով և ճարտարապետութեամբ աշխարհի ամենագեղեցիկ և առաղջարար քաղաքներէն մէկն է։ 1906ի գարնան երկրաշարժէն ետքը պատահած մեծ հրդեհէն քաղաքը գրեթէ ամբողջութեամբ կործանելով, յետոյ գերմարդկային ճիգերով վերաշինուեցաւ մօտաւորապէս 500 միլիոն տալէրի ծախքով։ Վե-

բաշինուած քաղաքը աշխարհի ամենագեղեցիկ արդիական ու ճաշակաւոր քաղաքն է։ Անկախ որ փանամայի ջրանցքին բացման հետ պիտի ծնունդ նաև Սան Ֆրանսիսքօի վերաշինութիւնը որ գրեթէ ջրանցքին բացման չափ նշանաւոր է իբրև յաղթանակ մարդկային ճարտարապետութեան և ձեռնարկութեան։

—

ՓՈՔՐԻԿ ՀԱՇԻՒՆԵՐ

Երկիւղը բաւական տեղ կայ. — Առնենք մի համար Ս. Գրքէն։ Յայտ. ԻԱ. 16։ «Եւ նա քաղաքը նոյն եղէգով 12,000 ասպարէզ չափեց. անոր երկայնութիւնը ու լայնութիւնը և բարձրութիւնը հաւասար էր»։ Այս կը ներկայացնէ մեզ տարածութիւն մը որ 496,793,088,000,000,000 խորանարդ ոտք կ'ընէ։ Սուրբ կէսը ձգենք Գահուն և Առեանին համար, և անոր ալ կէսը ձգենք ճամբաններու համար։ Եւ մնացեալը 4096ով բաժնելով՝ ունենանք 16 ոտք քառակուսի պարունակութեամբ 30,321,843,750,000,000 հատ սենեակ։ Աշխարհի ներկայ բնակչութենէն հետեւցնելով թէ միշտ ունեցած է, ցարդ ունի և միշտ պիտի ունենայ 990,000,000

բնակիչ և թէ ազգ մը կը վերջանայ $33\frac{1}{3}$ տարիէն, մէկ դարու բնակիչն պիտի լինի 2,970,000,000, և նկատելով որ թէ երկիրս 100,000 տարի պիտի տեւէ, ամբողջ աշխարհի բնակչութիւնը պիտի ըլլայ 2,970,000,000,000 հոգի։ Արդ, գանք հետեւութեան, եթէ աշխարհիս նման 100 աշխարհներ ըլլան, որոնք ալ նոյնքան բնակիչ ունենան և նոյնքան տարի տեւողութիւն, այն ատեն իւրաքանչիւր անձի պիտի հինայ վերոյիշեալ ժեծութեամբ 100է աւելի սեռեակներ։

Գնդասեղի մը ոլխասկացը. — Եթէ լոկ մէկ գնդասեղ ձգուի այսօր համբարանոցի մը մէջ, և գալ շաբթու նոյն օրը 2 սեղ, և յաջորդ շաբաթը 4 հատ և այսպէս մէկ տարի այսինքն 52 շաբաթ շարունակուի, հոն պիտի համբարուի 4,503,599,627,370,495 հատ գընդասեղ։ Դիցուք թէ 200 գնդասեղը 8 տրամ կշռէ, ամբողջին ծանրութիւնը պիտի ըլլայ 628,292,358 թօնօ։ Եւ այս բեռը տեղափոխելու համար պէտք պիտի ունենանք Մեծն Արեւելք նաւուն նման 27,924 նաւերու։ Այս նաւը շինուեցաւ Ատլանտեան հեռագրապարաններըը ձգելու համար։ Եւ ունէր 680 ոտք երկայնութիւն, 83 ոտք լայնութիւն և

25 տարի թորութիւն։ Պտուտակը 4,000 ձիու ոյժ ունէր և թեւճախները 2.600 ձիու ոյժ, և տարողութիւն էր 22,500 թօնօ։

Եռիլիոն մը. — Ի՞նչ է եռիլիոն մը. պատասխանը պարզ է, միլիոն անգամ միլիոն։ Այս շատ դիւրին կը գրուի և աւելի դիւրաւ կ'արտասանուի։ Բայց ոչ ոք կրնայ համրել զայն։ Դուն մէկ վայրկեանը 160 կրնաս համրել դժուարաւ, բայց սեպենք որ 200 համրես, այն ատեն ժամը 12,000 և օրը 280,000 պիտի համրես գիշեր և ցորեկ համրելով։ Արդ 365 օրը (նահանջ տարւոյն մէկ օրը քեզի հանգիստ տալով) պիտի համրես 105,120,000։ Համարեցնք թէ Ադամ հայրիկ իր ծնած օրէն սկսեր համրել, դեռ աւարտած չպիտի ըլլար։ Ֆանկի այս հաշուով եռիլիոն մը համրելու համար պէտք է 9512 տարի, 3½ օր, 5 ժամ և 20 վայրկեան։

ՅՈՎՍԷՓ ՀԱՑԿԱՉՆ

—

ՓԻՉ Մ'ԱԼ ԼՈՒՍԹՐԱՑՈՒԹԻՒՆ

Կօշիկի ներկին լաւագոյն տեսակը ունի սա՛ յատկութիւնները. 1. անմիջապէս գոյն կուտայ. 2. կաշին ողորկ և կակուղ կը պահէ. 3. կաշին չկարծրացնէր և փտեցնէր. 4 տա-

կուն է և դիւրաւ գոնահատ չըլլար. 5. օդի և խոնաւութեան ազդեցութենէ կը պահպանէ կօշիկը, անթափանցելի ընելով զայն. 6. իր մէջ կը պարունակէ փայլեցնող յատկութիւն, ուրիշ փայլեցնող ներկի պէտք չունի. 7. ցարդ գործածուածներէն աժանն ու օգտակարն է։

Ահա զայն շինելու կերպը.

Ալքոլ 50 մաս, շէլլաք 7 մաս, թիրէմէնթինի իւղ 2 մաս, հինա եաղի ½ մաս և սեւ անելին 1 մաս։ Մեծկակ շիշի մը մէջ լեց ալքոլին կէսը, վրան աւելցուր շէլլաքը եւ հինա եաղին։ Երկրորդ շիշի մը լեց ալքոլին կէսը և վրան աւելցուր անիլինը։ Շիշերուն բերանները գոցէ ամրապէս, մինչև որ նիւթերը լաւ մը հալին։ Յետոյ լեց երկրորդ շիշին պարունակութիւնը առաջին շիշին մէջ, ցնցէ և թիրէմէնթին իւղէն քիչ քիչ վրան աւելցուր. ամէն մէկ յաւելումէ յետոյ լաւ մը ցնցելով։ Խցանով գոցէ և դիր 24 ժամ որ հանգչի։ Յետոյ անցուր բարակ կտաւէ մը և ահա ունիս վերը յիշուած ամենալաւ սեւ ներկը։ Տարբեր անելին գործածելով ուզած գոյն ներկդ կրնաս պատրաստել։ Կօշիկը մաքրէ կամ արբէ ու կատարելապէս չորնալէ

եաև քսէ ներկը կակուղ վրձինով, ապուննդով կամ կակուղ լաթով մը բարակ և հաւասար. թաղ որ չորնայ ներկը, յետոյ բրդեղէն լաթով մը շփէ։ Ա. Ա. Ս.

ԵՐԳԵՐ

ՈՐՔՆ ԵՒ ԱՌՈՒԱԿ

Որբը

Մաքուր ծընած դու պերճ ակէդ՝
Ինչո՞ւ, առուսակ իմ լուսափայլ՝
Դեռ չըհասած քու վերջակէտ՝
Պղտորած ես, դէմքդ է մըռայլ։

Առուսակ

Տիղմն ու փոշին մութ եղերքին
Ջինջ հայելիս կը պղտորեն.
Կորսուա՛ծ է սիրտս երկին,
Ջայն կը փնտռեմ պանդըխտ օրէն։

Ինչո՞ւ, մանուկ իմ քաջարի,
Մաքուր ծընած երկնից ծոցէն՝
Մըռայլ ամպեր քու տաճարի
Ներման ճակատըդ կը դոցեն։

Որբը

Վիշտն ու հոգեր այս մութ կեանքին
Պայծառ հոգիս կը պղտորեն.
Կորսուա՛ծ է տաճարս անգին,
Զայն կը փնտռեմ պանդխտօրէն։

Առուսակ

Բայց ես յանձնած աղտերս ծովուն՝
Շոգի հագած՝ կ'ելլեմ երկին,
Ու կ'ունկընդրեմ հոն շողշողուն
Աստղիկներուն վըսեմ երգին։

Որբը

Ես ալ հոգին տալով բոլոր
Վիշտերս, հոգերս տառապագին՝
Կը հեռեւիմ քեզ անմոլոր —
Ցըտեսութի՛ւն իմ առուսակին։

Մխիթար Պոնետացի
(Ց. Թ. Գայաեան)

—

ՄԱՐՏԻՐՈՍԱՑ ԿԿԵՂԵՑԻՆ

1. Ահա մի տուն բանին կենաց, և կատարում
մեր բաղձանաց,
Ահա Տաճար, ահա խորան, անդ քարոզի
Աւետարան,
Բեզ նուիրեմք, Տէր բարերար, զայս մեր
անշուք, փոքրիկ Տաճար,
Հայր, ընկալ զայս նուէր մերին, մարտիրոսաց
եկեղեցին։

—

2. Բիւրք բիւրոց Հայ նահատակաց, արիւն
թափեալ մարտիրոսաց,
Որբեւայրի հէք մայրերուն, նօթի, բոկոտն
մերկ որբերուն,
Կիսակործան մեր հայրենեաց, մոխրակուտակ
Սուրբ Տաճարաց,
Լինի կանգուն վկայ նոցին, մարտիրոսաց
եկեղեցին։

—

3. Հոն հաւաքուին մեղաւորներ, մաքով,
հոգւով տառապեալներ,
Հոն թող մտնէ պանդուխտն օտար, շնորհաց
գահին դիմէ ճարտար,
Կոտրած սրտերն հոս կազդուրին, ծարուածն
հասնի կենաց ջրին,

Տէր դուն օրհնէ շնորհօքդ վերին, մարտիրոսաց եկեղեցին։

—

4. Թող աստխմբեալք վեր բարձրանան, որպէս կաղնիք ի Լիբանան,
Ջենեալ գառին զենեալ զինուորք, գօտեպնդիւ հոգւոյդ շնորհօք,
Կենաց բանին քալ պաշտօնեայք, հագնին զգեստ ճշմարտութեան,
Եւ յաճախողք ցնծան, բերկրին, մարտիրոսաց եկեղեցին։

վեր. Հ. Գ. Բարսկեան †

—

ԾՆՈՒՆԴԻՆ ՅԱՐՄԱՐ ՆՈՒԷՐԸ

Հայրիկը մեզի Ծնունդին համար,
Պուպրիկ, խաղալիք, գիրք, միրգ ու շաքար,
Սիրուն նկարներ գնեց գունաւոր.
Ինչ կար թէ Ծնունդ ըլլար ամէն օր։

Հապա ինչ նուէր, հայրիկը, վերգին,
Բերած է գիտե՞ս, անուշ մայրիկին,
Ծնունդի օրուան վայելուչ յարմար,
Պարգեւ մը սիրուն նաեւ մեզ համար։

Այսօր հայրիկը, շուկայէն առաւօն,
Պէպէք մ'է բերած թօմպուլ ու ժպտուն,

Որ չը նմանիր ինձ համար գնուած
Կեղծ պուպրիկներուն անձայն ու անլաց։

Ճիշդ այսօր, Ցիսուս մանուկն ալ, վ՚երդի՛ն,
Մսուրի մը մէջ պառկած է ցրտին,
Ի՛նչ չքնաղ յուշիկ, բարեդէպ, յարմար,
— Անուննն ալ Ցիսուս դնենք, քո՛յր, չըլլա՞ր։

Գօնեա Ակիւլինէ

—

ԽԱ՞ՉԸ ԹԷ ԽԱՉԵՒԼԸ

Յաւի անհուն պրկուածներով գալարուն,
Սէր-ջրվէժէն վարդակարմիր տաք արիւն
Մինչ կը ցայտէ ժայթքուածներով ուղիօրէն,
Կողէն, ճակտէն, սուրբ ձեռներէն, ոտներէն։

Յաւի խաչին տուայտագին լկանքէն,
Լեռներ, ձորեր ցուրտ դամբաններ կ՚ողբերգեն,
Արեւն անգամ սարսափահար ամթի կէղ
Ամպ քօղի տակ փութայ ծածկել իր երես։

Գեթսեմեանի խաչավէրքին քով կանգուն,
Երկու–չիմայ իմաստուններ ինքզինքնուն,
Աստուածաբան վարդապետի տուած հով,
Կը վիճէին հրաբորբոք եռանդով։

Թէ՝ «ի՛նչ քան էրկայնքն ու երկայնքը խաչին» —
Ոակի, ործաթի խաչ ալ բռնած ձեռուընին,

Սպառնական, խրոխտ ժեստով մ'ամբարտաւան,
Ամէն ըրած գէնք, պատրաստ գլուխ պառկելու։

Մինչդեռ պէտք էր յառիլ ոչ թէ քաջ փայտին,
Այլ ԽԱՉԵԱԼԻՆ, Անոր սիրոյն վշտագին,
Ձափել խորը սէր–վէրքերուն վարդածիր,
Յամառօրէն նզեռ կը վիճին անձամբիր.—
«Ինչո՞ւ թէ մայրէ փայտերէն»,
«Ձարչարանքին իրրա գործիքը չիներ են»։

Հայկազուն Խաւիարեան
(Ակիւլիւե)

—

ՄՈՒՐԱՅԻԿ ԱՂՋԻԿԸ

Պզտիկ աղջիկ մ'է մուրացկան
Որ քիչ մը հաց կ'ուզէ ձենէ.
Տուէք անմեղ խեղճ աղջկան,
Տուէք, տուէք, անօթի է։
Իմ խնդիրքըս դուք մի մերժէք,
Աղէկ գիտէք ինչո՞ւ համար.
Վեց տարուս եմ. չունիմ ես մայր,
Անօթի եմ ինձ գթացէք։

Երկիւ գեղին մէջ հանդէս կար,
Բնաւ մէկուն միտքէն չանցայ,

Բառեր էին շուքին տակ պար,
Ափսո՛ս, ես բան մ'ալ չի կերայ.
Ներեցէ՛ք ինձ եթէ կ'ուշիմ.
Ուշացա հաց է. ո՛չ ուրիշ բան.
Փիչիկ մը հաց է բաւական.
Ա՛խ մի չսխէք, անօթի եմ։

Չելլա՛ք կարծէք որ չեմ դիտեր
Որ տառապանք քաշել պարտիմ.
Սակայն ես շատ պզտիկ եմ դեռ,
Ա՛խ մի թողուք որ ես մեռնիմ։
Տուէք, տուէք խեղճ պզտիկին,
Չեղի համար ան կ'աղօթէ.
Տուէ՛ք տուէ՛ք, անօթի է,
Աստուած կուտայ ձեղի կրկին։

ԿՐԹԱԿԱՆ

ՇԱՐԺՈՒՄ

(Փրոֆ. Ց. Թ. Գալեանեան)

Կեանքի առաջին պայմանը շարժուն է։ Արեւելքի հանրածանօթ դանդաղաշարժու-

թեան առջև պէտք է այլեւս դնել խոշոր վերջակէտ մը։ Ինքական արտաշարժութիւնը, շնչհալութեամբ մը համեմուած, թեթեւսոլիկութիւն մը սեպուելու չէ այլեւս։

Մարմնամարզը պէտք է մեւտանէ մեր աղջկանց ըոլոր վարժարաններուն մէջ։ Մարմնա-




մարզի գործիքներ շատ օգտակար են զանոնք... շինող ու ծախողներուն, քիչ մըն ալ՝ կանոնաւոր ու յարատեւ գործածողներուն։ Լաւագոյն մարմնամարզն է ու պիտի մնայ լաց օդի մէջ խաղը, վազքը, երկար պտոյտը, ուղիղ գնացքը, վերջապէս և ամենէն աւելի

աշխատանքն ու զուարթամտութիւնը։ «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» Շատոնց ի վեր տիրող խօսք մ'է, որուն մէջ ճշմարտութիւն կայ։ Մենք առողջ աղջիկներ կ'ուզենք սերունդը առողջ պահելու և աւելի դեղեցկացնելու համար միայն. հաւատալով որ ուղեղին բնախօսական զարգացումն ալ անբաժին չպիտի մնայ մարմնական մարզանքին բարիքներէն, եթէ սա չափաւորութեամբ կատարուի, որովհետև մարմինին արտակարգ զարգացումը յաճախ տեղի կ'ունենայ ի վնաս մտքին ու բարոյականին։ Անցաղակի ըսենք որ ասիկայ ճշմարիտ է նաև արական սերունդին համար. մարմնամարզի ծայրայեղութեան յանձնուած է մլշտ բարքերու կոշտացում մը, բաց ասոր, ի ծնե հակայներն ալ, օրինակ յաղթամարմին խաղախները, ոչ մտքուր բարոյականութեամբ մը կրնան պարծիլ, ոչ ալ աչքի պարնող մտաւորականութեամբ մը։ Մանտրտիկ ձափոնցիները սակայն կրնան պարծիլ այդ առաւելութիւններով ու նաև ֆիզիքական ուժով։ Հին Հռոմը իր անկումը կը պարտի չափազանց մարմնապաշտութեան։ Հնութենէն մեզի ուրիշ հետաքրքրաշարժ վկայութիւն մը աւանդած է Եւրիպիդէս.

«Ատելիքէն մէջ դէշ մարդիկ շատ կան, բայց ամենայոռի ատահականերն ըմբիշներն են։»

Օրիորդներու դատախարակութեան վրայ խօսուած ատեն, սովորութիւն է անոր գործնական կողմն ալ չօշափել։ Մենք չենք ապաւեր որ վարժարաններն իրենց ներկայ վիճակին մէջ մեզի տանտիկիններ տան, բայց կ'ուզենք որ օրիորդներն հոն կարելի եղածին չափ գործն ալ վարժուին և աշխատանքը սիրեն, նախատ բանաւոր կ'ըլլայ, եթէ, աւելորդ դասեր ղեղչուելով, աղջիկները կոնուխ հասակէն առնէ ուներնային կանոնաւոր կերպով իրենց մօր ձեռքին տակ ընտանեկան գործեր ալ սովրելու և նոյնը շարունակելու նաև դիշերօթիկ վարժարաններու մէջ։ Ինքնագործութեան և անկախութեան չառաջնորդող դատախարակութիւն մը ապահովաբար կ'առաջնորդէ մեղկացումի և անբարոյացումի։ Ցիշողութիւնը ապարդիւնօրէն չսրչկելու հին դրութեան տեղը բռնելու է կամքին դատախարակութիւնը, մկանուներուն մարզանքը և աշխատանքին պաշտամունքը։



Վեր. Հ. Կիրակոս Բարակեան *

ՏԵՍԱՐԱՆ ԴԱՌՆ ԽԱՉԻՆ
ԵՒ ՓԱՌԱՑՆ ՓՐԿԶԻՆ

Մի քաշեր խոր քուն, լե՛ր քաջ ու արթուն,
ո՛վ մեղաւոր դուն,
Գընա՛ Գողգոթայ, տե՛ս Հոն մօտակայ,
Խաչին վրայ ինչ կայ.

Չէ ինչ բնական, կախաղան է ան,
Ինչ խեղճ տեսարան,
Բարձրը կ'երեւայ, գագաթին վրըայ,
մէկն արիւն լեւայ,
Դէմքին է վայելուչ, անխօս անտրտունջ,
կեցած լուռ և մունջ,
Խռնեալ բազմամիւխ, «խաչեա՛ ըսին թող»,
ծակեցին իւր կող,
Աչքն է կիսաբաց, վիրը վար կախած,
մէջ ուսաղակաց,
Մօր գլխոյն գալիք, կար սրտաճմլիկ,
որդին մէկ հատիկ,
Զարկեն մատնեցաւ, կրեց վիշտ ու ցաւ,
ի խաչ բարձրացաւ,
Մեղքը չափն առաւ, ամէն բան եղաւ,
զոհ մեղաց մեռաւ,
Արեգ ծածկեց լոյս, լոյսը տուաւ խոյս,
դիւտողք են անյոյս,
Է՞ր երկիր թնդաց, երկինք որոտաց,
գերեզմանք են բաց,
Սոսկալի է բան, մարմինք կ'երեւնան,
որք շատոնց մեռան,
Վարագոյրն պատռած, դռներն են բացուած,
Յոյն-հեթանոսաց,
Դէպք են ահարկու, չեն մէկ ու երկու,
անլուշտ կան խորհուրդք,

Եղան ամէն ջանք, կատարեցան բանք,
մրցեցան մահ, կեանք։
Խաչին վրայ իրաւ, անմեղն որ մեռաւ,
մեղքը վարձքն առաւ,
Մահուամբ մեռաւ մահ, չկայ մահու միջոց,
մնրդաս եղաւ անմահ.
Մեռան մահն ու մեղք, ինկան Սատան, դևք,
բուժեցան մեր վէրք,
Չի էր թանկագին, պատուական անգին,
աս օրհնեալ հոգին։
Երբ մահուամբ մեռաւ, վեր երկինք թռաւ,
մեծ անուն առաւ,
Չէր այս մեղապարտ, չունէր բիծ, արատ,
անմեղ էր, անպարտ։
Արդար Տէր Աստուած, օրէնք էր դրած
մահ էր մեղքիդ վարձք,
Քու մեղքերդ առին, խաչ անէծք տարին
Անոր վրայ դրին։
Անհունն ալ վերջն, ընդունեց իրեն,
այս մեծ փոխարէնն,
Եղաւ նա արդար, օրինաց դադար,
տիրեց շնորհաց դար,
Զքեզնաց մեղ պարտք, միշտ երագ, արագ,
առնել պատարագ,
Չի, խաչեալն Քիստոս, եղաւ կեանք ու յոյս,
աչաց, մտաց լոյս։

Բաւեց մեղք յանցանք, արբեց խղճմտանք,
ալ չունի վտանգ,
Հաւատա՛, սիրէ՛, սիրտըդ նուիրէ,
որ քեզ կեանք տիրէ,
Սիրով կըրէ խաչ, մի փախիր ձախ, յաջ,
Խաչով կ'ելլաս քաջ։
Կեցիր խաչին տակ, չես ելլեր դատարկ,
Խաչէն հոտքն է թագ։
Մեղաւոր կանգ առ, տես Յիսուսն արդար,
առին խաչէն վար,
Տարին դրին ղպին, Արիմաթացի առն,
Յարուցաւ գերեզմանն
Որ նոր էր շինուած, քարէ էր փորուած
Հոն մարդ չէր դրուած,
Տէրն եղաւ անտես, թուեցաւ այնպէս,
Թէ ալ չկայ մեզ,
Երեք օր կեցան, լրտերու նմանն,
Յիսուս ու Յովհաննն,
Անխըռով, անդորր, Յովհան ձկան փոր,
Յիսուս երկրիս խոր,
Արդ Մեկշաբթուն լոյս, բերաւ արշալոյս,
յարեաւ Տէր Յիսուս,
Երբ եկան կանայք, հաւատացեալ սիկնայք,
տեսան անդ հրեշտակք,
Բարձր էր գլորուած, գերեզմանն բացուած,
պահապանք խռոված,

Հրեշտակն կը գոչէր թէ «Յիսուս ողջ էր,
մեռելոց հետ չէր»,
Գընաց Գալիլեայ, ըլ, կանխած է նա,
սիրելեաց նորա,
Արդ դուք ո՛վ կանայք, դուք որ նախ կերթաք,
արդիլեալ ճաշակ,
Ահա լուրն ալ առէք, դուք, շուտով տարէք,
«Տէրն յարեաւ ըսէք»։
Չէ այս ծածուկ, դաղտ, Յիսուս է անյաղթ,
ալ դուք չէք դժբաղդ,
Տէրն ըրաւ հրամանն, թէ մեռեալք համայն,
պիտ՝ կենդանանան,
Գերեզմանք տուին, պատուղն առաջին,
մարմինն փրկչին,
Զայս կարդաց հրեշտակ, հատան Աւետեալք,
գտան անդ դատարկ,
Անոնք ալ առին պատգամն հրեշտակին,
ճիշդ նման նմին։
Նոյն այս միջոցին, Մագդաղենացին,
կայնած տեսաւ մին,
Կարծեց պահպանն էր, հարցուց «Տէրն ո՛ւր էր,
ո՞ր տեղն էր դրեր»,
Փառաց Տէրն իսկ այն, տուաւ պատասխան,
կոչեց ո՛վ Մա՛րիամ,
Հոս մի՛ տնտնար, դու հոս մի կենար,
եղբարցը լուր տար»,

«Ըթե տեսի լոյս, իմ հաւատքս, իմ յոյս,
Նոյն Քրիստոս Յիսուս,
Կուգայ Գալիլեայ, որ հոն ձեզ տեսնայ,
Յետոյ համբառնայ,»
Մարիամ ապշեցաւ, ցնծութ բերկրեցաւ,
Խնդութ ու լացաւ,
Լուան հաւատացեալք, կալմեցին խմլուկ,
Գոչեցին դռնակք,
Խորհուրդ խոր խորհին, խորհիլ խիստ խրթին,
Խաւարեալ խմբին
Մտաւ մին Յովկարծ, դուռը չբացուած,
Ե մեղմիւ ասաց,
«Խաղաղութիւն ձեզ, ինս գրկողին պէս,
առաքեմ զձեզ,
«Տամ ձեզ զօրութիւն, և իշխանութիւն,
Ընորհիւ Սուրբ Հոգւոյն,
«Եկէք ինձ հասէք, ձեռքերս, կողս տեսէք,
որ երթաք ըսէք,
Լսեցինք, տեսանք, քննեցինք, գիտցանք,
ապա խօսեցանք,
Ո՛վ հօտըդ սկար, պատգամը զայս առ,
Համայն աշխարհ տար,
Թէ Յիսուս մեռաւ, բայց շուտով յարեաւ,
մեզ ցնծութ բերաւ,
Հոս չէր այս անգամ, անհաւատ անդամն,
սակայն միւս անգամ,

Զը մընաց անմաս, հաւատաց Թովմաս,
եղաւ խելահաս,
Թըւով մեռաւան, նոքա ալ տեսան,
երկնայինն փեսան,
Մինչ օր մ'ալ գընաց, լեռն Զիթենեաց,
համարձաւ յանկարծ,
Վա՜մ տեսարան, շքեղ, աննման,
խաչ ու մահ չէ ան,
Ո՛վ խեղճ մեղաւոր, լեր դու մերձաւոր,
տեսլեանն փառաւոր,
Գնաց վեր հրամանն, հրեշտակաց համայն
որ պատրաստ ըլլան,
Ձոճան նիզակ, տէգ, սլանան Սերովբէք,
Թուչին Քերովբէք,
Օ՛ն. ի խինթ, ի պար սըրինգ, փող, քընար։
հնչեն անդադար,
Մեծ խումբեր կազմեն, կարգ, օրէնք պահեն,
որ շուտ արշաւեն,
Կառքեր լուսավառ, հրեղէն երիվար,
իջած են աշխարհ,
Յայնժամ Գաբրիէլ, և մեծ Միքայէլ ըսին,
«Է վայել,
Իակոն մենք ճարտար, առնենք խումբ և պար,
իջնենք դէպ ի վար,
Հնչեցին համայն, փողերն միաձայն,
ազդարարութեան,

Երկինք եւս թռուն, հասան գուն ի գուն,
Էակք զուսպ ուն,
Հրեշտակաց համայն, քաղցրահնչիւն ձայն,
Եկեալ համաձայն,
Պար մեծ խմբելով, նոր երգ երգելով,
ուրախ դէմքերով,
Անթիւ թիւերով, վեցթեւեանք թիւով,
թեթև թռելով,
Սըլացան յաշխարհ, դէպ ի լեառն Ճարատար,
ուր որ Յիսուս կար,
Հրեշտակք երկնային, էակք լուսածին,
յերկրէ վե՛ր երկինք,
Գով քաւի կեցան, իբրև ծիածան,
թափոր կազմուեցան,
Անուշ քաղցրաձայն, հոգեղինաց ձայն,
մեղմ ու համաձայն,
Երգեց դաս ու կարգ, պանչելի շարք,
նոր պատիւ նոր փառք,
Ջեռնեալ Գառնուկին, յաղթող էակին,
կրկին ու կրկին,
Ցայնժամ փառաց Տէր, իւր վերջին պատուէր,
տուաւ եւս վեր,
Ամպով պատեցաւ, փառաց կառք հեծաւ,
երկինք բարձրացաւ,
Աշակերտք վախցան, աչք տնկած կեցան,
մինչ եղաւ մի ձայն,

Լուսազգեստ մի զոյգ, սուրբ պատգամաւոր,
ըսին «Ընդէր դուք,
Իբր անգէտ, անուս, կ'ընէք տարակոյս,
Հայիք վէր անյոյս,
Ձեր հաւատք, ձեր լոյս, վէմն ու խրոխտոյս,
Տէր Քրիստոս Յիսուս,
Ձիշդ եւածլին պէս, պիտի գայ առ ձեզ,
փառաւոր այսպէս,
Ըսին մեծ փութով, վերացան շուտով,
սուրբ հանդէսին քով,
Հանդէ՞ս բերկրա՛լի, յոյժ ուրախալի,
ցնցուղեամբ է լի,
Ամէնն հագուստ նուրբ, ճերմակ հեհէղ սուրբ,
գոչէն սուրբ, սուրբ, սուրբ.
Սուրբ Աստուած և մարդ, երկնից փառքն ու
զարդ, հզօր մարաջախտ,
Արեգակն արդար, կենաց հաց և ծառ,
ո՛ անարատ գառ,
Անակիզը, անվերջ, կանթեղ լոյս անշէջ,
տիեզերաց վէջ,
Ովսաննա խաչին, Տէր Յիսուս Փրկչին,
մեր վեհ Արարչին,
Փառք անուանդ Տէր, յերկիր յերկինս վեր,
ալէլուիաներ,
Երկնայինքս մենք, կ'օրհնենք ու կ'երգենք
քեզ կ'երկրպագենք.

Ցայնժամ Հայրն փառաց, մեծ փառքով
ասաց. «Ով Որդիդ Աստուած,
Լոյսն իմ էութեան, կանգնիչ մարդկութեան,
անկեալ ընութեան,
Բաղդը և հաճելի, սիրուն ցանկալի, սիրտս
սիրով է լի.
Աւդիդ կթեցիր, հնձանն լեցուցիր, մինաւոր
կոխեցիր։»
«Այո՛, Հայր բարի, այս վեհ դործն արի,
միայնակ ըրի
«Կամքդ կատարս տարի, ես մնհուատմբ ըրի,
գիտութիւնն գերի
«Խաչը յանձն առի, որ վճիռդ չտրի,
մարդս ապրի ձրի,
«Անձնական զոհուս, ահա եկի հաս, լինել
բարեխոս
«Աշխարհիս համայն, բայց փրկել միայն,
նոքա որ հաւատան.
«Արդ կ'աղաչեմ՝ ես, Հա՛յր, կ'ընդունի՞ս ներս,
զիս և իմիններս,
«Կաց ինձ մրցանակ, միշտ և շարունակ,
յաղթողաց ալ թագ։»
«Այո՛, հոս մտիր, Որդիդ իմ ընտիր, հանգիս-
տըս մտիր,
«Տուի քեզ այսօր, փառաց մեծ աթոռ,
նի՛ստ ընդ յաջմէ հօր,

«Մինչ կատարուի բանն, թշնամիքդ ըլլան,
ոտիցդ պատուանդան,
«Տիրե՛ դուն երկնից, երկրիս բոլորից,
աղգաց համայնից,
«Դատե՛ մարդիկ, դեւք, թագաւորք և
պետք, և սանդարամետք,
«Նոյն իսկ Քեզ է անկ, բեր մոլար ոչխարք,
ըրէ ինձ ժառանգ.
«Կ'ընդունեիմ ես այն, արդեամբ քոյ արեան,
քաւութիւն միայն,
«Նուիրեցի արդ, քեզ թագ ծաղկազարդ,
ո՛վ Դու Աստուած-մարդ.
«Յայնժամ գոչեցին, դարձեալ և կրկին,
երկիր ու երկին,
«Փառք մեծ Աստուծոյն, Հօրն և իւր Որդւոյն
և Սրբոյ Հոգւոյն,
«Մի Աստուածութեան, Սուրբ Երրորդութեան, միշտ և յաւիտեան.
«Ցոյս, լոյս թող առնեն, մեղաւորք ամէն,
այս տեսարանէն»:

ՕԳՏԱԿԱՐ ԱՍԱՑՈՒԱԾՔ

Լաւ է քնաւ չճանչնալ զբարին քան ճանչնալ և առնել զայն։

—

Տեսանել զճշմարտութիւն և մերժել զայն, ակիզբն է անյուսութեան։

—

Մարդը իր անկեալ վիճակին մէջ պահելով, անկէ ազատութիւն և առաքինի սիրտ ակնկալելը, անկոփնի ծառայող անկարացեալ հիւանդէն աշխատութիւն ակնկալելու կը նմանի։

—

Ցոփին յոյժ օգտակար է, երբ պէտք եղած կերպովը կը գործածուի՝ գոլորշին վանելով անիւը ճարտարութեամբ կը մղէ նաւը քնդդէմ հակառակ հողմոց։ Այսպէս կեանք մը, թէպէտ լինի տկար, բայց երբ գիտութեամբ ամբարեալ է և իմաստութեամբ կը գործածուի, զօրութիւն կը յաւելու, օգտակար է այլոց, և կը հաղորդէ լոյս և երջանկութիւն։

—

Մաճուր բարոյականութեան և ճշմարիտ կրթութեան մէկ ատոյգ և հարազատ նշանը լեզուի և ոճի մաքրութիւնն է։

—

Քաղցրութիւնը սիրելի և ցանկալի է մեզի, երբ միացեալ է ըզբութեան հետ, և որ աւելին է, որչափ մեծ ըլլայ ըզբութիւնը, նոյնչափ անոյշ և հրապուրիչ կ'ըլլայ քաղցրութիւնը։

—

Ծնողաց բարի օրինակը, տղայոց մանքին մէջ արմատ կը ձգէ, ու աճելով դեղեցիկ բոզբոջներ կ'արձակէ։

—

Ինքգինքն ուսումնական ձեռացնող իմաստակը կը նմանի այն հնակարկատին, որուն քով ամէն տեսակ կաշիի կտորներ կը գըտնուին, բայց տրբողջ բնաւ։

—

Ծրաժեստութիւնը կը կազմէ տիեզերական լեզու մը, որով ամէն ազգի մարդիկ կրնան միատեղ երգել, որչափ գժտաբերին ալ ըլլայ անոնց իրարու հետ խօսիլ։ Եւ երկու տեսի և ամէն հասակի անձինք կրնան ցուցնել անով իրենց սրտի և մտաց յոյզերն համադիպաբար։

—

Ծժիւկին տուած փոքրիկ դեղահատը թէև դառն ու թունաքառն, սյլ սահմանուած է կուլ տալու։ Նախատինքները կեանքի դեղահատներն են, կլլելու է ղանոնք քաջութեամբ։

—

Վէրքի կակիծը՝ անմիջապէս, իսկ վիշտինը վայրկեաններ վերջը կը զգաս։

—

Մահը կենսական պէտք մը կը ընէ, կեանքի թերի կողմերը պարտկելով։

—

Մահը երկինքի չբացատրուած կայծակն է, որուն շանթարգելը երբեք պիտի չգտնուի։

—

Աճեաներ՝ հազուադէպ, իսկ յիշատակներ կը յարգուին՝ ամէն։

—

Բանականութիւն և փորձառութիւն երկուքն ալ թոյլ չեն տար մեզ ենթադրել թէ, անձնական կամ ազգային բարոյականութիւն կրնայ պահուիլ առանց կրօնի։

—

Ինչպէս կայ կենսական կապակցութիւն ծառի մը արմատին և իր յառաջ բերած պաղղին միջեւ, այնպէս կայ կենսական կա-

պակցութիւն մարդու մը հաւատացածին և իր բնաւորութեանն ու գործոցը մէջտեղ։

—

Ոսին կաւելէն կեղեւը պատառելով, աշխարհային նեղ հաշիւներէ վե՛ր բարձրանալ, թշուառին տառապանքը իր անձին մէջ զգալ, անո՛ր ցաւովը տոչորուիլ, ու անո՛ր արցունքը լալ, զրկել թափով մը ջանադիր ըլլալ երջանիկ ու առաքինի կեանքի մը պատրաստել զմարդիկ՝ ազատ ցաւէ ու վշտէ, — ա՛յս եղած է մեծ մարդոց կեանքը։

—

Թաղէս Փրիատոսէ 7 դար առաջ ապրեցաւ. փիլիսոփայ մ՚էր. նաև շատ իմաստուն ասացուածքներ ունի։ «Ծանիր զքեզ», նախ և առաջ անոր շրթունքէն արտասանուած է։ Ուրիշ իմաստուն խօսք մ՚է սա. «Սակաւախօսութիւնն առաղջ դատողութեան նշան է»։ Դարձեալ — «Իմաստութիւն փընտռէ, առով շատախօսներուն բերանը կրնաս գոցել»։ Նորէն. «Զի՛ք ինչ գեղեցկագոյն քան զաշխարհ»։ Նաև այս. «Կարօտութիւնը սմեռնազօր է, քանզի կը յաղթէ ամէն դժուարութեանց»։ Նա է որ ըսած է. «Ժամանակը ամենէն խելացին է, քանզի ամէն բան կը յայտնէ ու կը հնարէ»։

ՉԱՆԱՉԱՆՔ

Խալամաց Մարգարէին ձեռագիրներու գիւտը. — *Կը ծանուցուի թէ յոյժ հետաքրքրաշարժ գիւտ մը եղած է մանաւանդ ետնաբերու կողմանէ, որք կը քննեն այժմ Եգիպտոսի մէջ գտնուած Բաբիրոսի հնաւաքածոն։ Մեծ դուքս Րէյնըը գնած է այդ հնաւաքածոն և մանաւանդ մարգարէին ձեռագիր նամակները գտած են ատոնց մէջ։*

—

**Ս. Եւսեբեան Ափրիկէի մէջ Հոգւոյ անուն մարդ մը օձի թոյնի ա՛յնչափ վարժուեր է որ՝ օրը քանի մը թունաւոր օձ կը կլլէ և այս տարօրինակ արուեստովն ապրուստը կը ճարէ։ Ամէն օր առաւօտները ճարտարութեամբ օձեր կը բռնէ, կը լեցունէ վզէն կախուած պայուսակին մէջ, և փողոց փողոց շրջելով՝ ի տես հասարակութեան կը կլլէ. կլլած օձին մեծութեան համեմատութեամբ պարգև կը ստանայ 3-5 ղրուշ։ Ամէն օր թունաւոր օձեր կը խածնեն զինքը, բայց Հոգ չընէր։ Կան օձեր*

որ կլլուելէն ետքը մարդուն ստամոքսին մէջ բաղում ժամանակ կ'ապրին, և ահա այս պատճառաւ կը նեղուի խեղճ մարդը, և ի վերջոյ սորս ալ հնարը գտեր է. — քափուր կը գործածէ սատկեցնելու համար։

—

Պրասի, սոխի, սխտորի հոտերը ո'րքան գարշահոտ են և մեղ անհանդիստ կ'ընեն, ընդհակառակը Թաթարիստանի կանանց մօտ է'ն հաճոյ անուշահոտութեանց տեղ ընդունուած են։ Անոնք իրենց հրապոյրը աւելցնելու համար նոր կտրտուած սոխի կտորով իրենց մարմինը ամբողջ կը շփչեն։ Ճաշակներու այլայլանութիւն։

—

240 թոնս կատուի պոչ... բեռցուեցաւ Հավրէն դէպ ի Պուէնոս-Այրէս, ծառայելու համար սեւուկ Հոթանթացի կանանց թուալէքին...: Հասարակ կատուի մը պոչը կը կշռէ 50 կրամ, որով 4,800,000 պոչ պէտք եղաւ 240 թոնս ապրանք արտադրելու այդ սեւուհիներուն զարդին համար։

—

Ռովանդակ աշխարհի վրայ շատ ժամանապրելու երկիրն է Աւստրալիա, և առած ի

կարգ անցած է Անգղիացւոց մէջ։ Այս կղզին ամբողջ Եւրոպիոյ չափ մեծ է, և աղքատաց բնակութեան յարմար։ Ամենաքնաիր մեռնի օխան՝ 2 ղրուշի կը վաճառուի։ Արմտիք ու կանանջեղինք ալ շատ ժամն։ Առաջնակարգ ճաշարանի մը մէջ 3 ղրուշով կը տրուին պնակ մը խորոված միս, պնակ մը կանանչեղէն, հաց, կարագ, թէյ։ Սպասաւորաց պարգև տալու սովորութիւն չկայ. բայց շա՛տ են սպասաւորաց վարձքերը. հարիւր ֆրանքէն պակաս չըլլար։

—

Եօր Չելանտայի Օգլանտ գիւղին մէջ էբենէսէր անուն մէկը, թղթատարական պաշտօնեայ, 15 տարի առաջ երկու ձեռքերը կորսընցուցած ըլլալով, անկէց ի վեր ոտքերով կ'աշխատի եղեր։ Ոտքերովն արագաբար կը գրէ, դրամ կը համրէ, նամակներու վրայ թղթադրոշմ կը փակցունէ, պատառաքաղ դանակ և ծանր բաներ դիւրութեամբ կը գործածէ։

Փրանսա 2,864 000 շուն կը պահէ, այն է 74 հատ 1000 բնակիչի վրայ. Գերմանիա 2,455,000, Անգլիա 1,440,000, Ռուսիա և

Միացեալ Նահանգ էն քիչ շուն ունին Թուրքիա՞ . . .

—

Լոնտոն մազի էն մեծ վաճառատեղին է, տարին 150,000 ոսկիի առուտուր կընէ մազի վրայ, կարող գործակալ մը տարին 20-2500 ֆր. կրնայ շահիլ իբր մազի հայթայթիչ։ Ֆրանսական կեղծամ մը 110 կրամ կը կշռէ. Իտալականը 185, Գերմանականը 190. գործակալները կայցելեն, Ֆրանսա, Գերմանիա, Զուիցերիա նոյն իսկ Չին, մազ հաւաքելու համար։ Ֆրանսա սև և թուխ մազ կը հայթայթէ, Գերմանիա և Հիւս. Եւրոպա ոսկեդեղին. խարտեաշ և ճերմակ մազերը մեծ արժէք ունին։

—

Կրօսման նաւապետը տեսակ մը մուճակ հնարած է ծովու վրայ քաշելու համար և Դանուբի մէկ եղերքէն միւսը անցեր է անով. մուճակը երկու մէդր երկայն է։

—

Տոֆդ. Թիսօ գործիք մ՚է հնարած, որով կոյրերը պիտի կրնան գրել և նկարել։

—

Փօլինա գեանի միջոցավ Հաղորդելի անթել հեռագիրն գտած է, 2000 մէդր հեռա-

Հոլոքթեան մէջ կատարած փորձերն յաջողած են։

—

Ֆէլլըր *լամպար մը հնարած է որ կերգէ, կը խօսի, և բուսական հեռուն կեցող մարդու մը խօսքերը կը կրկնէ։*

—

Անգլ. *Բարակ շուրջը մէկ վայրկեանը 1250 մէդր կը վազէ, ձին 1160, ընձուղտը 909, վագրը 860, եղջերուն 850, դիպլը 570։*

—

Ֆրթաբեր *աղաւնին թռչնոց մէջ 1200 մէդր կը սլանայ մէկ վայրկեանը, ձկնկուլ թռչունը 1130։*

—

Էն *արագ լողացող ձուկն է ծովախոզը, 31 1/2 քիլոմէդը մէկ ժամու մէջ, թիւնիկը 15 ծովային մղոն, կարմրախայտը 13 մղոն, տաւրեխը 12 մղոն, կէտ ձուկը 14 մղոն, Հակառակ իր մարմնոյ ահագին ծաւալին և ծանրութեան*

ՉՈՒԱՐՃԱԼԻՔ

Փառատաքան. — Կը խնդրեմ, մեղմացուցիչ պարագան լաւ պատմեմ իմ պաշտպանեալիս համար. նա միայն երկու շապիկի կոճակ է գողցած, քանի որ նոյն գղրոցին մէջ գըտնուած զուտ ոսկիէ ժամացոյցին չէ դպած։

(Ամբաստանեալը դառն արցունքով լալ կը սկսի.)

Դատաւոր. — Ինչո՞ւ կուլաս մարդ։

Ամբաստանեալը. — «Ոսկիէ ժամացոյցը չտեսնելուս համար»։

—

Ուսուցիչ. — Ամէն մարդու պարտքն է շաբթի շաբաթ դոնէ մէկ հոգի երջանիկ ընել. քանի՞ հատ, Յակոբիկ դուռ այսպէս ըրած ես։

Յակոբիկ. — Ա՛յո՛։

Ուսուցիչ. — Ապրիս, տղա՛ս, պատմէ նայիմ։

Յակոբիկ. — Մօրաքրոջս կայցելեմ և ան կ'ուրախանայ երբ նորէն տունս կ'երթամ։

—

Ա. Ինչէ՞ն կեղրակացնէք թէ այս շաւնը սիկինէ մը դողցուած է։

Բ. Որովհետեւ երբ հաս կը բերէի, ամէն նորաձեւութեան եւ դլխարկի վաճառատան առջին կը կենար եւ ներս կը նայէր։

—

Կինը. — Ֆեզի չարտաճճիկ. տեսնեմ այդ նամակը.

Ա.յրը. — Ո՞ր նամակը, կնիկ.

Կինը. — Այն որ հիմա գրպանդ դրիր. վատահ եմ որ կին մը գրած է, հապա էին դիրը տեսայ, եւ դուն երբ կը կարդայիր դէմ դեղին եղար։

Ա.յրը. — Ցքրաւի՛. առ կարդա՛. քու արդուզարդի առարկաներուդ հաշուեցոյցն է, որ ինձի ղրկեր են վճարելու համար։

—

Երկու Գերմաններ, 3 շիշ գինի խմելով լաւ մը սրբեցան. սահմանագլուխի մաքսատան առջեւէն անցնել պէտք եղաւ։ Անոնց մին մաքսապետին ներկայանալով ըսաւ, «3 շիշ գինիի մաքս պիտի վճարենք»։ «Ուր է գինին,» հարցուց մաքսապետը։ «Փորերնուս մէջն է» դոչեցին երկու արբեցեալները։ Մաքսապետը ակնոցը լաւ մը տեղաւորեց քիթին

վրայ, եւ իբր թէ կանոնագիրքը ուսումնասիրելով, ըսաւ, «Տակառի մէջ եղած գինին մաքան է 20 ֆր., շիշերու մէջ եղածները 48 ֆր., իսկ իշու մորթէ շինուած տիկերու (թաւլում) մէջ պահուած գինին համար մաքս չպահանջուիր. ազատ էք, պարոններ ճամբանիդ շարունակելու»։

—

Բանախօսութեան մը առթիւ, փրօֆէսօր մը ըսաւ թէ «Ամերիկայի մէջ այրերուն թիւը կիներէն շատ աւելի է», եւ կատակի համար յարեց. «կը յանձնարարեմ կիներուն հոն գաղթել։» Ունկնդիր տիկիններէն մին զայրանալով ելաւ և աղմուկով հեռացաւ սրահէն։ Փրօֆէսօրը հառաչեն գոչեց, «Տիկին, այդքան աճապարելու հարկ չկայ, շոգենաւը դեռ ճամբայ չելլէր։»

—

Ակյեցու. — Հրանտ, մայրիկդ տո՞ւն է.

— Հրանտ. — «Աննային հարցուցէք, եթէ հաճիք։»

Ակյեցու — «Է՛հ, դուն ալ չե՞ս կրնար նոյնը ըսել։»

Հրանտ. — «Ո՛չ, սուտ ըսելու չեմ, մայրիկը ըսաւ որ, եթէ սուտ ըսեմ սարսափելի ծեծ պիտի ուտեմ։»

—

Գեղեցիկ այր մարդ մը, օդափոխութեան համար, ծովեզերեայ հոթել մը կը բնակէր։ Օր մը պատշգամը նստած պահուն կին մը, իր վեց տարեկան որդւոյն հետ, պատշգամը ելաւ. աղան մարդուն քով նստելով սկսաւ հետը խօսակցիլ և հարցուց «Ինչ է ձեր անունը. ամուսնացա՞ծ էք»։ «Ոչ», «Ամուսնացած չեմ տղաս» ըսաւ, մարդը խնդալով։ Տղան անմիջապէս մօրը քով վազեց ու ըսաւ. «Մայրիկ, ուրիշ ինչ հարցնելու եմ մարդուն»։

—

Մեծն Ֆրէտրիք կայսեր ներկայացաւ Աստուածապանութեան ընդհանուրաւրէն մը եկեղեցւոյ մը մէջ պաշտօն ստանալու համար։

«Ո՞ւր տեղացի ես», հարցուց կայսրը։ —

«Պէրլինցի եմ», պատասխանեց երիտասարդը։

«Վա՛յ, անոնք բոլորն ալ խարեբայ էն», գոչեց կայսրը զղուանօք»։

«Ներեցէք, Վեհափառ Տէր», ըսաւ երիտասարդը, «միայն երկու բացառութեամբ»։

«Ո՞վ են այդ երկու անկեղծ անձինքը,» հարցուց կայսրը հետաքրքրուելով։

— «Ձեր Վեհափառութիւնը ու ես, ծառանիդ»։

Թագաւորը գոհ մնալով այս պատասխանէն եկեղեցիի մը քարոզիչ կարգեց երիտասարդը։

—

Անգլիացի ղեօսաշրջիկ մը Գալիլեայի ծովուն եզերքը հասնելով մակուկավարէն կը խնդրէ միւս կողմն անցնել զինքը, ու կը հարցընէ թէ «ինչ պէտք է վճարել»։

— «Քսան ֆրանք» կ'ըսէ նաւավարը։

— «Քսա՜ն ֆր.» կը գոչէ Անգլիացին, եւ կը յաւելու, «Չիմա՞ կը հասկնամ թէ ի՛նչու համար մեր Տէր Յիսուս Քրիստոս այս ծովուն վրայէն միշտ քալելով կ'անցնէր։

—

Յաճախորդ.— «Քանի տարի է որ դեղագործ էք»։

Դեղագործ.— «18 տարի»

Յաճախորդ. — Քննութիւն տուած էք».

Դեղագործ. — «Անշուշտ»

Յաճախորդ. — «Ուրեմն տիպլոմ ունիք»

Դեղագործ. «Ինչ ըսել է»։

Յաճախորդ. — «Անանկ է նէ սրճեփոք սովրած էք. ուստի 10 փարայի կլիսէրին տուր

—

Գօնսիւքթէօր. — 60-70 տարեկան մարդ ես ու փոքր աղու տոմնակ ես տուեր. չ՛օգ ամաչէր։

Հրէան. — «Ինչո՞ւ ամչնամ, դուն չե՞ս գիտեր որ Հրէաները Իսրայէլի ժողովուրդը կը կոչուին»։

—

Տղա՛ս, կըսէ մայրը փոքրիկ Հրանտին, Աստուած ամէն տեղ է և կը տեսնէ մեր բոլոր ըրածներըն, կը տեսնէ նաև երբ դուն շաքար կը գաղնաս։

Հրանտ սենեակին մէջ առանձին և շաքարին տուփը հրապուրիչ կերպով սեղանին վրայ է։ Ձեռքերը կը մեցնէ և կ'ողջմէ. «Սիրելի Աստուած, կը խնդրեմ սենեակէն քիչ մը դուրս ելլիր և երբ «Հրամմեցէք» ըսեմ նորէն ներս եկուր»։ Տուփը կը բանայ, շաքարը կ'ուտէ և «Ներս հրամմեցէք» կը գոչէ։ Մայրը միւս սենեակէն այս բոլորը կ'լսէ, եւ ներս մտնելով Հրանտ մի առ մի կը պատմէ անոր եղելութիւնը։ Չէ՞ որ չափահասներն իսկ Աստուծոյ ներկայութենէն ազատ կարծելով ինքզինքնին մեղաց կը ծառայեն։

ՄՐՁԱՆԱԿԱՒՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ


1913 ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑԻ

(Պատմանաժամ 1 Մայիս 1913)

1.


* * * Այս 9 աստղերուն 2ին դիրքը փոխէ և 10 ուղիղ
* * * գիծ քաշէ, որոնք միշտ երեք աստղեր միմեանց մի-
* * * ացնելու են։

2.




Հայր մը պարտէզին մէկ եղերքը իր անձնական տունը ունէր. ինքը 4 որդի ունէր, իւրաքանչիւրին տասաս պարտէզին մէկ չորրորդը, բայց իմա՛, 4 կտորն ալ միանձև և միածաւալ։ Արդ վերի ձեւին 20 լուցկիններէն զատ քեզի 8 լուցկի ալ կուտանք, որպէսզի պարտէզը 4 միանձև ու միածաւալ մասերու բաժնես։

3.




Տուն պարտեզին մէջտեղն է. կուզեմ պարտէզս տանս չորս անկիւններն փոխադրել 4 հաւասարաչափ և միանձև քառակուսիներու վերածելով. ասոր այս կուտամ ձեզի 4 լուցկի ալ, որ 20 լուցկի ունենալով կարենաս այս փոխոխութիւնը ընել։

4.



Այս 18 լուցկիներն տեղափոխելով կազմել վեց հատ հաւասարակողմ եռանկիւն, մէկ հաւասարակողմ վեցանկիւնի մը շուրջը։

5.



Այս 28 լուցկիէ բաղկացեալ ձեւը 4 հաւասարակողմ քառակուսիի վերածել լուցկիներուն 8 հատը տեղափոխելով։

6.

1	2	3	4	5	6
1	2	3	4	5	6
1	2	3	4	5	6
1	2	3	4	5	6
1	2	3	4	5	6
1	2	3	4	5	6

Միայն այս 1-6 թուանշանները գործածելով այն քառակուսիները մէջ, գումարն պիտի ըլլայ 21, վերէն վար, ձախէ աջ և անկիւնէ անկիւն։

7.

Պարզ մի հարցում. տեսանենք ո՞վ պիտի
յաջողի պատասխանել. ահաւասիկ.
Ոտից վրայ երբ կանգնիմ,
Աբժէքս ի՛նչ որ է այն է.
Իսկ երբ վեր ի վար շրջիմ
Աբժէքս կէս առ կէս մեծ է։

8.

Մենք երկու զոյգ ենք տարբեր էակներ
Ձեւով և տեսքով, ապրելակերպով.
Երբ, ասկայն, առնենք միմիանց գլուխները,
կարծես ան ատեն, իբր թէ հրաշքով,
Փոխանցուին մեզի թէ՛ առլորութիւն
Եւ թէ քնկերին յատուկ բնութիւն,

9.

ՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿ
ՀՕՅ ՏԱՐՒ ԳՐԻՍՏՈՍԷ ԱՌԱՋ

Հայր մը ունի 12 որդի, որոնց իւրաքանչիւրն ունի երկու այտեր, մին սպիտակ մին սեւ. այս աղջիկները զիրար բնաւ չեն տեսներ և շատ կարճ կեանք ունին, միայն 24 ժամ։

10

Քանի՜ էորս Հայ անձնասուրութեանց անունները տալ, որոնք Ազգին ու և է օգտակար

ծառայութիւն մատուցած են. նկատելի նաև թէ ի՛նչ է եղած անոնց մատուցած ծառայութիւնը։ Համառօտ պէտք է ըլլայ յօդուածը 50—60 կարգէ ոչ աւելի

—

Օրացոյցիս 1912ի խնդիրներն լուծողներուն մէջէն քանէն ատոնք նշանակեալ անձանց յատկացուց մրցանակներն. —

Ա. մրցանակ Յ. Գ. Ղազարեան, Պիրէճիք.
Բ. » Ա. Բ. Հիւրմիւզեան, Կեսարիա.
Գ. » Ե. Թ. Մկրտիչեան, Տիարպէքիր
Դ. » Ա. Վ. Կէօզիւպէօյիւքեան, Վառնա.
Ե. » Ա. Մուրատեան, Կ. Պոլիս.

Մայիսի առաջին օրն իրկոյ Անտիոքցի որբուհիներ, Զապէլ և Ովսաննա, հազիւ հինգ տարեկան, քանէներն հանեցին տուփէն, և ըստ այնմ կազմուեցաւ վերի ցուցակը։

Իւրաքանչիւր պարտի պահանջել մեզմէ իր մրցանակը էրզուրումէն, որուշ հապճեպ թուղտաձև մեզի հաղորդելով, եթէ ոչ կը մնան մրցանակներն մեր քով, մինչև պահանջուին մեր յանձնարարած կերպով։

Խմբագրութիւն
Հանրագիտական Օրացոյցի

ՄՐՑՄԱՆ ՏՈՄՍ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ՕՐԱՑՈՑԻ

1913

2
դահեկան

Սոյն տոմսը կտրելով ու վրան երկու դահեկանի Օսմանեան ճամակադրոշմ փակցնելով կը խրկեմ խնդիրները լուծման հետ:

Անուն .....

Հասցէ .....

ԾԱՆԱՒՑՈՒՄՆԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ

Ի ՊՐՈՒՍԱ

(Գ. ՊԱԳՏԱՍԱՐԵԱՆ)

Սոյն հատուածը կատարեցաւ 1875ի մեծ ամրան — գահերը քէպիր — առթիւ, երբ Արեւելեան նահանգներն, նախախնամութեան սոյն խարազանին ներքեւ, ահռելի վիճակի մատնուած էին, Հալածաւորք, բիւրաւորք անօթութեան զոհ կերթային. այլք արմատներով, տերեւներով իրենց քաղցն յագեցնել կը փորձէին ու կմախքներու վերածեալ ուրուականներու նման հոս հոն կը թափառէին, Պրուսա ալ լեցուած էր այսպիսի մեռելանման տարագներով, որք կանայք և մանաւանդ երկաեռ մինկտիք, որք դեռնէ դուռ դիմելով պատառ մը չորաբեկ հաց կը խնդրէին, իրենց կենաց ապառած հիւթին անուն ու մարելու մօտ եղող կենաց ճրագին ձէթի կաթիլ մը տալու համար, որ պահ

մ՝ալ շարունակէր պլպլալ մինչև մարէր վերջապէս։ Նոյն տարին Պրուսա եկած ու հաստատուած լլլալով, աղեխարշ տեսարանին ամէն օր ականատես լլլալ ստիպուած էի, և ականջներս կը լսէին անոնց արտաշարժ դգայացունց աղաղակն, երբ «հաց» , «հաց» կը գոչէին։ Դեռատի երկսեռ մանկանց ցնցոտիներու մէջ պարուրուած կիսամերկ մարմիններն, դալկահար դէմքն և աղերսական նուաղկոտ ձայնը միշտ աչաց և ականջներուս միջոցով վեր ի վայր կը յուզէր զգայուն սըրտեր, մանաւանդ անոնց ապառնացող բարոյական անկման ահռելի վտանգը մտահոգութեան կը մատնէր դիտողին զգացումներն։ Օր մը բարեկամի մը հանդիպելով ուղեցի թէ այս ահռելի վիճակին հանդէպ անտարբեր կենալ անհնար է ու մեղադրելի, պէտք է ճար, ճարակ ընել և գոնէ դեռատիներն մատամբ մը պատսպարել և պաշտպանել։ Նոյն զգացումն կը կրէր նաև մեր բարեկամը և իրաւացի էր ըլլած դիտողութիւնը և տուած պատասխանը։ Նա ըսաւ. լաւ. պէտք է բան մը ընել, սակայն դրամով կ՝ըլլայ այդ, ոչ դուն և ոչ ես ունինք դրամ։ Պատասխանեցի թէ շիտակ է որ արծաթ և ոսկի չունինք, բայց զոր ինչ ու-

նինք, ի բաց առեալ դրամէ, զոյն պարտինք տալ, յօգուտ և ի փրկութիւն անկեալ և տառապեալ մարդկութեան։ Բարեկամներ ունինք, ըսէ, մանաւանդ արտասահմանի մէջ. կրնանք անոնց դիմել։ Բարեկամն չհամզուեցաւ. չունէր յոյս որ կը յաջողի անէ դիմումի, ուստի բաժնուեցանք ի միմիանց։ Անմիջապէս գրաւոր դիմում մ՚ըրի արտասահմանի մէկ ծանօթի անձնասիրութեան և մի քանի շաբաթէն ընդունեցի 1500 ֆրանքի փոխգիր մը և նամակ մը. — «Բա՛ց Որբանոց մը և մենք ըստ կարի պիտի սդնենք»։ Նոյն տարւոյն — 1875— Յուլիս 1ին բացինք Արևելեան Որբանոցն երկու փոքր սենեակ ունեցող խարխուլ տնակի մը մէջ մէկ հատ փոքրիկ Հայ որբուհիով մը, «Լուսիկ» անուանով. սոյն «փոքրիկ լոյսը», հետզհետէ ընդունելով պէտք եղած ձէթը, օր քան զօր զօրացաւ, մեծցաւ, պայծառացաւ և այսօր 38 տարի է որ դեռ կայ և մնայ և իր լոյս կ՚արձակէ ամէն ու ձախ, հեռուն և մօտ։

Օրացոյցիս անցուկ էջերը չեն թղլատրեր արեւելեան Ուբանոցի ընդարձակ պատմութիւնը ընել, գուցե օր մը, երբ այս նպատակի յատուկ դրամ ունենանք, հրատարակենք այսպիսի մի պատմութիւն պատկերազարդ.

առ այժմ կը բաւէ դիտնալ թէ այն 38 տարիներուն մէջ 1000ի մօտ երկաթ մանկունք պատսպարուած, խնամուած, կրթուած և դաստիարակուած են հաստատութեանս մէջ և քիչ շատ բարեկեցիկ ապագայ մը ապահովուած են իրենց, Ընթանցքն ելլելէ առեւ, Աւետանց աղգութեան, յարանուանութեան և կրօնի խտիր դնելու միշտ ընդունած ենք ամենքն, կարօտն և թշուառն, Օսմ: Հայրենեաց 35է տարի քաղաքներէ և գիւղերէ, որքան որ ներած է մեր դրամական վիճակ, Զուներնք և չենք ունեցած, այս 38 տարիներու մէջ, ոևէ ընկերութիւն որ մեզի օգնէ, ո՛չ ալ կանոնաւոր, որոշ հատոյթ կամ եկամուտ մը տրամադրելի. ոչ, ոչ երբեք, Մեր դրամագլուխն է եղած նախ և առաջ հաւատք առ Ամենակարող Հայրն համայն մարդկութեան, ապա ջանք և անձնուէր աշխատութիւն և երբորդ անվեհեր, անվախ յարատեւութիւն, միշտ կուրծ տալով դժուարութեանց, հալածանաց, թշնամութեանց և նախանձու, Ո և է ձեռնարկի ալ յաջողութիւնը ատոնցմով միայն ապահովուած է:

Անցեալ 38 տարիներուն մէջ միջին հաշուով ամէն տարի իբր 1000 Օսմ. ոսկի հա-

ւաքուած է, բնիկ ու արուսքին օգնութիւն-
ներով, մեր 20է աւելի հրատարակութեանց,
մանաւանդ Հանրագիտական Օրացոյցի հա-
սոյթներով, շերամապուծութեամբ, ձեռա-
գործներու վաճառումով և երբեմն նուա-
գահանդէսներով և ներկայացումներով։ Ու-
նինք ընդարձակ պարտէզներ քաղաքիս ամե-
նագեղատեսիլ, օդասուն և առողջարար մա-
սին մէջ, Ողիմպոսի ստորոտը, պէտք եղած
շէնքերովը, որոնք կայսերական Պէրլոթով
«որբոց վոֆֆ» են հաչակուած, ուսոի կրնան
իրաւ ընդունիլ առանց ոևէ կասկածի։ Ար-
դէն Ակնցի հանգուցեալ Տիկին Եադութ —
ոջին բնիկ իրաւն ըրած է, տասն ոսկի տո-
կոսաբեր։ Կը յուսանք որ սոյն բարի տիկինը
իր բարի օրինակին հետևողներ կ'ունենայ։
Աստուածհմանէ փոքր կտակներ միշտ եղած
են և կըլլան։ Ո՛վ պիտի ըլլայ երկրորդ բնիկ
կտակարարը։ Ջմռանանք յիշել որ Հայկական
Ջարդերէն, առաջինէն մինչև վերջինը՝ Կիլի-
կիոյինը — Աստուած տայ որ չերթա՜է Վեր-
ջինը ըլլայ — Աստանոյի և Անթիոքի 30 որ-
բերը ի միասին, իրր 200 անհնոյ Ջարդուած ու
նահատակեալ Հայոց որբերն ընդունած են։
Վստահ ենք որ Օրացոյցիս ընթերցողք կը

նպաստեն այն բարեգործական հաստատութեան հետեւեալ կերպերուն մին կամ միւսն գործադրելով. —

1. Կոչել և անմոռացնել իր անուն և հիշատակ։

2. Ծանօթներու մէկ օրուընայ գնել պոլ։

3. Տարածել ձեր հրատարակութիւնները լսատկարելոյն։

4. Փոքրիկ, ընտանեկան, ընկերական հանդէսներ սարքել ի նպաստ Արեւելեան Որբանոցին։

5. Հաճոյական խաղեր ունինք տրամադրելի, ուզել մեզմէ և կը խրկենք ձրիապէս, Ս. Ծննդեան և Ս. Զատկի առթիւ գործածելի։

ԱՅՆ ՏԱՐԻՆ ՈՐ ԱՌԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՆՑՆԻ ԿՈՐՍՈՒԱԾ ՏԱՐԻ Մ'Է. ՄԻՇՏ ՅԻՇԵԼ ՋԱՅՍ.

—

Հարճէ նշանակել նպաստի գումարը, գրէ պոլսոյ անուն և մականուն և բնակավայրդ, յանձնէ գրամը տեղւոյդ նամակատան որ Մանուա-Իօսէֆով մեզի հասցնէ զայն. կամ ապահովագրեալ նամակով կրնաս նամակադրոշմ և փոխ-դիր խրկել գրամի տեղ։

Նուիրատումը կրնէ և խրկէ մեր հասցէին։

Աստուած յօժարակամ տուողը կը սիրէ. Բ. Կորն. Թ, ՞:

ՆՈՒԻՐԱՏՈՒ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ
1913

Ներկայ տարուան Նուէրս ..... դահեկան հաճեցէք ընդունիլ ի նպաստ Արեւելեան Որբանոցի պատսպարելոց, զոր կը խրկեմ Մանուաքօսթով, նիւթական նամակագրօմով, փոխ-գրով: *

Նուիրատու .....

Հասցէ .....

* Հարկ եղած կերպերէն միայն ընտրել և միւս երկուքը ջնջել։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Վ. Եր. Սահակ Ութիւնեան, ծնած է 1823 Յունուար 29ին, Կ. Պոլսոյ Լանկայի թաղը։ Կրտսերագոյնն է երեք եղբայրներու, որոնց երեքն ալ ձեռնադրուած են իբր պաշտոնեայ Հայ Աւետ. եկեղեցւոյ։ Երիցագոյնը, Վեր. Աբիսողոմ Իւթիւճեան, տաղանդաւոր երաժիշտ և զարգացեալ ուսուցիչ, Բրիտոնէական չքնաղ նկարագրի տէր և ջերմեռանդ հաւատացեալ առաջին երեցը եղած է Հայաստանեաց Աւետ. եկեղեցւոյ։ Երկրորդ եղբայրը, Վեր. Սիմոն Իւթիւճեան, անոր յաջորդած է իբր հովիւ այս եկեղեցիին՝ դժուարին պարագաներու ներքեւ հաւատարմութեամբ վարելով իր պաշտօնը։ Եկեղեցւոյ կազմակերպութեանը ժամանակ Վեր. Սահակ, Յուլիս 23 տարեկան, իր բաժինը ունեցած է այդ պատմական շարժումին մէջ։ Նոյն ժամանակ ընդունուած է Տր. Համլինի Պէպէքի ձեմարանին մէջ իբր այն հաստատութեան առաջին ուսանողներէն մին։ Հոն իր ուսումը առնելէ յետոյ տարի մը



ՎԵՐ. ՍՏԵՓԱՆ ԻՒԹԻՒՃԵԱՆ

դասատու եղած է Բերայի մէջ, յետոյ հրաւիրուած է Պրուսայի եկեղեցւոյ հովուութեան պաշտօնին և հոն ձեռնադրուած է 1831 Օգոստ 31ին։ Նոյն տարին ամուսնացած է Օր. Սրբուհի Փեշտիմալճեանի հետ՝ Պրուսայի մէջ Վ. եր. Իւթիւճեանի գացած ժամանակ մեծ և պզտիկ 21 հոգի տան մը մէջ կը հաւաքուէին Աւետ. պաշտօն կատարելու։ Տասնըմէկ տարի եղբը, անոր Պոլիս վերադարձած ատեն հոն կը թողու վայելուչ եկեղեցւոյ շէնք մը, ընդարձակ երիցատուն մը, դպրոց մը և տուաւել քան 200 հոգիէ բաղկացեալ ժողովուրդ մը։ Այդ ժողովուրդը մինչեւ վերջը յիշած է զոյն և անոր ամուսինը, Տիկ. Սրբուհի Իւթիւճեան, իրենց ցուցուցած անձնուէր ջանքերուն համար ողբգուբանք և երախտագիտութեամբ։ Իսկ Տէմիր Տաշի, Պիւէճիկի և ուրիշ մօտակայ վայրերու մէջ Աւետ. գործ սկսած և յառաջացած է Պատ. Ստեփանի ջանքերով, և այդ տեղի եկեղեցիները զոյն իրենց հայր դիտեն։ Պրուսայէ վերադարձին Պոլսոյ մէջ ժրաջան աշխատութեամբ քարոզած է Սկիւտարի, Խասգիւղի Լանկայի և ուրիշ տեղերու մէջ. ժամանակ մը աշխատակցած է Ա-էպոբէրի խմբագրութեան, անդամ

կարգուած է պետութեան կրթական խորհուրդին և վերչապէս հիմնած և վարած է Բէ–բէն Հանդէսը, հակառակ անհամար բարոյական և նիւթական դժուարութիւններուն՝ մինչեւ 1896 սեւ տարին և յետոյ դարձեալ ժամանակ մը մինչեւ 1905։ Ա.յս բոլոր միջոցին հանգուցեալը նշանաւոր հանդիսացած է իր խոհեմութեամբը, անկեղծ հաւատքովը, աքսընչելի ժրաջանութեամբը և հին, Հայոց յատուկ, տոկունութեամբը և չարքաշութեամբը։


Իսկ «Բէ–բէն»ի, իր սրտին սիրելի եղած թերթին դադարումէն յետոյ, երբ իր կեանքի ընկերէն բաժնուած՝ Սաղմոսերգուին 80ամեայ կեանքի սահմանը անցած կը քաշուի հրապարակային ասպարէզէն և իր տունը կ'առանձնանայ՝ այդ ղարմանալի ծերունին, որ արժանացած էր այլ եւս անխռով հանգիստ մը վայելելու իրաւունքին, դարձեալ կը գտնէ իր վերջին օրերուն արժանաւոր աշխատութիւնը և յոգնաջան վաստակով կը սկսի և ի գլուխ կը հանէ զայն, Հայ ազգին մէջ Աւետարերծին ծագման և ընթացքին պատմութիւնը յօրինելով։ Աւա՛ղ որ այդ գործը իր կեանքին մէջ հրատարակուած տեսնելու ուրա-

թուխթիւնը չուներցաւ, երբ Քրիստոնէական հանդարտ և երջանիկ մնոհով մը կը փակէր աչքերը իր քարոզած Քրիստին հանգիստը մըտնելու համար։

Ուրախ եմ հրապարակաւ ծանուցանելու թէ իր որդին յանձն առած է հրատարակել այդ պատմութիւնը ի յիշատակ իր բարեհամբաւ հօր։ Ես բարերաղդութիւնը ունեցայ կարդալու այդ ձեռագիրը՝ դողդոջուն ձեռքով, այլ պայծառ մտքով ու անվեհեր սրտով գրուած։ Երբ լոյս տեսնէ այն և ամենքդ ալ կարդաք՝ պիտի տեսնէք գործ մը որ արժանաւոր վախճանը և պսակն է բազում տարիներու պատուական և պատմական աշխատութեանց։ Հոն Հայ. Աւետ. շարժման հիմնադիրներուն վերջինը կը բացատրէ այն շարժման ոգին և կը կտակէ զայն ներկայ սերունդին։

Ա. Պ. Շահաւունեան


Վեր. Պ. Ա. Թօփալեան, ծնեալ ի Մարաշ 1862 փետր. 20ին. Հայրը ձեռնադրեալ սարկաւագ է, և 85 տարեկան ըլլալով դեռ Շէքերտէրէի եկեղեցին մէջ կը պաշտօնավարէ։ «Հայրս՝ աղքատ» ըլլալով իմ 5 եղ-



Վ.ԵՐ. Պ. Ա. ԹՕՓՈՒԼԵԱՆ


ղայրներէս՝ միայն եռ դպրոց յաճախած եմ. 1886 ին ալ Ա.ինդապի Գօլէճէն ընթացա-ւարտ ըլլալով 1889 ին Մարաշի Ատուածա-բանական ճեմարանէ ընթացաւարտ եղած եմ. նոյն տարի ամուսնանալով Պիւրէճիքի եկեղեցին քարոզիչ կարգուեցայ. հոն 2 տարի պաշտօնավարելէ ետև 1891 ին Ատանա հաս-տատուեցայ, ուր 7 տարի իբր քարոզիչ և 9 տարի ալ իբր ձեռնադրեալ Հովիւ պաշտօ-նավարելէ ետև՝ 1907 ին Ա.ինդապի Հայկ եկեղեցին հրաւէրն ընդունեցի և 3 տարի ալ հոն պաշտօնավարեցի. 1909 ին այն ահաւոր ջարդէն, որով իմ պաշտօնակիցներս ղՀ գացին, ես հրաշքով ազատեցայ և անոնց նահա-տակումով թափուր մնացած եկեղեցիներն այցելելու նուիրեցի իմ՝ անձս, թէև Ա.ինթապի մեծադոյն և ամենահարուստ եկեղեցին հր-րաւէր ընդունած էի. Անկէ ի վեր Ատանայի և Հաճընի ջարդէն այրնացեալ և որբացեալ եկեղեցիներն կ'այցելեմ։»

Յ. Գ. Ա.յս պատուական անձը ոյն կեն-սագրութիւնը Օրացոյցիս խրկելէ ետև, Յու-լիսի սկիզբը վախճանած է Ա.ինթապի մէջ։



Վ. ԵՐ. Ց. Ս. ԵՐԱՆԵԱՆ

Վեր. Ց. Ս. Երանեան, Բնիկ Մա-
րաշցի և ծնեալ 1855 Դեկ. 13ին։ 1872ին Մա-
րաշի «գիշերային դպրոցին» 2 տարի աշա-
կերտած է, ամէն գիշեր, 3½ ժամ ուսման
հետեւելով։ Յետոյ 3 տարի եւս Բարձր. Վար-
ժարանին աշակերտելէ ետեւ, Կիւրիւմճէ ա-
նուն Յոյն գիւղի մը քարոզիչ-ուսուցիչ է կար-
գուած 1 տարի. մէկ տարի ալ Այնթապի
Գօլէճին ուսման ընթացքին հետեւելէ ետեւ,
եկած Պատան անուն Հայ գիւղին ուսուցիչ-
քարոզիչ է եղած 1 տարի։ Ապա 4 տարի
Մարաշի Աստուածաբանական ճեմարանի ա-
շակերտելէ ետեւ, 1885ին Թարսուսի Աւետ.
եկեղեցիին 5 տարի քարոզիչ է եղած. 1890—
1903 Ափիոն Գարահիսարի Աւետ. եկեղեցիին
քարոզիչ է եղած, և 1903 Ապրիլ 19ին
Զմիւռնիայի մէջ ձեռնադրութիւնը կատար-
ուելով անկէ ի վեր իր քաղաքին եկեղեցիին
ձեռնադրեալ հովիւն է և անդուգական յա-
ջողութեամբ կը պաշտօնավարէ։ Վեր. Յ. Ս.
Երանեանի ջանքերով 1500 սակի հաւաքուե-
լով հոյակապ եկեղեցին, երէցատունը և վար-
ժարանը կառուցուած և 1911ին, Մայիս-
ղարդի կիրակի օրը, հոծ բազմութեան ներ-
կայութեան, անոր Նաւակատեաց Հանդէսը




կատարուած է վ. եր. Յ. Ս. Երանեան 30 տարիէ ի վեր անձանձիր և անընդհատ կը նպաստէ Աբեւելեան Որբանոցին, իր ժողովուրդէն նուէրներ հաւաքելով ու Որբանոցին հրատարակութիւնները դրամի վերածելով։ Կը մաղթենք Որբանոցին՝ բազում այսպիսի բարեջան, յարատեւող և անձանձիր բարերարներ, սատարներ ու պաշտպաններ։

Վ. եր. Հ. Մ. Օիրակոսեան։ «Ծնած եմ 1837ին, Արապկերի վանք գիւղին մէջ։

Իմ նախնական ուսումս այս փոքրիկ գիւղին մէջ սուած եմ։ 18 տարեկան հասակիս մէջ Պրուսա գացի, 55 տարիի չափ սուաջ, այն մեծ երկրաշարժէն երկու ամիս վերջը, որ դեռ կը շարունակէր երբոր մենք հոն հասանք։

Բոլոր Պրուսան տակն ու վրայ եղած էր. 366 մինարէներուն ամէնքն ալ ջախջախուած էր։ Սէտ Պաշիի Բողոքականաց ժողովարանը փլած էր, ակսեցին շինել, որուն մէջ ես ալ միակութիւն ըրած եմ։

Տարի ու կէս Պրուսա կենալէս ղկնի, տուն վերադարձայ. երկու տարիի չափ տունը կեցայ։ Այդ միջոցին Խորբերդ Աստուածաբանական դպրոց մը բացուեցաւ. մեր Արաբ-



ՎԵՐ. Հ. Մ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

BIBLIOTECA

կերի Միսիոնարը, Մր. Ինչարտսընը, պիս այդ դպրոցը խրկեց. 1859ին դպրոցը մնաց, 1863 ընդ ացաւարտ եղաւ, և Մալաթիա քարոզիչ գացի։ Երեք տարի քարոզելէս վերջը՝ Հովիւ ձեռնադրուեցայ։ 100 տունէ բաղկացեալ եկեղեցիս 25 տարի անկախ էր, սակայն ջարդերու տակն մեր ժողովուրդին 60 հոգի զոհ-նուեցան։ Համիտ նիւթական և բարոյական զէնքերնիս հիմնայատակ ըրաւ, եւ գիս ալ 6 ամիս բանտարկեցին, իբր թէ ես եղած եմ պատճառ այդ ջարդին։

Աստուծոյ ողորմութեամբը բանտէն ելայ, և մեր ողջ մնացած և ցիր ու ցան եղածները ջանացի հաւաքել ու հաւաքեցի նորէն ժողովուրդի մը կերպարանք առաւ։

Այսպէս դէպքին երբը 9 տարի եւս պաշտօնս շարունակեցի, և բոլոր ժամանակը 42 տարի անընդհատ պաշտօնավարելէս ետքն, պարագաները այնպէս պահանջեցին, և 1904ին Ամերիկա եկայ իմ երեք մանչ զաւակներուս քով։ Հոս ալ տակն կողմերէն հրաւէր կուգար որ քարոզեմ, մինչեւ այսօր ալ այնպէս է։ Մինչեւ Գալիֆօրնիա գացի, հոն 8 տարի կեցայ և հոն ալ մեծ ընդունելութեան գտայ, սիրեցի և սիրուեցայ։

Եւ որովհետեւ իմ մեծ փափաքս է որ մինչեւ վերջին շունչս Փրկչիս Աւետարանը քարոզեմ, կը մաղթեմ որ Տէրը իմ անցեալ, ներկայ և ապագայ բոլոր ջանքերս օրհնէ, և արդիւնաւոր ընէ։»

Պատ. Հայկազուն Ս. Խանդամուրեան. «Աննշան քաղաք մը՝ կիւրին ծննդավայրս. աղէտալի թուական մը՝ 1874ին։ Համիտի գահակալութեան օրերուն եղած է ծնունդս։ Աղկոզկ ու փափուկ լրան մը՝ կարճ թողով հասակս շատ բան պակսեցուցած է անուշիս համբյքէն, ու կոչումիս աղդեցութենէն։ Մեծ կեդրոն մը՝ Ամասիա. կ. Թ. Գոլէճ՝ կրթավայրս, 1908ին շրջանաւարտի վկայականը տուած է ձեռքս։ Ապերախտ ընտրութիւն մը՝ ուսուցչութիւն և երկու տարիէ ի վեր քարոզչութիւն, եղած են ապարդէղս։ Հայերէն լեզուն եղած է ուսուցմանս առարկան և ինքնօգնութիւնը՝ Հայերէնի մշակութեանս ուսուցիչս։ Մարզուան՝ ուր եմ՝ Ամասիոյ ազանական ընթացքս, բայց Բրօֆ. Յ. Գրիգորեան եղած է Ամասիոյ վարդապետս, և Վեր. Մ. Փափազեան մեծատիպար քարոզիչս՝ որոնց կը պարտիմ ներշն-



ՊԱՏ. ՀԱՅԿԱԶՈՒՆ Ս. ԽԱՆԴԱՄՈՒՐԵԱՆ
(Ակիւլիւճ)

չուաներուս մեծագոյն բաժինը՝ Աստուածմէ եղբայր։

Հալէպի բանտը եղած է փորձառութիւններուս դպրոցը՝ 1894ին, և Սեբաստիոյ գիշերօթիկ դպրոցի կեանքը՝ բանտը վանականութեան և ճգնաւորութեան, 1889—1893։ Պաշտօնավայրերս եղած են Կիւրին տարի մը՝ երբ բարձրագոյն վարժարանէն (Սեբաստիոյ) շրջանաւարտ եղայ։ տարիի մը չափ Եւդոկիա երբ ուսուցիչ, երբ Ա.ՀՆԹ-ապէն շրջանաւարտ էի։ Հինգ տարի Ամասիա Իրթանասեան առեւտրական վարժարանին մէջ, հինգ տարի Գոնիա, ձէնանեան Գոլէճի մէջ, երբ Մարզուանոյ Աստուածաբանականէն ելայ։ Սակայն նախախնամութիւնը թոյլ չտուաւ գործակից ըլլալու մեծ տնօրէնին — Տօքթ. Ա. Հայկազեանին-երկար տարիներ, և դիս տնակնկալօրէն վտարեց Եգիպտոս իր գործին մէջ աշխատելու երբ քարոզիչ Գահիրէի Հայ-Աւետարանական եկեղեցիին մէջ։

Գրական երկասիրութեան մը ծնունդ տուած չեմ, սակայն կնքահայրը եղած եմ երկու գրքոյկներու յառաջաբաններըը գրելով։ Աղաւաչունչ քերթուածներու հաւաքածոս Համիտեան ատրատիէն գողտհար զոհ եղաւ

կրակին։ Իսկ կրօնաշունչ բանաստեղծութիւններս ցրցքնուած են հոս հոն, մասնաւորաբար Բիւրակնի և Աւետարերի մէջ, և վերջերս կոչնակի մէջ։ Քաջալերութեան և գնահատութեան պատկը զոր կ'ղգամ դիտելով անտարբեր վերաբերումը բանաստեղծութեան հանդէպ, համարձակութիւն չտար ինձ հրատարակութեան տալու անտիպ քերթուածներուս, և մանկական տրամախօսութիւններուս մէկ հատորքածոն։ Հիմա դրական և քաղաքական դարու մը մէջ կապրինք։ Մարդ պէտք է փոխիթ ըլլոսութիւն ընէ։ Ոտանաւորը փոր չկշտացներ»։

Վ. Եր. Մ. Պ. Տամպուրաճեան. Ազգաւոր ու անուս բոյց քրիստոնեայ ծնողաց զաւակ, ծնեալ է 1860 Փետր. 14ին Խարբերդի Իչմէ գիւղը։ 1882 Յուլիս 13ին Խարբերդի «Արմենիա Գօլէճի» ընթացաւարտից մինն է եղած, նոյն տարւոյ Օգոստոսի մէջ Բաղէշի տղայոց Բարձր. Վարժարանի դաստիարակութեան և քարոզչութեան է հրաւիրուած. Ականջի մէջ ալ 1 տարի պաշտօնավարելէ ետեւ 1886ին Խարբերդ վերադարձած և 8 ամիս Աստուածաբանական ձեմարանի դա-



ՎԵՐ. Մ. Պ. ՏԱՄՊՈՒՐԱՃԵԱՆ

աթոռութեանց հետեւած է. ապա 2 տարի Մուշի մէջ կը պաշտօնավարէ, իսկ 1889ի ի վեր 23 տարի է որ Թէհրանի մէջ կը պաշտօնավարէ։ 1893 Նոյ 17ին Արեւելեան Պարսկաստանի շրջիկ Աւետարանիչ ձեռնադրուած է, և 1898ի ի վեր իբր 14 տարի է որ Ս. Գիրք ցրուելով և Պարսկերէն քարոզելով զբաղած է, իբր գործակատար Ամերիկեան Աստուածաշունչի ընկերութեան։ 1910ին արտօնուեցաւ այցելել Թուրքիոյ Հայ Աւետ. եկեղեցիներն, և ամէն տարի 5—8 ամիս արտօնեալ է Թէհրանէ դուրս Արեւելեան և Հիւսիսային Պարսկաստան շրջիլ, Ս. Գիրք ծախելով և քարոզելով։

Վ֊եր. Մ. Պ. Տամպուրաճեան եւս Արեւելեան Որբանոցի ա՛յն աստուածներէն մին է, որ երկար տարիներէ ի վեր ամէն պատեհ առիթ կը շահագործէ ի նպաստ վերոյիշեալ հաստատութեան։ Իզիւ Թէ իր բարի օրինակին հետեւողներ ըլլային։

Վ֊եր. Գ. Ասլանեանեան, (Աւետարանիչ). Աւետաբերի 1912, *Թիւ* 15է արտատպեալ, ուր — Վ֊եր. Աւետարանիչը ապէս կը գրէ.

«Պրուսա անցայ, հոն ամենէն առաջ Աբեբելեան Որբանոցը հիւրընկալուեցայ, ուր գտայ 50 որբուհիներ, որոնց 20էն աւելի (ճիշդ 30 հատ) Ատանայէ (և Անտիոքէ) էին։ Վեր. Պաղտասարեան և իր ամենիւ տիկինը գործակցութեամբ և գուրգուրալիր խնամքով այդ հաստատութեան հիմնադիր ու վարիչները ըլլալով, Պրուսայի եկեղեցիին ալ քիչ ծառայութիւն մատուցած չեն։ Հիմա թէև ծերացած՝ սակայն գրեթէ պարապ կենալ չեն գիտեր։ Միայն վազանցինին է հիւրի մը գտնուած առենը, երբ զայն յորդելու, և կամ գործի համար կը նստին խօսելու կամ խորհրդակցելու։ Մեծ ուրախութիւն տուաւ ինձ երբ տեսայ թէ Աստուած ինչպէս վարձատրած է իր այս զաւակները, երբ առանց սերունդը իսկ, որդիները, օրհնած է, ու անոնցմէ մին Կլասկօ աստուածաբանութիւն ուսանելով եկած է Պրուսայի և Բաղքականաց ալ քարոզութիւն ընել։ Տեսայ որ սիրուած է ժողովուրդէն, թէև հրաժարած էր, ժողովուրդը չընդունեց հրաժարականը և ան ստիպուեցաւ շարունակել։ Պատ. Օթթոյի մէջ ունինք իր հօրը արժանաւոր յաջորդը և սիրելի պաշտօնեայ մը Ցիսուսի։ Այս հաս-

տատուլեան մասին արժանաւոր յօդուած մը գրելու տանելը չունիմ հիմա. միայն այսչափը կը խնդրեմ որ ամէն անոնք որ կ'օգնեն անոր, ՇԱՐՈՒՆԱԿԵՆ և ԱՌԱՏՕՐԷՆ տան, դի միակ հաստատութիւնն է Հայաստանի մէջ, որ եւրոպական խմբակ մը չունի կռնակը, և ոչ ալ դրամատիրութիւն մը ՈՉ ԱՒ ՀԱՍՈՒԹԱՒԵՐ ԿԱՂՈՒԱԾՆԵՐ։ Աստուածոյ ապաւինած և գուլէն շարժեալ ակսուած է և միշտ յաղթական ու կանգուն մնացած և շարունակած է։

Դիտեցի թէ ինչպէս անձկութեամբ փոխթոյի կ'սպասուէր և նամակներուն պարունակութեանը կը նայուէր։ Կը խնդրեմ սա երեք բանը ընել հաճին ամէն անոնք, որ Աւետարեր (և Բահնիւմա և Օրացոյց) կը կարդան։

Ա. Նուէր մը խրկել.
Բ. Նուիրատուներ գտնել.
Գ. Հաստատութեան համար աղօթել։

Գ. Ապշահատեան

Վ. Եր. Մ. Ց. Մ Ց Խ Ե Ր Ե Ա Ն Ց (Թալաս). — Ծնած է 1870 Փետր. 27ին Կեսարիոյ մէջ։ Մանկութիւնը սովորական վարժարանաց մէջ անցնելէ ետեւ, 1886ին Ա. Ընթ. ապէ Գօլէճը ընդունուած է. 1 տարի յետոյ ենիճէ Գալէի ուսուցիչ — քարոզիչ է եղած, նորէն Գօլէճ մտնելով, 1888ին Զէյթունի ուսուցիչ է եղած, երրորդ անգամ Գօլէճ վերադառնալէ ետեւ 1892ին ընթ. ատենապետ եղած է, և նոյն տարին Մարաշի Աւետարանական ճեմարանը մտած է. 1895ին ընթ. ատենապետ ըլլալով մինչ 1898 Մարաշի մէջ ուսուցչութիւն, և միևնոյն տաեն 2 տարի ալ տեղւոյն Եպիսկոպոսական եկեղեցիին քարոզչութիւն է ըրած։ Ապա Կեսարիա վերադառնալով, ամուսնանալէ ետեւ, 1899ին Ռումգիւղին մէջ 1 տարի քարոզած և ապա 6 տարի 2 ամիս Էվէրէկի քարոզիչ է եղած, ուր նաև 1903ին ձեռնադրուելով, 1905ին Թալասի եկեղեցիին հրաւէրն ընդունած, և ցարդ նոյն կարեւոր կայանի հովիւն է եղած։ Այժմ այդ կայանի շուրջ գտնուած 30է աւելի մեծ և փոքր եկեղեցեաց գործերն կը վարէ, Միսիոնարաց հետ համերաշխ գործակցութեամբ։



Վ. ԵՐ. Մ. Յ. ՄՆՋԵՐԵԱՆ

ԹԱԼԱՍ

Պաս. Ս. Մ. Թորոսեան. — Բնիկ Եօղղատցի է։ Անձնական ջանքերով յաջողած է ուսման բարձր ընթացքի մը հետեւիլ։ Գոլէճի ամէն կարգերու հետ մրցած և գրականութեան, ճարտասանութեան ու երկրաչափութեան մէջ առաջին մրցանակը շահած է։

Իր տանը չորս տարի տարբեր տեղեր գործած է ուսուցչութեամբ կարեւոր պաշտօններ վարելով. նոյն ատեն եկեղեցիներու մէջ յաճախ քարոզելու պատեհութիւնը ունենալով։ Այսօր անոր աշակերտներէն շատեր կարեւոր պաշտօններ կը վարեն, ոմանք ձեռնադրեալ հովիւ են, ոմանք ուսուցիչ, ոմանք կառավարական պաշտօնեայ, և այլն։

Հինգ տարիէ ի վեր Պանտրմայի եկեղեցիին մէջ կ'աշխատի և ամէն կերպով եկեղեցիին զարգացման կը ջանայ։ Կրնայ քարոզել Հայ. և Թուրքերէն լեզուներով։ Նախասիրած նիւթերն են Պատմութիւն, Բնական գիտութիւններ, Հոգեբանութիւն, Փիլիսոփայութիւն, Աստուածաբանութիւն, Գրականութիւն և Ճարտասանութիւն։

Իր երկերէն «Մէճմուա»ին ամբողջ հատորը յատկացուցած է Պանտրմայի եկեղե-



ՊԱՏ. Ա. Մ. ԹՈՐՈՍԵԱՆ

ցին և երիցատան նորոգութեան։ Անոնց քանի մը երկեր ալ ունի Հայերէն լեզուով։ Բազմաթիւ յօդուածներ ունի Բիւբլիոն, Աւետաբերի, օրաթերթերէ ամանց մէջ, և Թուրքերէն Աւետաբերի մէջ։ Թաւշանճեան մրցանակին մասնակցած և շահողներէն մին եղած է։ Վերջերս սկսած է գրել Աւետաբերի մէջ «Ժիրայր» ծածկանունով։

Վեր. Համբարձում Գէորգեան. — Բնիկ Տիվրիկցի, ծնեալ 1835ին, ընթացաւարտ Տօքթ. Համլինի Պէպէքի ճեմարանէն 1862ին։ Բարոզչի պաշտօն վարած է ի Մարզուան, Վէզիր-Քէօփրիւ, ի Տիվրիկ և Արաբկիր, ուր նաև ամուսնանալէ ետեւ 1866ին Մաշկերտի մէջ ձեռնադրուած է։ Երեք տարի Արաբկիրի հովուութիւնը վարելէ ետեւ 8—10 տարի ալ Մուրատչայ պաշտօնավարելէ յետոյ կը խրկուի Գընճըլար, ուր իր կեանց վերջին մասն կ'անցնէ 22—23 տարի պաշտօնավարելով, ուր և կ'աւանդէ իր հոգին 1912 Մարտ 20ին ի հասակի 77 ամաց։



Վ. ԵՐ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԻՈՐԳԵԱՆ


Վ. Եր. Յակոբ Պիւլպիւլեան. — Ա. յ. տարի, 1912, Կիլիկիոյ եկեղեցիները մի առ մի այցելելու համար ճամբորդութեան վրայ գտնուած միջոցին, պատճառաւ մը Հալէպ կը հանդիպի, հոն նոյն պահուն տիրող քոլերայի համաճարակին զոհ կ'երթայ Մայիս 25ին ի հասակի 52 տարեկ. 1884ին Կ. Թ. Գոլէճէ ընթացաւարտ ըլլալով Անատոլիի կողմերը քանի մը տարի ուսուցչութիւն ընելէ ետեւ, 1883ին Ա. յ. Երիտասարդաց Բրիտանական ընկերակցութեան նախագահ կ'ընտրուի. մինչև 1895 այդ պաշտօնը կը շարունակէ, երբ Ա. յ. Երիտասարդաց Ընկերակցութիւնը ցիր ու ցան կ'ըլլայ։ Ի բնէ՝ այս փափուկ և տկարակազմ անձը նոյն տագնապալից ժամանակը առիւծի նման քաջ և անվեհեր կ'ըլլայ և անվախ ղօրապետի նման տուներն այցելելով և Լաւտ. և Աւետ. եկեղեցիները քարոզներ տալով կը սրտապնդէ ժողովուրդը։ Նոյն իսկ երկչոտութեամբ կրօնափոխութեան պատրաստ գտնուողներն կը հաստատէ իրենց հաւատքին մէջ և մարտիրոսացման կը պատրաստէ։ Պիւլպիւլեան 1899ին կեսարիա կը կոչուի ի պաշտօն. հոն Թալաթի հիւանդանո-



ՎԵՐ. ՅԱԿՈԲ Գ. ՊԻՒԼՊԻՒԼԵԱՆ

ցին մէջ կ'ատուգուի որ ֆանէր կոչուած ախտը ունի, ուստի կ'ատիպուի Լոնտրա երթալ գործողութեան ենթարկուելու համար։ Կը վերադառնայ ապաքինած և պահ մը կեսարիա պաշտօնավարելէ ետեւ Ա. Յովհաննէս կը վերադառնայ։ Ատանայի ջարդէն մազապուր կ'ազատի, ուր դացած էր աղջկանց վարժարանին ամավերջի ճառն խօսելու համար։ Անոր մահը մեծ կորուստ մ'է Կիլիկիոյ Աւետարանական Եկեղեցւոյ համար։

Պատ. Արիսթիտես Մուամճիատես. — Ծնեալ ի Ռոտոսթոյ 1845 Յուլիս 10ին վախճանեալ ի Պրուսա 1912 Յունիս 12ին։ Տասներկու տարեկան եղած ատեն հանգուցեալը իր հօր արհեստին, մոմագործութեան էր հետեւած։ Երիտասարդութեանը պահ մը կառավարութեան արկղակալի պաշտօն վարելէ ետեւ, առեւտրական ասպարէզ մտաւ։ Մանանալէ ետեւ Պրուսա եկաւ և Ս. Բիւզանդեանի նախապատրաստական դպրոցին մէջ 3 տարի ուսում առնելէ ետեւ, Մարսուանի Աստուածաբանական վարժարանը մտաւ. 4 տարիէն ընթացաւարտ ըլլալով 24



ՊԱՏ· ՍՐԲՍԹԻՏԻՍ ՄՈՒՄՃԻԱՏԻՍ

տարի քարոզչական պաշտօն վարեց Հաւատարմութեամբ ի Պրուսա, Պայընտըր և Ռոտոսթոյ։ Կրնար քարոզել Յունարէն, Թրքերէն և Հայերէն։ Անգամ էր Աբեւեանց Որբանոցի վարչ. ժողովի և իր հեզ, խոնարհ և խաղաղարար բնութիւնով սիրելի և օգտակար էր եղած բազմաց։ Վերջերս քաշուած էր քարոզչական պաշտօնէ, սակայն միևնոյն առեն Պրուսա հաստատուած ըլլալով, ամէն կիրակի ձրիաբար կը քարոզէր Գայապաշիի մատուռին մէջ։

Ծանօ. — Կը խնդրուի կենսագրականները մինչեւ Յունիս 30 մեզի հասցնել, համառօտ և որոշ գրուած, լուսանկարներն ալ ի միասին։ Խմբագրութիւն «Օրացոյց»ի



Ի ՆՊԱՍՏ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻՆ

Ուր կը պատսպարուին ու կը դաստիարակուին Հայրենեաց զանազան կողմերէն հաւաքուած ՀԱՅ ՈՐԲՈՒՀԻՆԵՐ, *որոց 30ը կիլիկիոյ վերջին ջարդերէն են ազատուածք։*

ԳԻՆ 3½ ԴՀԿ.